«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ
ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆՎԵԼՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԱՐՄԵՆԻ

# ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1912-1922 ԹԹ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Է.00.01 «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
մասնագիտությամբ պատմական գիտությունների
թեկնածուի
գիտական աստիճանի համար

Գիտական
ղեկավար՝
պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Աշոտ Մելքոնյան

Երևան-2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........................................................................................................4

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

1.1. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի հիմնադրումը, դերն ու նշանակությունը արևմտահայության կյանքում (պատմական ակնարկ)........................................................................................................13

1.2. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի գործունեությունը Հայկական հարցի վերաբացման շրջանում 1912-1913 թթ. ..............................26

1.3. Զավեն եպիսկոպոս Տեր-Եղիայանը և իր ընտրության հանգամանքները ........................................................................................37

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

2.1. Կոստանդնուպոլսի հայոց նորընտիր պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի շրջայցն Օսմանյան կայսրության հայաբնակ գավառներում..................................44

2.2. Օսմանյան խորհրդարանի 1914 թ. ընտրությունները և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանը ........................................................................................52

2.3. Հայկական բարենորոգումների ծրագիրը Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի օրոք ........................................................................60

2.4. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանը Հայոց ցեղասպանության տարիներին ........................................................................................................67

2.5. Հայոց ազգային սահմանադրության և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության

վերացման երիտթուրքական քաղաքականությունը ................82
2.6. Զավեն Տեր-Եղիայանի գործունեությունն աքսորի տարիներին (1916-1918)..................................................................................................................91

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1918-1922)
3.1. Հայոց ազգային սահմանադրության վերահաստատումը և Զավեն պատրիարքի վերադարձը Կոստանդնուպոլիս .........................................................................100
3.2. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի որբախնամ գործունեությունը 1919-1922 թվականներին ..........................................................................................106
3.3. Ներհամայնքային հակասությունները և Զավեն պատրիարքի հեռացումը Կոստանդնուպոլսից ..........................................................................................112
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..........................................................................................119
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ...........................122

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1912-1922 թթ. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի գործունեության ուսումնասիրությունը նշանակալի է թե՛ գիտական և թե՛ քաղաքական առումներով: Հայագիտական շրջանակներում այս հարցը լայն առումով դուրս է մնացել ուսումնասիրողների գիտական հետաքրքրությունների ծիրից, մինչդեռ ժամանակակից Թուրքիայի պատմաբանները, հակագիտական և կողմնակալ դրույթներով հանդերձ, մի շարք ուսումնասիրություններ են կատարել տվյալ ասպարեզում: Անկասկած, թեմայի ուսումնասիրությունն ունի նաև քաղաքական հնչեղություն՝ նկատի առնելով Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման շուրջ եղած զարգացումները:

1915-1923 թթ. Օսմանյան կայսրությունում երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» (İttihat ve Terakki) կուսակցության կողմից նախապես ծրագրված և իրագործված Հայոց ցեղասպանության հետևանքով հայ ժողովուրդը ոչ միայն զրկվեց իր պատմական հայրենիքի զգալի հատվածից, այլև կորցրեց նյութական և հոգևոր-մշակութային հարուստ ժառանգության մեծ մասը:

Օսմանյան կայսրությունում բնակվող ոչ մուսուլման ժողովուրդների, այդ թվում՝ հայերի հանդեպ դարեր շարունակ կիրառվող ճնշողական և հալածական քաղաքականությունն իր հանգուցալուծումն ստացավ Առաջին աշխարհամարտի տարիներին: Ահավասիկ, ներկա

ուսումնասիրությունը թույլ է տալիս պատկերացում կազմելու և միևնույն ժամանակ արժևորելու նաև Հայոց ցեղասպանության տարիներին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի և ժամանակի պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի (1913-1916, 1918-1923) ծավալած գործունեությունը:

Ինչպես հայտնի է, 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո կայսրության ոչ մուսուլման ժողովուրդներին խոստացված բարեփոխումները չիրագործվեցին: Կայսրությունը միանձնյա ղեկավարող երիտթուրքերը փաստացի շարունակեցին աբդուլհամիդյան բռնապետական վարչակարգի որդեգրած քաղաքականությունը՝ ծանր կացության մեջ թողնելով ոչ մուսուլման ժողովուրդներին: Չնայած երիտթուրքական կառավարության զգալի ճնշումներին և համայնքի ներսում նկատվող հակասություններին՝ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանն իր ժամանակի առաջադեմ և հայրենանվեր զավակներից մեկի՝ Զավեն պատրիարքի առաջնորդությամբ կարողացավ իր կարևոր դերակատարությունն ունենալ արևմտահայությանը սպառնացող վտանգը կանխելու կամ մեղմելու ուղղությամբ: Սակայն օսմանյան իշխանությունների որոշմամբ 1916 թ. օգոստոսի 10-ին «Իրադարձությունների օրացույց» (Takvim-i Vekayi) պաշտոնաթերթում հրապարակված կանոնագրի համաձայն չեղարկվեց 1863 թ. Հայոց ազգային սահմանադրությունը, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանը լուծարվեց և Զավեն պատրիարքն աքսորվեց Բաղդադ, այնուհետև՝ Մոսուլ:

1918 թ. սեպտեմբերի կեսերին Բալկանյան ռազմաճակատում Անտանտի երկրների բանակներն ունեցած վճռորոշ հաջողությունները կարևոր

հաղթաթուղթ հանդիսացան շարունակելու առաջխաղացումը դեպի Կոստանդնուպոլիս: Հոկտեմբերի 30-ին օսմանյան նորակազմ կառավարության խնդրանքով Անտանտի երկրների և Օսմանյան կայսրության միջև կնքվեց զինադադար, ինչը պատերազմում հաղթանակած երկրների նավատորմին հնարավորություն ընձեռեց մտնելու Բոսֆորի և Դարդանելի նեղուցներ: Նոյեմբերի 6-ին Անտանտի ուժերը զինաթափեցին օսմանյան բանակի նեղուցները պաշտպանող ստորաբաժանումները և հաջորդ օրն իսկ խարիսխ նետեցին մայրաքաղաքում: Ստեղծված իրադրության պայմաններում թուրքական իշխանությունները Անտանտի երկրների դրդմամբ ստիպված եղան վերահաստատել 1863 թ. Հայոց ազգային սահմանադրությունը և համաներման արժանացնելով Զավեն պատրիարքին, Մեծ Բրիտանիայի պատերազմական նախարարության հովանավորությամբ նրան վերադարձնել իր պատրիարքական լիազորությունների կատարմանը:

Գիտական կարևորություն ունեցող վերոհիշյալ հարցերի ուսումնասիրման համար ատենախոսությունը բաժանվել է երեք գլուխների և տասներկու ենթագլուխների:

## ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը պետք է դիտարկել ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական ասպարեզներում: Թեմայի վերաբերյալ կատարված հետազոտության արդյունքները նշանակալի ձեռքբերում են արդի պատմագիտության մեջ, հատկապես երբ հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ գիտական շրջանակներում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի գործունեությանը եղել են մասնակի անդրադարձներ: Թերևս դրա հիմնական պատճառը փաստական նյութի սակավությունն է, ինչը մենք փորձել ենք ամբողջացնել օտարալեզու (հիմնականում՝ թուրքերեն) արխիվային փաստաթղթերի և գրականության միջոցով: Թեմայի ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է նաև վերջին տարիներին Ստամբուլի հայոց պատրիարքարանի և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրների շուրջ եղած զարգացումների համատեքստում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության գլխավոր նպատակներն են.

- հենվելով սկզբնաղբյուրների, արխիվային նյութերի և պատմագիտական մի շարք աշխատությունների վրա՝ համակողմանի լուսաբանել և ուսումնասիրել Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի գործունեությունը 1913-1922 թթ.,
- գնահատել տվյալ ժամանակաշրջանում արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի դերակատարությամբ պայմանավորված հանգուցային իրադարձությունները:

Կարևորվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- քննության առնել Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի կատարած աշխատանքներն արևմտահայության իրավունքների պաշտպանության տեսանկյունից՝ որպես Օսմանյան կայսրության և արևմտահայության

միջև հայկական համայնքի միակ պաշտոնական ներկայացուցիչ,
- ցույց տալ, որ Դիարբեքիրի հայոց թեմի առաջնորդ Զավեն Տեր-Եղիայանի ընտրությունը պատրիարքական պաշտոնում ունեցել է կարևոր դերակատարություն ներհամայնքային հարաբերությունների ամրապնդման առումով,
- բացահայտել Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի ունեցած մասնակցությունն Օսմանյան կայսրության հայաբնակ նահանգներում բարենորոգումներ իրականացնելու հարցում,
- լուսաբանել 1914 թ. օսմանյան խորհրդարանի ընտրություններին հայազգի պատգամավորների ներկայացվածության շուրջ պատրիարքարանի իրականացրած միջոցառումները,
- երիտթուրքական կառավարության որոշմամբ Հայոց ազգային սահմանադրության չեղարկումը և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի լուծարումը դիտարկել որպես ցեղասպանական գործողությունների շարունակություն,
- ներկայացնել Բաղդադում և Մոսուլում աքսորի ենթարկված Զավեն պատրիարքի ձեռնարկած միջոցառումները տեղի հայ գաղթականների փրկության և նրանց խնամքի համար նպաստավոր պայմաններ ստեղծելու ուղղությամբ,
- պարզաբանել Հայոց ազգային սահմանադրության վերահաստատման դրդապատճառները,
- լուսաբանել հետպատերազմյան տարիներին Զավեն պատրիարքի գործունեությունը հայ

որբերին ու կանանց հայտնաբերելու և նրանց փրկելու ուղղությամբ,

- քննության առնել Զավեն Տեր-Եղիայանի պատրիարքական լիազորությունների դադարեցման հանգամանքները:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Հայ իրականության մեջ փորձ է արվում հայալեզու և թուրքալեզու արխիվային փաստաթղթերի, պարբերական մամուլի ու գիտական աշխատությունների հիման վրա քննության առնել Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի գործունեությունը 1913-1922 թթ.: Սույն հետազոտության նպատակն է գիտական շրջանառության մեջ նորահայտ փաստերի ներդրմամբ Հայոց ցեղասպանության և պոլսահայ համայնքի պատմության վերաբերյալ ուսումնասիրությունների շարքը համալրել ևս մեկ հիմնարար հետազոտությամբ: Ատենախոսության թեման և հիմնական հարցադրումները, որոնց մեծ մասը շարադրված են եզրակացությունների տեսքով, պարունակում են գիտական նորույթ ոչ միայն հայրենական պատմագիտության, այլև օտարալեզու մասնագիտական գրականության մեջ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նյութը ներառում է 1913-1922 թթ: Տվյալ ժամանակաշրջանի ընտրությունը պայմանավորված է գլխավորապես Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի ծավալած գործունեության ուսումնասիրությունն ամբողջական դարձնելու և փոխկապակցված շղթայի մեջ դիտարկելու մղումով:

Այդ նպատակով քննության ենք առել Առաջին աշխարհամարտի նախօրյակին և հետպատերազմյան տարիներին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի առնչությամբ արևմտահայության կյանքում տեղի ունեցած ուշագրավ իրադարձությունները: Ուսումնասիրության ժամանակագրական սահմանները միաժամանակ համապատասխանացվել են Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի պաշտոնավարության շրջանին (1913-1916, 1918-1922):

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Ուսումնասիրության մեջ կիրառվել են պատմահամադրական, պատմահամեմատական, պատմաքննական մեթոդները՝ հիմնվելով հայերեն և օտարալեզու արխիվային փաստաթղթերի, սկզբնաղբյուրների, պատմագիտական ուսումնասիրությունների և պարբերական մամուլի վրա:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներկա հետազոտությունը կարող է օգտակար լինել Հայ առաքելական եկեղեցու նվիրապետական աթոռների,հայ-թուրքական հարաբերությունների և Օսմանյան կայսրության էթնիկ հանրույթների պատմությամբ հետաքրքրվող ուսումնասիրողների համար: Ատենախոսությունն ամբողջությամբ կամ նրա առանձին դրույթներ կարող են օգտակար նյութ հանդիսանալ ՀՀ բուհերի մասնագիտական ֆակուլտետներում, մասնավորապես՝ ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնում «Օսմանյան կայսրության էթնոքաղաքականությունը և նրա հետևանքները», «Էթնիկական հիմնախնդիրները

Թուրքիայի հանրապետությունում», «Թուրքական ժխտողականության հիմնահարցեր», «Հայոց ցեղասպանությունը /պատմություն և տեսություն/», «Օսմանյան կայսրության և Թուրքիայի հայ գաղթօջախներ», «Ազգային փոքրամասնությունները Օսմանյան կայսրությունում և Թուրքիայի հանրապետությունում» առարկաների դասավանդման համար: Ատենախոսությունը կարող է ծառայել հետագա ուսումնասիրությունների, աշխատությունների, դասագրքերի, ուսումնական ու մեթոդական ձեռնարկների պատրաստման ժամանակ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը պատրաստվել է հայերեն, թուրքերեն (նաև՝ օսմաներեն), ֆրանսերեն, ռուսերեն, անգլերեն սկզբնաղբյուրների, արխիվային փաստաթղթերի, աշխատությունների և պարբերական մամուլի հրապարակումների հիման վրա: Աշխատության համար կարևոր նշանակություն են ունեցել ինչպես հայկական և օսմանյան արխիվային փաստաթղթերն ու զեկուցագրերը, այնպես էլ սկզբնաղբյուրային արժեք ունեցող տարաբնույթ վավերագրերը, առանձին ուսումնասիրություններ և աշխատություններ:

Ատենախոսության մեջ օգտագործվել են Հայաստանի ազգային արխիվի (այսուհետև՝ ՀԱԱ) և Թուրքիայի Օսմանյան վարչապետական արխիվի (Başbakanlık Osmanlı Arşivi (այսուհետև՝ BOA)) ֆոնդերում պահվող համապատասխան փաստաթղթերն ու նյութերը, որոնց գերակշիռ մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

Սկզբնաղբյուրների շարքում առաջնային կարևորություն ունեն Օսմանյան վարչապետական արխիվի նյութերը, որոնք ձեռք ենք բերել

Ստամբուլ կատարած մեր այցելությունների ընթացքում[1]: Դրանք հարուստ նյութ են պարունակում երիտթուրքական իշխանությունների և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի հարաբերությունների, Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքական պատմագիտության կողմից ներկայացվող դրդապատճառների ուսումնասիրման և այլնի տեսանկյունից:

Ատենախոսության թեմայի հիմնական հարցադրումների վերաբերյալ մեծ կարևորություն ունեն նաև Հայաստանի ազգային արխիվի ֆոնդերում պահվող՝ ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ որոշակի քանակութամբ արխիվային նյութերը[2]:

Ուշադրություն ենք դարձրել նաև Վաղարշակ սարկավագ Սերովբյանի, Երվանդ Փամպուքյանի, Սանդրո Բեհբուդյանի, Ջեյմս Բրայսի, Գյունայ Օզդողանի (Օհաննես Քլչդաղի հետ համատեղ) կողմից հրատարակված փաստաթղթերի և կոնդակների ժողովածուներին[3]:

Ուսումնասիրության տեսանկյունից առանձնանում է Կոստանդնուպոլսի հայոց 79-րդ

---

[1] Տե՛ս Başbakanlık Osmanlı Arşivi (BOA), Sadaret – Divan-ı Hümayun Gayr-ı Müslim Cemaat Defterleri, nr. 11, s. 16-25. Bâb-ı Âlî Evrak Odası, nr. 4204/315299 lef 2; nr. 4233/317421; nr. 4270/320227; nr. 4510/338204 lef 3; nr. 4549/341114 lef 2. Emniyet-i Umumiye Müdüriyeti İkinci Şube, nr. 31/61; nr. 39/35 lef 17; nr. 54/67 lef 16. Dâhiliye Nezâreti İdarî Kısım, nr. 113/53 lef 1, 3, 6, 10, 11. Dâhiliye Nezâreti Şifre Kalemi, nr. 63/136; nr. 84/196; nr. 95/212; nr. 518/46; nr. 522/59; nr. 530/18; nr. 548/29; nr. 578/9. Dâhiliye Nezâreti Umûr-ı Mahalliye-i Vilayât Müdüriyeti, nr. 61/13 (1332.M.30-). Adliye ve Mezahib İrâdeleri, nr. 113/1331. N/02. İrâde – Mabeyn-i Hümâyûn, nr. 13/1331.Z/026. İrâde – Meclis-i Mahsus-u Vükelâ, nr. 170/1331.L/31. Meclis-i Mazbataları Vükelâ, nr. 183/8; nr. 203/14; nr. 213/89; nr. 231/286.

[2] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 57 (Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան), ց. 1, գ. 102; ց. 5, գ. 21, 25, 26, 28, 52, 53, 61, 62, 76, 86, 90; ֆ. 222 (Թիֆլիսի հայոց ազգային խորհուրդ), ց. 1, գ. 1:

[3] Տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Դ, կազմեց՝ Բեհբուդյան Ս., Տ. Տ. Սահակ Բ Խապայեան կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ 1891-1940 թթ., Երևան, 1997: Անդրանիկ կոնդակներ սահմանադրական շրջանի պատրիարքներու, հրատ. Պատրաստեց Սերովբեան սրկ. Վ., Ստանպուլ, 2013: Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան, խմբագիր՝ Փամպուքեան Ե., ԺԱ. հատոր, Պէյրութ, 2015: Özdoğan G., Kılıçdağı O., Lozan Antlaşması Azınlık Hakları Maddeleri (Madde 37’den – 44’e Türkiye Ermenilerini Duymak: Sorunlar, Talepler Ve Çözüm Önerileri, İstanbul, 2012. Bryce J., The Treatment Of Armenians In The Ottoman Empire 1915-1916, London, 1916.

պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայան Բաղդադցու հուշագրությունը[4]: Այն գրվել է հետպատերազմյան տարիներին, Բաղդադում, Կահիրեի «Մտավորականների սպասարկության գրասենյակ»-ի հորդորով: «Յաճախ շատեր յորդորեցին զիս գիրի առնելու իմ յուշերս,- գրում է Զավեն պատրիարքը նախաբանի մեջ,- նկատի առնելով որ դժբախտ պարագաներու այնպիսի շրջանի մը՝ որ Թրքահայոց ամէնէն փոթորկալից ժամանակամիջոցը կրնայ համարուիլ»[5]: Հուշագրության առանձնահատկությունն այն է, որ Զավեն պատրիարքն իր պաշտոնավարության շրջանում տեղի ունեցած հասարակական-քաղաքական գործընթացները ներկայացնում է հաճախ բացառապես վավերագրական նյութի վրա հիմնված:

Ուսումնասիրության շրջանակներում առաջին անգամ փորձ է արվել վերականգնելու Զավեն Տեր-Եղիայանի լիակատար կենսագրությունը, որը շարադրված է մի շարք կենսագրական ժողովածուների, աշխատությունների և պարբերական մամուլում տեղ գտած հրապարակումների հիման վրա[6]:

Հայրենական պատմագիտության մեջ Զավեն պատրիարքի գործունեության վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում ականավոր գիտնականներ Ջոն Կիրակոսյանը, Հրաչյա Աճառյանը, Գրիգորիս եպիսկոպոս Պալաքյանը,

---

[4] Տե՛ս Զաւէն Արքեպս., Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947:

[5] Նույն տեղում:

[6] Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ.: Օրմանեան արք. Մ., Ազգապատում, Գ. Հատոր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001: Կերտող Ս., Հայ առաքելական եկեղեցին առաջին աշխարհամարտի տարիներին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2003: Անդրանիկ կոնդակներ սահմանադրական..., նշվ. աշխ.: Ազգ. Ժողովին հանդիսաւոր նիստը, Զաւէն Եպս.՝ Պատրիարք ընտրուած 82էն 64 քուէով, «Հեռաձայն», Կ. Պոլիս, 1913, 31 Օգոստոս: Güllü R. E., Ermeni Sorunu Ve İstanbul Ermeni Patrikhanesi (1878-1923), Ankara, 2015; Pamukciyan K., Biyografileriyle Ermeniler, C. IV, İstanbul, 2003. Tuğlacı P., Tarih Boyunca Batı Ermenileri, Cilt: III (1891-1922), İstanbul, 2009.

Արսեն Ավագյանը (Կայծ Մինասյանի հետ համատեղ) և ուրիշներ[7]:

Լայնորեն օգտագործված են նաև թուրք պատմաբանների՝ Ալի Արսլանի, Իբրահիմ Աթնուրի, Էրդալ Այդողանի, Յուսուֆ Հիքմեթ Բայուրի, Գյուլնիհալ Բոզքուրթի, Աքըն Չելիքի, Հիքմեթ Օզդեմիրի, Զեքի Սարըհանի, Զեքերիյա Թյուրքմենի, Ճերեֆ Ունալի և այլոց ուսումնասիրությունները[8]: Դրանք ամբողջությամբ կամ մասամբ հիմնված են թուրքական պաշտոնական պատմագրության մոտեցումների վրա: Այդուամենայնիվ, հարկ ենք համարում առանձնացնել Ստամբուլի պետական համալսարանի դասախոս, պատմագիտության դոկտոր Ռամազան Էրհան Գյուլլուի «Հայկական հարցը և Ստամբուլի հայոց պատրիարքարանը (1878-1923)» մենագրությունը, որը, Թուրքիայի պատմագիտական ընկերության հրատարակություններից մեկը լինելով հանդերձ, որոշակի անկողմնակալ դրույթներ է պարունակում սույն թեմայի ուսումնասիրության առնչությամբ[9]:

Սույն աշխատության համար արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաև հայալեզու և

---

[7] Տե՛ս Աճառեան Հ., Տաճկահայոց պատմութիւնը, Կ. Պոլիս, 1915: Պալաքեան եպիսկ. Գ., Հայ գողգոթան. Դրուագներ հայ մարտիրոսագրութենէն. Պեռլինէն դէպի Տէր Զօր, Բ. Հատոր, Փարիզ, 1959: Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967: Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002: Avagyan A., Minassian G. F., Ermeniler Ve İttihat Ve Terakki- İşbirliğinden çatışmaya, İstanbul, 2005.

[8] Տե՛ս Arslan A., Ermeni Papalığı - Eçmiyazin Kilisesi'nde Stratejik Savaşlar, İstanbul, 2010. Atnur İ., Türkiye'de Ermeni Kadınları Ve Çocukları Meselesi (1915-1923), Ankara, 2005. Aydoğan E., İttihat Ve Terakkî'nin Doğu Politikası (1908-1918), Ankara, 1967. Bayur Y. H., Türk İnkılâbı Tarihi, Cilt: II, Kısım III, Ankara, 1991. Bozkurt G., Alman-İngiliz Belgerinin Ve Siyasi Gelişmelerin Işığı Altında Gayrımüslim Osmanlı Vatandaşlarının Hukuki Durumu (1839-1914), Ankara, 1996. Çelik A., Osmanlı'nın Ermeni'yle İmtihanı – Mütakere Dönemi İstanbul Hükümetleri Ve Ermeniler, İstanbul, 2011. Özdemir H., Cemal Paşa Ve Ermeni Göçmenler- 4. Ordu'nun İnsani Yardımları, İstanbul, 2009. Sarıhan Z., Kurtuluş Savaşı Günlüğü 1 (Mondros'tan Erzurum Kongresi'ne Kadar), Ankara, 1982. Türkmen Z., İşgal Yıllarında İstanbul'daki Uygulamalar: Mütareke Döneminde Ermeniler Tarafından Türk Çocuklarının Kaçırılması Ve Hıristiyanlaştırılması, KÖK Araştırmalar, Ankara, 2000, Cilt: II, Sayı: 2. Ünal Ş., Uluslararası Hukuk Açısından Ermeni Sorunu, Ankara, 2011.

[9] Տե՛ս Güllü R. E., Ermeni Sorunu Ve İstanbul Ermeni Patrikhanesi (1878-1923), Ankara, 2015.

թուրքալեզու պարբերական մամուլում տեղ գտած հրապարակումները՝ Հայաստանի ազգային գրադարանում պահվող պարբերական մամուլի ֆոնդը, Ստամբուլի հայոց պատրիարքարանի և Ստամբուլի «Բեյազըթ» պետական գրադարանի արխիվային պահոցներում գտնվող բացառիկ հավաքածուները: Մասնավորապես, ուսումնասիրության մեջ ներառվել են Կ.Պոլսում լույս տեսնող հայալեզու հետևյալ պարբերականներից «Ազդարարը», «Առաջամարտը», «Բիւզանդիոնը», «Ժամանակը», «Հեռաձայնը»և այլն:

Թուրքալեզու մամուլի հրապարակումները քաղել ենք հետևյալ լրագրերից, որոնք նույնպես լույս են տեսել Կ.Պոլսում՝ “Akşam”, “İkdam”, “Sabah”, “Takvim-i Vekayi”, “Tanin”, “Vakit” (տառադարձված են թուրքերենի):

Օգտվել ենք նաև համացանցում տեղ գտած մի շարք հոդվածներից, որոնք կարևոր ներդրում են ունեցել որոշակի թեմաների խորը ուսումնասիրության առումով:

## ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

## Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի գործունեությունն Առաջին աշխարհամարտի նախօրյակին

### 1.1. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի հիմնադրումը, դերն ու նշանակությունն արևմտահայության կյանքում (պատմական ակնարկ)

Հայերը Կոստանդնուպոլսում (1923 թվականից՝ Ստամբուլ) հաստատվել են դեռևս Բյուզանդական կայսրության ժամանակներից: Այդ մասին թեև կցկտուր, սակայն արժեքավոր տեղեկություններ են հաղորդում ժամանակի գրավոր վկայությունները: Նշանավոր հայագետ, արևելագետ Հակոբ Սիրունին, որն անցյալ դարի կեսերին ձեռնամուխ եղավ «Պոլիս և իր դերը» քառահատոր կոթողային աշխատության ստեղծմանը, կարևորելով Կ. Պոլսի հայ համայնքի պատմության համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը, գրում է. «Ծրջան մըն է Հայոց Պատմութեան մէջ՝ որուն մասին մեզ հասած աղբիւրները ժլատ եւ միեւնոյն ատեն շփոթ են. հայ աղբիւրներ գրեթէ չունինք՝ բացի ինչ ինչ ձեռագրերու յիշատակարաններէն»[10]:

387 թվականին, երբ Հայաստանը բաժանվեց Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև, Փոքր Ասիա գաղթեցին որոշակի թվով հայեր: Նրանց կոչում էին «Արմենիկոսներ» կամ պարզապես «Հայ հոռոմներ»[11]: Դժվար է պնդել, որ Բյուզանդական կայսրության օրոք հայերն ունեցել են առանձին միասնական գաղութ, սակայն այն փաստը, որ Բյուզանդիայում հայ կայսրեր և

[10] Սիրունի Յ., Պոլիս եւ իր դերը, հ. 1, Պէյրութ, 1965, էջ 79:
[11] Տե՛ս Խաչկոնց Դ., Կ. Պոլսոյ հայ գաղութին ծագումը, «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան ազգային հիւանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1902, էջ 11:

կայսրուհիներ են գահակալել, ինքնին վկայում է կայսրության կյանքում հայերի ունեցած ազդեցիկ դերի մասին[12]: Հայերն աչքի են ընկել իրենց մտավոր կարողություններով, մասնավորապես տիրապետել են ձեռագրերի ընդօրինակման և թարգմանական արվեստին[13]:

Հայտնի է, որ Բյուզանդիան ևս անմասն չմնաց այլադավան քրիստոնյաներին, այդ թվում՝ հայերին, հալածելու քաղաքականությունից: «Երբ Պալէոլոգները բիւզանդեան մայրաքաղաքը 1261ին վերստին առին Լատիններուն ձեռքէն,- գրում է Հրանտ Ասատուրը,- որոնք գրաւած էին զայն 1204ին, ա՛լ չշարունակեցին կրօնական հալածանքը Հայոց դէմ, եւ ԺԴ. դարուն սկիզբները Կ. Պոլսոյ մէջ կար արդէն հայ գաղթականութիւն մը, եպիսկոպոս մը ունենալու չափ կարեւոր»[14]: Ղևոնդ Ալիշանը նկատում է, որ դեռևս 14-րդ դարի սկզբին (1307 թ.) Կ. Պոլսում եպիսկոպոս ունենալու փաստը ցույց է տալիս այդ քաղաքում հայ բնակչության մեծաքանակության մասին[15]: Նշվում է նաև, որ 1360 թ. Ղալաթիայում[16] գոյություն ուներ Ս. Սարգիս հայկական եկեղեցին[17], որը 1430-ական թթ. անվանափոխվել է Ս. Գրիգոր Լուսավորչի[18]:

---

[12] Տե՛ս Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, 2012, էջ 15:
[13] Տե՛ս Ակինեան Ն., Յովսէփ Կոստանդնուպոլսեցի. թարգմանիչ Յայսմաւուրքի (991), «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1957, թիւ 1-2, էջ 1-12: Հմմտ.՝ Սիրունի Յ., նշվ. աշխ., էջ 81-82:
[14] Ասատուր Հ., Կ. Պոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի», Կ. Պոլիս, 1901, էջ 77:
[15] Տե՛ս Ալիշան Ղ., Հայ-Վենետ կամ յարընչութիւնք Հայոց եւ Վենետաց ի ԺԳ-Դ եւ ԺԵ-Զ դարս, Վենետիկ, 1896, էջ 183:
[16] Ղալաթիայում կամ Գալաթա թաղում (1303 թ. բյուզանդական Միքայել Թ Պալեոլոգ կայսրն այն տվեց ջենովացիներին) շուրջ երկու դար ապրել են նաև հայերը, որոնք ունեցել են իրենց ներհամայնքային ակտիվ կյանքը և առևտրական ամուր հարաբերություններ են հաստատել ջենովացիների հետ:
[17] Տե՛ս Տաշեան Յ., Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 728:
[18] Տե՛ս Ստեփանյան Հ., նշվ. աշխ., էջ 16:

Պատմագիտական գրականության մեջ նշվում են հայտնի մի շարք հայ եպիսկոպոսների անուններ (Յուսիկ[19], Զաքարիա[20], Հովհաննես[21] և ուրիշներ), որոնք գործունեություն են ծավալել պատրիարքության ստեղծումից առաջ[22]: Բաբկեն եպիսկոպոս Գյուլեսերյանն այս կապակցությամբ գրում է. «Կ. Պոլսոյ առումէն (1453) շատ առաջ Մայրաքաղաքին Հայերը ունէին եկեղեցական վարչական կազմակերպութիւն մը, ըսենք Առաջնորդութիւն մը, որուն գլուխը կը գտնուէր, 1438ին, Տէր Յովակիմ Արքեպիսկոպոս: Ասիկա ցոյց կու տայ նաեւ թէ Կ. Պոլիս հայ բնակչութիւն մը ունէր արդէն, և այս հայ բնակչութիւնն ալ ունէր իր կազմակերպեալ Առաջնորդութիւնը, որուն սկիզբը և ծագումը թէեւ անծանօթ է մեզ, բայց անհաւանական չէ դնել Խաչիկ Կաթողիկոսէն (973-992) առաջ, որ կազմակերպեց Արեւմուտքի հայ գաղութները՝ յատկապէս ձեռնադրեալ եպիսկոպոսներ ղրկելով Բիւզանդական կայսրութեան սահմաններուն մէջ հաստատուած Հայոց վրայ: Թէեւ, Կ. Պոլիս չի յիշուիր Խաչիկի կազմակերպութեանց մէջ և ասիկա թերեւս ա՛յն պատճառով որ Կ. Պոլիս արդէն ունէր իր կազմակերպեալ Առաջնորդութիւնը Խաչիկ Կաթողիկոսի կարգադրութիւնէն առաջ»[23]: Ահավասիկ, ինչպես նկատում է Հ. Սիրունին. «Ոչ մէկ տարակոյս չկայ որ հայ բջիջ մը արդէն կար այնտեղ ու հոգեւոր կեանք անոր ծոցին մէջ, երբ դեռ Հայերը շփման մէջ մտած չէին Թուրքին հետ, եւ երբ Ֆաթիհ դեռ բեմ մտած

---

[19] Տե՛ս Պալճեան Աղ., Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս, Վիեննա, 1878, էջ 281:
[20] Տե՛ս Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 183:
[21] Տե՛ս Ասատուր Հ., նշվ. աշխ., էջ 2:
[22] Տե՛ս Սիրունի Յ., նշվ. աշխ., Հայ եպիսկոպոսները «Բիւզանդիոն»ի մէջ, էջ 103-118: Հմմտ.՝ Խառատյան Ա., Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XV դարեր), Երևան, 2007, էջ 49-50:
[23] Բաբգէն եպ., Կ. Պոլսոյ հայ գաղութին ծագումը եւ հնագոյն եկեղեցիներ, «Ընդարձակ տարեցոյց Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի», Կ. Պոլիս, 1926, էջ 290:

չէր»[24]: Ցավոք, հստակ չէ միայն այն հարցը, թե որտե՞ղ է արդյոք եղել առաջնորդանիստ աթոռը՝ Կ. Պոլսո՞ւմ, թե՞ Ղալաթիայի ջենովական թաղամասում:

Երբ 1453 թ. մայիսի 29-ին օսմանյան 7-րդ սուլթան Մեհմեդ Երկրորդ Ֆաթիհը հիսունևերեքօրյա պաշարումից հետո գրավեց Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը, օսմանյան բանակը կոտորեց սովից և զանազան հիվանդություններից ուժասպառ եղած բնակչության մի մասին, իսկ որոշ մասն էլ՝ գերեվարվեց[25]: Երեք օր ու գիշեր շարունակ քաղաքը ենթարկվեց ավերի ու թալանի[26]: Կ. Պոլիսը դարձնելով Օսմանյան կայսրության մայրաքաղաք՝ սուլթան Մեհմեդ Երկրորդն անմիջապես միջոցներ ձեռնարկեց քաղաքը վերաշինելու, տնտեսական ու մշակութային կյանքն աշխուժացնելու և վերաբնակեցնելու ուղղությամբ: Նա մտադիր էր մայրաքաղաք փոխադրել ոչ միայն մուսուլմաններին, այլև քրիստոնյա բնակչությանը: Եթե այդ որոշումն իրագործվեց նախապես կամավոր սկզբունքով[27], ապա հետագայում, հետամուտ լինելով կայսրության տարբեր

---

[24] Սիրունի Յ., նշվ. աշխ., էջ 117:

[25] Ըստ Լեոնարդս եպիսկոպոսի՝ Ֆաթիհը գերության է մատնել շուրջ 60.000 հոգու, իսկ քաղաքի պաշարման պահին սպանվածների թիվը հասել է 4.000-ի: Տե՛ս Critoboulos, Vie de Mahomet (Monum. Hung. His.-Script. XX, 2ème partie), Vol. 2., Costantinople, 1875, p. 84. Ենթադրվում է, որ քաղաքի բնակչության թիվը նախքան գրավումը կազմել է շուրջ 60.000, եթե հաշվենք, որ 5-6000 հոգի մինչ այդ արդեն փախել էին: Տե՛ս Andréadès A., De La population De Constantinople Sous Les Empereurs Byzantins, , Metron, 1910, p. 41.

[26] Կ. Պոլսի անկման վերաբերյալ հայկական սկզբնաղբյուրներից հայտնի են Աբրահամ Անկյուրացու «Ողբ ի վերայ առման Կոստանդինուպոլսոյ» (էջ 35-59), Առաքել Բաղիշեցու «Ողբ մայրաքաղաքին Ստըմպոլու» (էջ 60-80) և Երեմիա Չելեբի Քյումուրճյանի «Յանկումն «Բիւզանդիոն»ի» (էջ 81-90) գրական ստեղծագործությունները: Համտ. Տե՛ս Անասյան Հ., Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957:

[27] Որպես կամավոր գաղթի հրաման՝ հոդվածագիրը նշում է 1453 թվականը: Տե՛ս Պէրպէրյան Հ., Իսթանպուլի հայ բնակչութիւնը քաղաքին գրաւումէն մինչեւ Ֆաթիհ Մեհմետ Բ.ի մահը (1453-1481), «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1962, թիւ 5-8, էջ 221:

շրջաններում ապահովել մուսուլման բնակչության գերակայությունը, միևնույն ժամանակ ջլատել քրիստոնյաների հնարավոր ապստամբական տրամադրությունները, վերաբնակեցումն ուղեկցվեց բռնագաղթերով[28]: Ինչպես գրում է թուրքամետ մոտեցումներով հայտնի հույն հեղինակ Քրիտոբուլոսը, 1460 թ. Մեհմեդ Ֆաթիհը Կ. Պոլիս տեղափոխեց իր տիրույթներում բնակվող հայ արհեստավորներին ու առևտրականներին[29]: Հայերից բացի, որոնց թիվը, ըստ ջենովացի պատմագիրների՝ անհամեմատ շատ էր, Կ. Պոլիս տեղախոխվեցին նաև բազմաթիվ հույներ, թաթարներ, հրեաներ և այլ ժողովուրդների էթնիկ խմբեր[30]: Փաստորեն, բռնագաղթի նպատակն էր միաժամանակ թե՛ շենացնել մայրաքաղաքը, թե՛ կայսրության զանազան շրջաններից հեռացնել քաղաքականապես վտանգավոր տարրերին և թե՛ քրիստոնյաներով բնակեցված շրջաններում հաստատել մահմեդական տարրի առկայությունը[31]:

17-րդ դարի թուրք նշանավոր ճանապարհորդ Էվլիյա Չելեբիի հաղորդած տվյալների համաձայն՝ հույները բնակվեցին Ֆեներ թաղամասում, ակսարայցիները՝ Ակսարայ, պալաթցիները՝ Պալաթ, հրեաները՝ Խասքյոյ, Անատոլիայից (Փոքր Ասիա-Ս.Մ.) եկածները՝ Ուսքյուդար, կարամանցիները՝ Բյոյուք Կարաման թաղերում, իսկ Թոքատի (Եվդոկիա) և Սվասի (Սեբաստիա) հայերը՝ Սուլու մանաստրում (Սամաթիա), այսինքն՝ Ս. Գևորգ եկեղեցու շրջակայքում[32]: Ի դեպ, Սամաթիան 15-16-րդ դարերում դարձել էր մի յուրահատուկ կենտրոն Կ.Պոլսում՝

---

[28] Տե՛ս Խառատյան Ա., նշվ. աշխ., էջ 51-52:
[29] Տե՛ս Critoboulos, նշվ. աշխ., էջ 140.
[30] Տե՛ս Խաչկոնց Դ., նշվ. աշխ., էջ 188:
[31] Տե՛ս Barkan Ö., Osmanlı İmparatorluğunda bir iskan ve kolonizasyon metodu olarak sürgünler, İstanbul, 1949, s. 524-569.
[32] Տե՛ս Ապաճեան Գր., Ուր եւ ինչպէս զետեղուեցան գրաւումէն վերջ Իսթանպուլ բերուած հայ գաղթականները, «Շողակաթ», Կ. Պոլիս, 1953, թիւ 9-10, էջ 258:

իր բազմացող բնակչությամբ և նոր գոյացող փողոցներով[33]:

Այստեղ թերևս հարկ է մեջբերել մի շարք աշխատություններում շրջանառվող այն համոզումը, որի համաձայն իբրև թե սուլթանը քաղաքի հույն բնակչությանը հակակշռելու համար օսմանյան տիրապետության ենթակա գավառներից Կ. Պոլիս է փոխադրել մեծաքանակ հայերի: Այս տեսակետը, որպես պատմական ճշմարտություն, իր արձագանքն է գտել ինչպես հայ, այնպես էլ օտար լեզուներով գրված հայոց պատմության մեջ[34]: Ահավասիկ մեկ օրինակ. «Մեհմեդ Բ-ն Կ. Պոլսի գրավումից հետո, հակակշռելու համար հույների ազդեցությունը, Փոքր Ասիայի հայերին հրավիրել է գալ և ապրել Ոսկեեղջյուրի մոտակայքում, որտեղ արդեն հաստատվել էր իրենց հայրենակիցների ստվարաթիվ գաղութը»[35]:

Կ. Պոլսում հաստատված հայերն իրենց համախմբված վայրերում թուրք իշխանությունների թույլտվությամբ սկսեցին աղոթատեղիներ փնտրել, որովհետև նրանց արտոնված չէր կառուցել իրենց սեփական եկեղեցիները[36]: Աստիճանաբար կազմվեցին հայկական թաղեր, որոնց անվանումները պահպանվել են 1935 թ. Թահսին Էոզի և 1945 թ. Օսման Էրգինի կողմից հրատարակված Ֆաթիհ մզկիթի վաքֆիեում: Դրանք են՝

1. Էրմենի Բազմենո Մահալլեսի,
2. Էրմենի Էթմեքչի Անդրեա Մահալլեսի,
3. Էրմենի Հաջիգեր Մահալլեսի,

[33] Տե՛ս Խառատյան Ա., նշվ. աշխ., էջ 70:
[34] Տե՛ս Ալպօյաճեան Ա., Ազգային սահմանադրութիւնը. իր ծագումը եւ կիրառութիւնը (Յիսնամեայ տարեդարձին առիթով), Ա. Պատրիարքութիւնը, «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկիչ Ազգային հիւանդանոցի», Կ. Պոլիս, 1910, էջ 76: Հմմտ.՝ Անասյան Հ., նշվ. աշխ., էջ 59: Պէրպէրեան Հ., նշվ., աշխ., էջ 214-215: Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին, Կ. Պոլիս, 1911, էջ 102: Pastermadjian H., Histoire De L’Arménie, Paris, 1949, p. 290: Thorossian H., Histoire De l’Arménie Et Du Peuple Arménien, Paris, 1957, p. 125-126:
[35] Morgan de J., Histoire Du Peuple Arménien, Paris, 1919, p.290.
[36] Տե՛ս Սիրունի Յ., նշվ. աշխ., էջ 195:

4. Էրմենի Շադիբեյ Մահալլեսի,
5. Էրմենի Ֆենավեչ Մահալլեսի,
6. Էրմենիան Մահալլեսի[37]:

Սրանով Օսմանյան տիրապետության շրջանում Կ. Պոլսի հայությունը ճանաչվեց իբրև «ալ թըջեմաաթ» (վեց համայնք): Սրանք հետագայում կոչվեցին «օխտը օդալարը» (տներ)՝ Կարակոմրուկ, Մալթա, Չերշենպեհ, Թեքեե, Քյոմուրճի, Ախըր կափու օդալարը, որոնց Ղ. Ինճիկյանը հավելել է նաև Թոփխանեն[38]: Եվ ահա Կ. Պոլսի գրավումից հետո կայսրությունում ձևավորվեցին հույն, հայ և հրեա համայնքները, որոնց տրվեց դավանական, ավանդութային և մշակութային կարգավիճակ:

1461 թ. Մեհմեդ Բ Ֆաթիհի արքունական հրովարտակով մայրաքաղաք Կ. Պոլսում հիմնվեց հայոց պատրիարքությունը[39]: Պատրիարք նշանակվեց Բրուսայի հայերի առաջնորդ Հովակիմ եպիսկոպոսը (1398-1478), որն իր պատրիարքական աթոռը հաստատեց Ս. Գէորգ եկեղեցում[40]: Հարկ է նշել, որ սույն եկեղեցին, մինչև հայերի սեփականությունը դառնալը և նոր անվանակոչությունը, եղել է Բյուզանդիայի (Սամաթիայում) ամենաշքեղ եկեղեցիներից մեկը, որը կոչվում էր Այա Բանաիա Բերիպլեպթոս (կառուցվել է 11-րդ դարի առաջին

[37] Տե՛ս նույն տեղում, էջ 196:
[38] Տե՛ս Ինճիկեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի Ասիոյ, Եվրոպիո, Ափրիկո և Ամերիկո, մասն երկրորդ, հ. ե՝ Եվրոպա, Վենետիկ, 1805, էջ 115-116:
[39] Հատկանշական է, որ մինչև հայոց պատրիարքության ստեղծումը Կ. Պոլսի հայությունը ենթարկվել է Սիսում գտնվող հայ կաթողիկոսական աթոռին, որը 1441 թ. փոխադրվում է Ս. Էջմիածին: Երբ 1450-ական թթ. հիմնվում է Կիլիկիայի կաթողիկոսությունը, այդ «Ժամանակ»ից ի վեր չի դադարում պայքարն այն խնդրի շուրջ, թե ո՞ր կաթողիկոսության իրավասության ներքո պիտի ծավալի իր գործունեությունը Կ. Պոլսի հայոց պատիարքությունը: Տե՛ս Ալպօյաճեան Ա., Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան կապը երկու կաթողիկոսական աթոռներուն հետ, «Շողակաթ», Ստամպուլ, 1962, թիւ 2, էջ 35-36:
[40] Տե՛ս Տէր-Անդրէասեան Հ., Իսթանպուլի Առաջին հայկական եկեղեցիները եւ Ս. Գէորգ պատրիարքանիստ եկեղեցին, «Շողակաթ», Ստանպուլ, 1995, էջ 99-106:

կեսին, բյուզանդական Ռոմանոս Գ Արկիրոս կայսեր կողմից 1028-1034 թթ.)[41]: Ի դեպ, Հովակիմ եպիսկոպոսից մինչև Դավիթ Արևելցի շուրջ քսան պատրիարք է պաշտոնավարել Սամաթիայում. միայն 1641 թվականին պատրիարքական աթոռը վերջնականապես տեղափոխվել է Գումգափու, ուր մինչ այսօր շարունակում է ծառայել իբրև Թուրքիայի հայ համայնքի հոգևոր կենտրոն[42]:

Պատրիարքության հիմնման առթիվ Միքայել Չամչյանը գրում է, թե երբ սուլթան Մեհմեդ Բ-ն այցելում է Բրուսա, Հայոց Հովակիմ եպիսկոպոսին խոստանում է Կոստանդնուպոլիսը նվաճելու դեպքում հայերի առաջնորդությունը տալ նրան[43]: Հատկանշական է, որ այս պատմությունը մեզ է հասել ոչ միայն փաստագրական, այլ նաև բանահյուսական ձևով[44]:

Մեր ձեռքի տակ եղած ուսումնասիրություններն ավանդաբար նշում են, որ Կ. Պոլսի հայոց առաջին պատրիարքը եղել է Հովակիմ եպիսկոպոսը, սակայն հայ պատմագրության մեջ առ այսօր բազմաթիվ քննարկումների առիթ է տվել նրա անձի հանգամանքը:

Երբ 1438 թ. Հռոմի Եվգենիոս Դ պապը Ֆլորենցիայի տիեզերական եկեղեցական ժողովին մասնակցելու համար հրավիրեց նաև հայ եկեղեցուն՝ քննարկելու քրիստոնյա եկեղեցիների միավորման հարցը, որի կողմնակիցն էր, ի դեպ, ժամանակի հայոց Կոստանդին Վահկեցի կաթողիկոսը, վերջինս հատուկ նամակ

---

[41] Տե՛ս նույն տեղում, էջ 99-100:

[42] Տե՛ս Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը եւ Ստանպուլի Հայ համայնքը, Պաշտօնական կայքէջ Պատրիարքութեան Հայոց Թուրքիոյ, http://www.turkiyeermenileripatrikligi.org/site/hy/%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%A1%D5%BF%D6%80%D5%AB%D5%A1%D6%80%D6%84%D5%B8%D6%82%D5%A9%D5%AB%D6%82%D5%B6/ (01.05.2019-ի դրությամբ հասանելի է):

[43] Տե՛ս Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց: Ի սկզբանէ մինչև ցամ Տեառն 1784, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 500:

[44] Տե՛ս Սվազլեան Վ., Պոլսահայոց բանահիւսութիւնը, Երեւան, 2000, էջ 282:

ուղարկեց Կաֆա (Թեոդոսիա)՝ իր տեղապահ Սարգիս վարդապետին՝ մասնավորապես նշելով.«Ես իմով լի եւ կատարեալ ճոխութեամբ ետու իշխանութիւն Սարգիս վարդապետի որ է եւ եղիցի փոխանակ անձին իմոյ ընդ նմին եւ Մարկոսի եւ Թումայի վարդապետայ եւ Յովակիմ եպիսկոպոսի զի երթիցեն ի ժողովն...»[45]: Ինչպես տեսնում ենք, նամակում նշված չէ, թե որտեղից է եղել Հովակիմ եպիսկոպոսը: Մինչդեռ մեկ այլ հիշատակարանի համաձայն՝ Հովակիմ եպիսկոպոսը, որը նորոգել է Կուտինայի եկեղեցին, այդ թվականներին հիշվում է իբրև Պրուսայի հոգևոր պետ[46]: Իր հերթին, Միքայել Չամչյանը, իր ձեռքի տակ ունենալով բազմաթիվ աղբյուրներ, նշում է, որ Կոստանդին կաթողիկոսը 1438 թ. հուլիսի 25-ի թվակիր նամակ է ուղարկել Կ. Պոլիս «ի ձեռն Յովակիմայ եպիսկոպոսին Բերիոյ»[47]: Արշակ Ալպոյաճյանն այս կապակցությամբ գրում է .«Հաւանական է, որ Յովակիմ եպիսկ. ԲԵՐԱՅԻ էր եւ ոչ «ԲԵՐԻԱՅ»վասնզի ոչ մէկ ուրիշ վաւերագիր զինքը ներկայացնէ եպիսկոպոս Բերիոյ-Հալէպի, ընդհակառակը ճիշդ այն թուականով կայ յիշատակարան մը, իրեն համար գրուած «Գիրք Ձեռնադրութեան» մը մէջ ուր անիկա կը յիշուի իբր «Արհիեպիսկոպոս Կոստանդնուպոլսի»[48]: Ահավասիկ, բնօրինակը.«Գրեցաւ գիրքս Ձեռնադրութեան թվ ՊՁԷ (=1438): Ի վայելումն Արհիեպիսկոպոսին Տէր Յովակիմին Կոստանդինու պաւլսի: Զոր Տէր Աստուած վայելեան (sic!) տացէ յամերամս ժամանակաց ամէն»[49]: Սույն վավերագրի համաձայն, փաստորեն, Հովակիմ եպիսկոպոսը դեռևս 1438 թվականին եղել է Կ.

---

[45] Պալճեան Աղ., նշվ. աշխ., էջ 88-89:
[46] Տե՛ս Բաբգէնեպ., նշվ. աշխ., էջ 440:
[47] Չամչեան Մ., նշվ. աշխ., էջ 475:
[48] Ալպօյաճեան Ա., Իսթանպուլի հայոց հոգեւոր վարչութեան սկզբնաւորութիւնը, «Ծողակաթ», Ստանպուլ, 1962, թիւ 2, էջ 24-25:
[49] Բաբգէն եպ., Կ. Պոլսի հայ պատրիարքութեան ծագումը, եւ առաջին պատրիարք Յովակիմ արքեպիսկոպոս, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1924, թիւ 8-10, էջ 435:

Պոլսի եպիսկոպոս: Բաբկեն եպիսկոպոս Կյուլեսերյանը փորձել է վերջնականապես լուծել այդ հարցը՝ նշելով, որ «Բերիայ» ասելով պետք է հասկանալ «Հալեպ»[50], իսկ Ա. Ալպոյաճյանը պնդում է, որ կաթողիկոսը նկատի է ունեցել Կ.Պոլսի մերձակա Բերիան[51]: Ն. Ակինյանն էլ կարծում է, որ «Յովակիմ՝ ձեռնադրուած Հալէպի թեմի վրայ, կը գործէր պաշտոնով Կ.Պոլիս»[52]: Այստեղ հարկ է պարզաբանել, որ «Բերիայ»ձևը վերագրվում է կա՛մ Հալեպին (Բերիա) և կա՛մ Կ. Պոլսի հանդիպակաց ջենովական բնակավայրին՝ Բերային (Պերա, Ղալաթիայում)[53]: Սա է թերևս շփոթության պատճառը:

Ինչպես նշում է Հ. Սիրունին, սկզբնական շրջանում Կ. Պոլսի հայոց հոգևոր առաջնորդի համար չի գործածվել «պատրիարք» («պատրիկ») եզրույթը[54]: Կ. Պոլսի հայ գաղթօջախի Ֆշանավոր հետազոտող Հայկ Բերբերյանը ևս հերքել է այդ պնդումը[55]: 15-րդ դարի մի շարք ձեռագիր հիշատակարանների հաղորդած տեղեկությունների համաձայն՝ այդ սկզբնաղբյուրներում պատրիարքի պաշտոնը հիշվում է «հայրայպետ», «հայրապետ», «եպիսկոպոս», «արհիեպիսկոպոս» անվանումներով[56]: «Պատրիարք» եզրույթն առաջին անգամ հանդիպում ենք շուրջ մեկ դար հետո՝ 1543 թվականին՝ Աստվածատուր Ա Յաղուբյանից սկսած[57]: Ահավասիկ, Մաղաքիա դպիրը, արձանագրելով Աբգար Թոքաթցու ջանքերը՝ Կ.Պոլսում հիմնելու հայկական տպարան,

---

[50] Տե՛ս նույն տեղում:
[51] Տե՛ս Ալպօյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 25:
[52] Ակինեան Ն., Կոստանդնուպոլսոյ հայոց պատրիարքութեան սկզբնաւորութիւնը, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1951, թիւ 8-10, էջ 461:
[53] Տե՛ս Խառատյան Ա., նշվ. աշխ., էջ 90:
[54] Սիրունի Յ., նշվ. աշխ., էջ 289-290:
[55] Տե՛ս Պէրպէրյան Հ., Կ. Պոլսոյ հայ պատրիարքութեան հիմնարկութիւնը, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1964, թիւ 7-9, էջ 350, թիւ 10-12, էջ 497-510:
[56] Տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Խաչիկյան Լ., մաս Գ (1482-1500 թթ.), Երևան, 1967, մաս Գ, էջ 441:
[57] Տե՛ս Seropyan V., Ermeni Patrikliği, Dünden bugüne İstanbul Ansiklopedisi, İstanbul, 1994, s. 188.

հիշատակում է Կ. Պոլսում տպագրված առաջին հայերեն գիրքը՝ «Փոքր Քերականութիւն»-ը, որ լույս է տեսել 1567 թ. «ի չորրորդ ամի պատրիարքութեան Յակոբ րաբունապետի Կոստանդնուպօլսոյ»[58]:

Հատկանշական է, որ Հովակիմ պատրիարքի (1461-1478) հոգևոր և քաղաքական իշխանությունը տարածվում էր ոչ միայն առաքելական հայերի, այլև վրացի, աղվան, ասորի, ղպտի ու հաբեշ միաբնակ ուղղափառների վրա: Սակայն իրականում պատրիարքությունը սկսվում է 1612 թվականից, երբ այն «իրեն ստորադաս կ'ունենայ ուրիշ առաջնորդութիւններ որոնց առաջնորդական հանգամանքը կառավարութեան առջև պաշտօնապէս միայն Կ. Պոլսոյ Պատրիարքին միջնորդութեամբը կրնար ճշդուիլ»[59]: Եվ քանի որ Կ. Պոլսի հայ առաջին պատրիարքը հիշատակվում է նաև որպես Ֆիլիպպեի (Վառնա) եպիսկոպոս (1466), նշանակում է, որ նրա իրավասության սահմանները հասնում էին մինչև Դանուբի ափերը, հավանաբար նաև նրան են կցված եղել Ադրիանուպոլիսը (Էդիրնե), Բրուսան, Քյոթահիան[60]:

Հայկական և հունական համայնքների բաժանման հիմքում ընկած էր դավանանքի տարբերությունը՝ առանց հաշվի առնելու ազգային առանձնահատկությունները, քանզի Ղուրանը ժողովուրդներին բաժանում է ոչ թե ցեղային, այլ՝ ըստ կրոնական հատկանիշների: Կ. Պոլսի գրավումից քառասուն տարի հետո հաստատվում է հրեական համայնքը, որի կրոնական առաջնորդը՝ խախամբաշին, բոլոր առումներով ուներ հայ և

[58] Զարհպանէլեան Գ., Պատմութիւն հայ տպագրութեան, Վենետիկ, 1895, էջ 47:
[59] Ալպօյաճեան Ա., Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնն ու Պրուսայի, Էտիրնէի եւ Ռօտոսթոյի առաջնորդութիւնները, Թէոդիկ, «Ամենուն Տարեցոյցը», Կ.Պոլիս, 1909, էջ 209-214:
[60] Տե՛ս նույն տեղում:

հույն պատրիարքներին հավասարազոր լիազորություններ և իրավունքներ: Այս մասին են վկայում թուրք պատմաբան Ա.Ռեֆիկը[61] և ֆրանսիացի պատմաբան Ա.Ուբիչինին[62]: Սակայն իբրև կրոնապետ հայ և հույն պատրիարքների դիրքի նշանակությունն արժևորվում է այն ժամանակ, երբ սուլթան Սելիմ I Յավուզի օրոք (1512-1520) օսմանյան սուլթանին է անցնում խալիֆայի կոչումը՝ իբրև իսլամական աշխարհի հոգևոր առաջնորդ: Այդժամ հայ և հույն պատրիարքներին շնորհվում են քաղաքական և կրոնական առավել լայն իրավազորություններ, որոնք հետո պիտի կարգավորվեն՝ ըստ օսմանյան հրովարտակների (berāt)[63]:

Իսկ թե ի՞նչ լիազորություններ ունեին Կ. Պոլսի հայոց պատրիարքները դեռ պատրիարքության ստեղծման շրջանից՝ դժվար է ասել, քանի որ չի պահպանվել ժամանակի որևէ սկզբնաղբյուր: Ըստ Հ. Սիրունու՝ օսմանյան տիրապետության շրջանում հատուկ սովորություն կար ամեն մի նոր սուլթանի հետ «նորոգել հին առանձնաշնորհումները»[64]: Եվ հաճախ նոր տրված ֆերմաններում (հրամանագրերում) բառ առ բառ կրկնվում էին նախապես շնորհված իրավունքները[65]: Ահավասիկ, մեզ հասած ամենահին հրամանագիրը, որը հստակորեն ուրվագծում է Կ. Պոլսի հայոց պատրիարքի պարտականություններն ու իրավունքները, սուլթան Մուսթաֆա Երրորդի կողմից Գրիգոր Պասմաճյան պատրիարքին շնորհված 1764 թ. հունիսի 3-ի բերաթն է[66]: Այստեղ նշվում է, որ նորընտիր

---

61 Տե՛ս Սիրունի Յ., նշվ. աշխ., էջ 204:
62 Տե՛ս Убичини А, Куртейль де П., Современное состояние Отоманской империи, С. Петербург, 1877, стр. 164.
63 Տե՛ս Ալպօյաճեան Ա., Առաջնորդական վիճակներ. Թուրքիոյ հայոց պատրիարքութիւն, «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի», Կ.Պոլիս, 1908, էջ 289:
64 Սիրունի Յ., նշվ. աշխ., էջ 281:
65 Տե՛ս նույն տեղում:
66 Տե՛ս Պէրպէրեան Ա., Պատմութիւն Հայոց, Կ.Պոլիս, 1871, էջ 227-233: Հմմտ.՝ Սիրունի Յ., նշվ. աշխ., էջ 282-284:

պատրիարքն արքունական գանձարանին վճարում էր որոշակի գումար: Պատրիարքն էր մայրաքաղաքում եկեղեցիներ և վանքեր կառուցելու, ինչպես նաև դպրոցների, տպարանների բացման, գրքերի հրատարակության համար իրավունք տալիս: Պատրիարքի իշխանությունը տարածվում էր ոչ միայն Կ. Պոլսի, այլև կայսրության ասիական տարածքների և Ռումելիի հայության վրա, և այդ շրջանների բոլոր առաջնորդները, քահանաները և ողջ հայությունը կրոնական հարցերով պետք է դիմեին միմիայն նրան: Հարկ է նշել, որ կրոնական իրավասություններին զուգահեռ պատրիարքին վերապահված էին նաև որոշ աշխարհիկ-քաղաքացիական գործառույթներ, որոնք պետք է համապատասխանեին օսմանյան վարչատնտեսական կարգուկանոնին՝ ապահովելով հողային-ռենտային հարաբերությունները տվյալ համայնքում[67]: Մասնավորապես, պատրիարքը և գավառների առաջնորդներն էին պատասխանատու տվյալ հատվածի ժողովրդի հարկային-ֆինանսական և իրավական (ամուսնություն, պսակ, կտակի և ժառանգության խնդիրներ, գույքային հարաբերություններ) պարտականությունների և իրավունքների իրացման համար: Պատրիարքի ձեռքին էին կենտրոնանում համայնքի եկամտի աղբյուրները (վաքըֆային-բարեգործական հաստատություններից ստացվող եկամուտներ, անշարժ կալվածքներ՝ հող, մշակովի դաշտեր, տներ, շինություններ, ջրաղացներ և այլն), եկեղեցական-կրոնական հարկերը, կտակներն ու նվիրատվությունները: Փաստորեն, օսմանյան պետությունը բավականաչափ թեթևացնում էր իր պարտականությունները նրանց հանդեպ[68], այս

---

67 Պատրիարքական իրավասությունների վերաբերյալ առավել մանրամասն Տե՛ս Խառատյան Ա., նշվ. աշխ., էջ 125-161:

68 Տե՛ս Османская империя. Система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы, отв. ред. Орешкова С., Москва, 1986, стр. 166.

բնագավառում որևէ ծախս չանելով, այլ, ընդհակառակը, հարկային համակարգի շնորհիվ տիրապետում էր ապրանքային ու դրամական զանգվածի մի մասին[69]: Միաժամանակ, օրենքներով կարգավորելով իրենց վերահսկողությունը ոչ մահմեդական հանրույթների ներքին հարաբերությունների, կարգուկանոնի նկատմամբ, օսմանյան իշխանությունները ցանկացած պահի կարող էին կոպտորեն միջամտել դրանց ներհամայնքային գործերին՝ սկսած քաղաքացիական հարաբերություններից մինչև պատրիարք նշանակելը, դատաիրավական գործերի վերահսկողությունից ընդհուպ համայնքների կրոնադավանական նախասիրությունների վրա ճնշումներ գործադրելը[70]:

Ինչ վերաբերում է պատրիարքի ընտրությանը, ապա այն իր նախորդի պաշտոնաթողության կամ մահվան դեպքում կարգավորվում էր օսմանյան օրենքներով: Պատրիարքի նշանակումն իրականացվում էր համայնքի էսնաֆի (արհեստավորություն, առևտրականություն) և կղերական դասի համաձայնությամբ, անշուշտ, Բարձրագույն Դռան լայն իրազեկության ու փաստական ուղղորդման պայմաններում:

Պատրիարքների իրավասությունները քիչ թե շատ ընդլայնվեցին Մուսթաֆա IV սուլթանի օրոք (1707-1708), երբ որոշվեց ջիզյեի (խարաջ) գանձման իրավունքը հանձնել միլլեթներին:

18-19-րդ դարերում՝ արևմտականացման գործընթացներին զուգահեռ աստիճանաբար Օսմանյան կայսրությունում մեծապես զարգացում ապրեց արհեստագործական խավը, որի առանցքը

---

69 Տե՛ս Խառատյան Ա., Կոստանդնուպոլսի հայ համայնքը և օսմանյան ավանդական հասարակությունը (XV-XV դարեր), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2003, N3, էջ 31:
70 Տե՛ս նույն տեղում:

կազմում էին հիմնականում հայերը: Արևմտահայությունը մեծ դերակատարություն ունեցավ կայսրության դիվանագիտական, պալատական, վարչական, դատական բնագավառներում, բանակում, բանակային ու ապահովագրական համակարգում, գիտության, ճարտարապետության, քաղաքաշինության, առևտրի, կերպարվեստի, բժշկության, տնտեսության, մշակույթի, արհեստների, երաժշտության, սպորտի և այլ ասպարեզներում[71]: Այս առումով անուրանալի են նաև հայ ամիրաների մատուցած ծառայությունները Կ. Պոլսի հայության կյանքում:

1847 թ.՝ Մատթեոս պատրիարքի օրոք, Կ. Պոլսում վերակառուցվեցին ազգային վարչական մարմինները. հաստատվեցին հոգևոր և գերագույն ժողովներ (համապատասխանաբար կազմված հոգևորականներից և աշխարհականներից): 1856 թ. փետրվարի 18-ին միլլեթների վերակառուցման վերաբերյալ Բարձրագույն Դռան ընդունած հաթթը հյումայունի բարեփոխումները, որոնք, ըստ էության, կրկնում էին 1839 թ. նոյեմբերի 3-ի թանզիմաթյան բարեփոխումների դրույթները, կարևոր նախապայման հանդիսացան ոչ մուսուլման ժողովուրդների, այդ թվում՝ հայերի կյանքի ու գույքի ապահովության հարցում: Դեռևս 1856 թ. դեկտեմբերին, Կ. Պոլսի հայերի նորընտիր Գերագույն ժողովը կազմեց հանձնաժողով՝ մշակելու Ազգային վարչության կանոնադրությունը[72]: Ըստ այդմ, 1860 թ. մայիսի 24-ին՝ պատրիարք Սարգիս Ե Կուլյումջյան Ադրիանուպոլսեցու օրոք, ստեղծվեց մի կարևոր իրավական փաստաթուղթ, այն է՝ Հայոց ազգային սահմանադրությունը, որը կարգավորում էր ոչ

[71] Այս մասին առավել մանրամասն տե՛ս Ստեփանյան Հ., նշվ. աշխ.:
[72] Տե՛ս Մեղու, Թիֆլիս, 1857, թիվ 8, էջ 170:

միայն Կ.Պոլսի, այլև Արևմտահայաստանի և ամբողջ օսմանյան Թուրքիայի հայ ազգաբնակչության կրթական, լուսավորական և մշակութային կյանքը[73]: Դրա հեղինակներն էին ճարտարապետ Նիկողայոս բեյ Պալյանը, գրող, մանկավարժ Նահապետ Ռուսինյանը և հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ Գրիգոր Օտյանը: Հայոց ազգային սահմանադրության համաձայն՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն կազմված էր օրենսդիր մարմնից՝ Ազգային ընդհանուր ժողով (կազմված 140 պատգամավորներից՝ 20-ը՝ հոգևորական, 120-ը՝ աշխարհիկ, որից 80-ը՝ պոլսահայ, 40-ը՝ գավառների ներկայացուցիչներ)[74] և գործադիր մարմնից՝ Ազգային կենտրոնական վարչություն: Պատրիարքին կից գործում էին քաղաքական (կազմված 20 աշխարհիկ անձանցից) և կրոնական (կազմված 14 հոգևորականներից) ժողովները: Վերջիններս իրենց իրավասությունները իրականացնում էին ազգային խորհուրդների (ուսումնական, տնտեսական, դատաստանական, վանքերի) և հոգաբարձությունների (ելևմտից, կտակաց, հիվանդանոցի) միջոցով[75]: Կ.Պոլսի հայոց պատրիարքը համարվում էր Ազգային ընդհանուր ժողովի նախագահը, իսկ մասնավոր հարցերի համար՝ միակ միջնորդն օսմանյան պետության և արևմտահայության հարաբերություններում[76]: Այդ առումով Հայոց ազգային սահմանադրության ընդունումը բացառիկ և առաջադիմական քայլ էր արևմտահայ համայնքի

---

[73] Տե՛ս Ալպօյաճեան Ա., Ազգային Սահմանադրութիւնը ու իր ծագումը եւ կիրառութիւնը, «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան Ազգային հիւանդանոցի Հայոց», Կ.Պոլիս, 1910, էջ 76-528: Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային Սահմանադրութիւնը Թուրքիայում (1860-1910), Հ. 1, Կ.Պոլիս, 1912:

[74] Նուրբեկյան Լ. Ջ., Արևմտահայերի Ազգային ժողովի հոգևոր գործառույթները, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2011, N 4, էջ 89-93:

[75] Տե՛ս Խառատյան Ա., նշվ. աշխ., էջ 3:

[76] Տե՛ս Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Կ.Պոլիս, 1863, էջ 13: Հմմտ.՝ Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 626:

կազմակերպման, ինքնակառավարման և զարգացման առումով:

Հայոց պատրիարքարանի նշանակությունն արևմտահայության համար թե՛ հոգևոր-մշակութային և թե՛ համայնքային կազմակերպման առումով անուրանալի է: Փաստորեն, այն դարձավ միակ և հիմնարար պարիսպը, որն իր շուրջը համախմբեց հարյուրամյակներ շարունակ օսմանյան բռնապետության ներքո ճնշված հայությանը: Ոչ մուսուլմանների նկատմամբ Օսմանյան կայսրության վարած հալածական քաղաքականությունը, այդ թվում՝ դևշիրմեի (մանկահավաք), կուլերի և ենիչերիական համակարգի կիրառումը, Բեքթաշիական միաբանությունների մոլեռանդ գործունեությունը, մահմեդականացման այլևայլ գործընթացները կործանարար հետևանքներ թողեցին արևմտահայության կյանքում: Սակայն սահմանափակված լինելով օսմանյան իշխանությունների կողմից տրված հոգևոր-վարչական բնույթի կարգավիճակով՝ հայոց պատրիարքարանի համար, ըստ էության, անհնարին էին դառնում հայության իրավունքների ոտնահարման պահանջով կայսրության ներքին գործերին միջամտելու հնարավորությունները: Այդ իրադրությունը շարունակվեց մինչև 19-րդ դարի կեսերը, երբ արևմտահայության համար ստեղծվեցին քիչ թե շատ նպաստավոր պայմաններ՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի գլխավորությամբ ամրագրելու իր իրավական դիրքերը[77]:

[77] Կ. Պոլսի հայոց պատրիարքարանն այսօր էլ շարունակում է բացառիկ համախմբող ուժ հանդիսանալ ինչպես պոլսահայության, այնպես էլ Թուրքիայի տարբեր նահանգներում դեռևս իրենց գոյությունը պահպանող հայության համար:

## 1.2. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի գործունեությունը Հայկական հարցի վերաբացման շրջանում 1912-1913 թթ.

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունը տնտեսապես և քաղաքականապես կանգնած էր կործանման վտանգի առջև: Երկիրն օրհասական դրությունից հանելու և կայսրության մոտալուտ վախճանը կանխելու նպատակով «İttihat ve Terakki» (Միություն և առաջադիմություն) երիտթուրքական կուսակցությունն աբդուլհամիդյան բռնապետական վարչակարգը փոխելու և սահմանադրական կարգեր հաստատելու վերաբերյալ մշակել էր ծրագիր՝ միաժամանակ դիմելով հայ քաղաքական ուժերին՝ դաշնակցականներին և հնչակյաններին՝ միասնաբար պայքար մղելու համիդյան վարչակարգի դեմ: Սակայն ի տարբերություն դաշնակցականների մի մասի,որոնք ընդունեցին երիտթուրքերի առաջարկը, հնչակյանները կտրականապես մերժեցին այն՝ միանալով «Hürriyet ve İtilaf» (Ազատություն և համաձայնություն)ընդդիմադիր կուսակցությանը:

1908 թ. հուլիսին տեղի ունեցած պետական հեղաշրջման արդյունքում վերջ դրվեց Աբդուլ Համիդի միահեծան բռնապետությանը, և իշխանությունը փաստացի անցավ երիտթուրքական կուսակցության ձեռքը: Կայսրությունում բնակվող ոչ մուսուլման ժողովուրդների, այդ թվում՝ հայերի շրջանում նոր հույսեր արթնացան իրենց իրավունքների վերականգնման և արժանապատիվ կեցության համար:

Մինչդեռ իշխանության գլուխ եկած երիտթուրքերի հակահայկական քաղաքականության հետևանքով արևմտահայությունը հայտնվեց ծանր

կացության մեջ[78]: «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը չկարողացավ պահել կայսրության արևելյան վեց նահանգներում հայության համար բարենորոգումների իրականացման ծրագրի վերաբերյալ իր խոստումը: «Սահմանադրական» հորջորջվող Օսմանյան կայսրության գործելաոճը դադարեց վստահություն ներշնչել նաև եվրոպական պետությունների կառավարություններին, ինչի առթիվ հայկական շրջանակները հայկական բարենորոգումների խնդրի լուծումը փորձեցին կապել եվրոպական պետությունների և գլխավորապես Ռուսական կայսրության հետ: Միաժամանակ խզվեցին նաև Հայ հեղափոխական դաշնակցության և երիտթուրքական կառավարության հարաբերությունները, ինչից հետո Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը դարձավ միակ միջնորդը հայության և տեղական իշխանությունների համար[79]:

Ոչ մուսուլմաններին ճնշելու քաղաքականությունը հանգեցրեց նաև արտաքին քաղաքական խնդիրների սրմանը: Ահավասիկ, 1911-1912 թթ. իտալա-թուրքական պատերազմում կրած պարտության հետևանքով Օսմանյան կայսրությունը վերջնականապես կորցրեց աֆրիկյան մայրցամաքում ունեցած իր գերիշխանությունը: 1912 թ. հոկտեմբերին սկսված Բալկանյան առաջին պատերազմի հետևանքով Օսմանյան կայսրության կազմում մնացին միայն Կ.Պոլիսը և Արևելյան Թրակիայի մի մասը: 1912 թ. Ալբանիան հռչակեց իր անկախությունը: 1913 թ. հունիսին սկսվեց Բալկանյան երկրորդ պատերազմը: Ըստ էության,

---

78 Առավել մանրամասն տե՛ս Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967, էջ 28-116:

79 Տե՛ս Avagyan A., Minassian G. F., Ermeniler ve İttihat Ve Terakki- İşbirliğinden Çatışmaya, İstanbul, 2005, s. 118-119.

Օսմանյան կայսրության տրոհումն ու որպես «հիվանդ մարդու» ոչնչացումը գործնականորեն իրագործվեցին[80]: Երիտթուրքական իշխանությունների պարտությունները հայ հասարակական-քաղաքական շրջանակների մոտ հանգեցրին այն համոզմանը, որ մոտ է վերջնականապես Հայկական հարցի լուծումը: Հայկական բարենորոգումների հարցը կրկին դառնում էր միջազգային դիվանագիտության օրակարգի մաս: Ըստ որում, հայ հասարակական լայն շրջանակների ռուսական կողմնորոշումը և հայ-ռուսական հարաբերությունների փորձը հայությանը ստիպեցին կրկին ապավինելու խնդիրը Ռուսաստանի օգնությամբ լուծելու մարտավարությանը: Նախ չկար այլևս ռուս-անգլիական հակամարտությունը, որը նախորդ անգամ կասեցրել էր Հայկական հարցի առաջխաղացումը, երկրորդ՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև լռելյայն համաձայնություն էր կնքվել Օսմանյան կայսրության ասիական տարածքների վերաբաժանման վերաբերյալ[81]: Եվ քանի որ Ռուսաստանին բաժին էր ընկնելու Հայաստանը, հետևաբար նրան էր պատկանում Հայկական հարցին միջամտելու նախաձեռնությունը[82]: Վիրահայոց թեմի ժամանակավոր կառավարիչ Եփրեմ եպիսկոպոս Սուքիասյանը 1912 թ. սեպտեմբերի 23-ին Գևորգ Ե-ին ուղղված նամակով դիմում էր Նորին Սրբությանը «միջնորդ հանդիսանալ Ռուս կառավարութեան ու առաջն առնելու այն սարսափելի կոտորածի որի սկսելը արդէն նկատւում է պարբերաբար մասնակի կոտորածի թալանների առևանգումների կրկնուիլը:

---

80 Հասրաթյան Մ. և ուրիշներ, Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1986, էջ 214-216:
81 Տե՛ս Աճառեան Հ., Տաճկահայոց պատմութիւնը, Կ. Պոլիս, 1915, էջ 71:
82 Նույն տեղում:

Ձերդ Սրբութեան Տփխիս գալը և փոխարքային ներկայանալը այդ առթիւ անհրաժեշտ է համարվում»[83]: Վիրահայությունը պատրաստ էր աջակցել վեհափառին Հայկական հարցի լուծման ուղղությամբ և համակարծիք էին ունենալ կաթողիկոսի ներկայացուցիչը Եվրոպայում՝ ի դեմս Պողոս Նուբար փաշայի[84]: Բացի այդ, 1912 թ. սեպտեմբերի 25-ին Երևանի ազգային, բարեգործական-կրթական հաստատությունների ներկայացուցիչները Խորեն եպիսկոպոսի նախագահությամբ ժողով գումարեցին՝ որոշելով դիմել Ամենայն հայոց կաթողիկոսին, որպեսզի նա ռուսաց կայսեր միջնորդությամբ «պաշտպանէ թիւրքահայերին և վերջ դնէ նրանց տանջանքներին»[85]: Նույնաբովանդակ խնդրագրերով Գևորգ Ե-ին են դիմում նաև Ալեքսանդրապոլի[86] և Նոր Բայազետի[87] հայերը:

Այսպիսով, 1912 թ. հոկտեմբերի 15-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանցը Կովկասի փոխարքա Իլլարիոն Վորոնցով-Դաշկովի միջոցով դիմեց ռուսաց կայսերը՝ իբրև «արևելքի քրիստոնյաների վաղեմի պաշտպանի»՝ խնդրելով նրան իր պաշտպանության տակ առնել հայերին[88]: Ռուսաստանը դրական վերաբերմունք ցուցաբերեց դեպի Հայկական հարցը, որն անշուշտ պայմանավորված էր տվյալ պահին հայերի և ռուսների շահերի համընկնմամբ, մասնավորապես՝ այն լայն հնարավորություններ էր ընձեռում Ռուսաստանին՝ բավարարելու իր ծավալապաշտական ձգտումները:

---

[83] ՀԱԱ ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 1:
[84] ՀԱԱ ֆ. 222, ց. 1, գ. 1, թ. 25-28:
[85] ՀԱԱ ֆ. 57, ց. 5, գ. 25, թ. 1:
[86] Տե՛ս նույն տեղում, թ. 4:
[87] Տե՛ս նույն տեղում, թ. 5-7:
[88] Տե՛ս ՀԱԱ ֆ. 57, ց. 5, գ. 53, թ. 47:

1912 թ. սեպտեմբերի 9-ին Կ.Պոլսի Ազգային ժողովի որոշմամբ հայոց պատրիարք Հովհաննես Արշարունին արդարադատության և դավանանքների նախարարություն ուղարկեց մի դիմում՝ պահանջելով դադարեցնել կայսրության արևելյան նահանգներում քրդերի կողմից հայ բնակչության հանդեպ իրականացվող կոտորածները և շուտափույթ կերպով իրականացնել օսմանյան սահմանադրության հաստատումից հետո խոստացված հայկական բարենորոգումները[89]: Հայտնի է, որ Գևորգ Ե-ն այդ կապակցությամբ բազմաթիվ դիմումներ է ներկայացրել ռուսաց կայսր Նիկոլայ Բ-ին և Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին՝ խնդրելով միջնորդել հայերի հանդեպ տեղի ունեցող բռնությունները կանխելու համար[90]:

1913 թ. գարնանը կոտորածներն ավելի սաստկացան, ուստի ապրիլի 21-ին պատրիարքի նախաձեռնությամբ Գալաթայի հայկական եկեղեցում գումարված Ընդհանուր ժողովի դռնփակ նիստին ներկայացվեց Կենտրոնական վարչության զեկուցումը հայաբնակ նահանգների վերաբերյալ[91]:

Հետաքրքրական է Արշարունի պատրիարքի՝ ֆրանսիական «Թուրքիա» (La Turquie) թերթին տված հարցազրույցը, որտեղ նա արևելյան նահանգներում քրդերի կողմից հայերի սպանությունների և անօրինական գործողությունների մեղավոր է համարում քրդերին[92]: Հարցազրույցում պատրիարքն առաջարկում էր հետևյալը՝

- Եվրոպացիների հսկողությամբ մեծացնել թուրքոստիկանական ուժերը,

[89] Տե՛ս Güllü R. E., Ermeni Sorunu Ve İstanbul Ermeni Patrikhanesi (1878-1923), Ankara, 2015, s. 409, 410:
[90] ՀԱԱ ֆ. 57, ց. 5, գ. 26, թ. 5-30: Տե՛ս նաև՝ ՀԱԱ ֆ. 57, ց. 5, գ. 52, թ. 11-15:
[91] Տե՛ս Ազգ. ժողովին երէկի նիստը. Մերժում Վարչութեան հրաժարականին եւ վստահութեան քուէ, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 1913, 22 Ապրիլ:
[92] Տե՛ս Güllü R. E., նշվ. աշխ., էջ 412:

- Ամեն կողմում հայերի և քրդերի համար դպրոցներ բացել,
- Մինչ այժմ ոչ կարևոր համարվող արևելյան նահանգներում իրականացնել ճանապարհների և ենթակառուցվածքների հիմնանորոգում,
- Կառավարությունը տարածաշրջանում ծրագրված բարենորոգումների առնչությամբ որևէ տեղեկություն չի տրամադրել պատրիարքարանին: Հայտնի չէ, թե ինչ է նախատեսված այդ ծրագրով: Նախապես բարենորոգումների նպատակով կազմվել են տարատեսակ հանձնաժողովներ, սակայն դրանցից ոչ մեկը արդյունք չի տվել: Դրանց իրագործման համար ապավինել եվրոպացի մասնագետներին,
- Արևելյան նահանգներ ասելով հասկանալ Էրզրումի, Մամուրեթուլազիզի (Խարբերդ- Ս. Մ.), Բիթլիսի, Դիարբեքիրի, Վանի և Սվասի (Սեբաստիա- Ս.Մ.) նահանգները և այլն[93]:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ կետերն ամբողջական դիմումի տեսքով մայիսի 31-ին պատրիարքի կողմից ուղարկվել են օսմանյան կառավարությանը[94]: Նույնաբովանդակ զեկուցագրերով և բողոքագրերով Արշարունի պատրիարքը դիմել է նաև եվրոպական պետությունների դեսպաններին՝ մասնավորապես նշելով. «Որպես պատրիարք՝ այլ ելք չեմ գտնում, քան ապավինել օսմանյան պետության և ազգի պատասխանատվության զգացումին և առաջադեմ աշխարհի խղճին ու ողորմածությանը»[95]:

Հունիսի 10-ին ներքին գործերի նախարարությունը երիտթուրքական կառավարության ուղղված զեկուցագրով

---

[93] Տե՛ս Bayur Y. H., Türk İnklâbı Tarihi, Cilt: II, Kısım III, Ankara, 1991, s. 69.
[94] Տե՛ս Güllü R. E., նշվ. աշխ., էջ 415, 416:
[95] Bayur Y. H., նշվ. աշխ., էջ 81:

քննադատել է պատրիարքի բողոքագիրն առ այն, որ «արևելյան նահանգներում հայերի հանդեպ իրականացվող անօրինականությունները չեն ճնշվում պետության կողմից»[96]: Ներքին գործերի նախարարությունն այդ կապակցությամբ հանդես է եկել հետևյալ պատճառաբանությամբ, թե «ձեռնարկված միջոցառումների արդյունքում ձերբակալվել կամ պատժի են ենթարկվել մի շարք անձինք, սակայն արևելյան նահանգներում տևական ժամանակ միջաշիրեթյան բախումների պայմաններում անհնարին էր դառնում անվտանգության կանոնների պահպանումը»[97]:

1912 թ. դեկտեմբերի 21-ին տեղի ունեցավ Ազգային ժողովի պատմական նիստը, որին Կենտրոնական վարչության ատենապետ Ստեփան Գարայանը, ներկայացնելով հայ ժողովրդի ծանր կացությունը, առաջարկեց օգտագործել ընձեռված քաղաքական բոլոր հնարավորությունները՝ հայկական հարցը միջազգային սեղանի վրա դնելու համար[98]: Հատկանշական է, որ հայկական բոլոր կուսակցությունները և հայ կաթոլիկ ու բողոքական համայնքները համախմբվեցին պատրիարքարանի շուրջը՝ ոչ մի ջանք չխնայելով ընդհանուր գործի հաջողության համար:

Արևմտահայ հասարակական-քաղաքական շրջանակներում ապագայի հանդեպ նոր տրամադրություններ էին հասունանում: Ուստի ընթացիկ իրադարձություններին համահունչ օգտվելով հայության վաղեմի երազանքն իրագործելու բացառիկ հնարավորությունից՝ 1912 թ.

[96] Տե՛ս Güllü R. E., նշվ. աշխ., էջ 416:
[97] Նույն տեղում:
[98] Տե՛ս Փափազեան Վ., Հայկական Բարենորոգումները (1912-1914), «Վէմ», Փարիզ, 1933, Ա, էջ 92: Հմմտ.՝ Ազգային Ժողովին երէկի նիստը, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1912, 22 Դեկտեմբեր; Հայկական հարցը Ազգ. Ժողովին մէջ. Միաձայն վստահութիւն Վարչութեան. Հիմնաւոր երաշխիքներ պէտք են միայն, «Առաջամարտ», Կ. Պոլիս, 1912, 22 Դեկտեմբեր:

նոյեմբերի 12-ին Ռուսաստանի Նախարարների խորհրդի նախագահ Վ.Ն. Կոկովցևի և արտաքին գործոց նախարար Ս.Սազոնովի հորդորով և Գևորգ Ե կաթողիկոսի հովանավորությամբ եվրոպական կառավարությունների հետ բանակցություններ վարելու նպատակով կազմվեց Ազգային պատվիրակությունը՝ եգիպտահայ ականավոր հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ[99]: Այնուհետև Կովկասի փոխարքա Ի.Ի.Վորոնցով Դաշկովի թույլտվությամբ 1912 թ. հոկտեմբերին հիմնվեց Հայկական Կենտրոնական ազգային բյուրոն, որը կոչված էր Հայկական հարցի վերաբերյալ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու օտարերկրյա պետությունների հետ[100]: Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, իր հերթին, սերտ համագործակցության մեջ մտավ Պողոս Նուբարի հետ: Դիցուք, պատրիարքարանի նախաձեռնությամբ և գլխավորությամբ ստեղծվեցին երկու՝ Հարստահարական խորհրդարանական (Ազգային ժողովի կողմից) և Ապահովության (Ազգային կենտրոնական վարչության կողմից) հանձնաժողովներ, որի հիմնական նպատակն էր աջակցել Պողոս Նուբար փաշայի գլխավորած պատվիրակությանը և մշակել բարենորոգումների ծրագիրը, որը պետք է բաց կերպով քննարկվեր եվրոպական տերությունների ներկայացուցիչների հետ բանակցությունների ժամանակ[101]: Ապահովության հանձնաժողովի նախագահ ընտրվեց Արշարունի պատրիարքը, իսկ անդամներն ընտրվեցին Կրոնական ժողովից՝ Եղիշե

---

[99] Այս մասին առավել մանրամասն տե՛ս Մարտիրոսյան Մ., Պողոս Նուբար փաշան հայ ազգային պատվիրակության նախագահ, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2008, N3, էջ 49-59:

[100] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 61, թ. 20, 21:

[101] Տե՛ս Զաւէն Արքեպս., Պատրիարքական յուշերս. Վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 30-32:

արքեպիսկոպոս Դուրյանը և Գրիգորիս վարդապետ Պալաքյանը, Քաղաքական ժողովից՝ Լ. Տեմիրճիպաշյանը, Ոսկան Մարտիկյանը և կոմս Վահան Փափազյանը: Հանձնաժողովի աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էին նաև Գրիգոր Զոհրապը, Մուրատ Պոյաճյանը և Հարություն Շահրիկյանը: Հատկապես եվրոպական պետությունների դեսպանների հետ բանակցություններում անուրանալի եղավ Գ. Զոհրապի դերը, որը մեծ համարում ուներ օսմանյան հասարակական-քաղաքական շրջանակներում: Ինչ վերաբերում է Հարստահարական հանձնաժողովին, ապա այն իր բնույթով Կենտրոնական վարչության խորհրդակցական մարմինն էր, որի անդամներն էին Գ. Զոհրապը, Հ. Շահրիկյանը, Վ. Թեքեյանը, Հ. Գալֆայանը և Գ. Տեր-Մովսեսյանը[102]:

Հայկական բարենորոգումների խնդրի լուծման առնչությամբ երիտթուրքական կառավարության որդեգրած մոտեցումը խիստ բացասական էր: Հակադրվելով իթթիհլաֆականների առաջադրած բարենորոգումների նախագծին՝ երիտթուրքերի նոր կառավարությունը հանդես եկավ ամբողջ կայսրության տարածքում բարենորոգումներ իրականացնելու առաջարկությամբ և ծրագրով: Ըստ էության, սրանով նրանք նպատակ էին հետապնդում ոչ միայն բացառելու հայկական բարենորոգումների հարցում օտարերկրյա պետությունների միջամտությունը, այլև առհասարակ հակադրվելու հայության ինքնավարություն շնորհելու տրամաբանությանը:

Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության որոշմամբ 1912 թ. դեկտեմբերին Գրիգոր Զոհրապը, Հակոբ Զավրյանը, Էդվարդ

102 Տե՛ս Փափազեան Վ., Հայկական Բարենորոգումները (1912-1914), «Վէմ», Փարիզ, 1933, Բ, էջ 88:

Ակունին, Սիմոն Զավարյանը, Ռուբեն Զարդարյանը և Վահան Փափազյանը պատրաստեցին բարենորոգումների մի ծրագիր, որը, որպես ծրագրային նախանյութ, նախատեսվում էր ներկայացնել հայոց պատրիարքարանին[103]: Կարճ ժամանակ անց՝ 1913 թ. հունվարին, Կ. Պոլսում ռուսական դեսպանությունն արևմտահայության քաղաքական պահանջները ձևակերպելու նպատակով դիմեց հայոց պատրիարքարանին, որն Ապահովության հանձնաժողովի միջոցով գումարեց նիստ՝ որոշելու բարենորոգումների մշակման նախնական աշխատանքները[104]: ՀՅԴ առաջարկով պատրիարքարանի նախագծի հիմքում դրվեց դաշնակցության կողմից կազմված վերոհիշյալ նախագիծը, որն անմիջապես վավերացվեց Արշարունի պատրիարքի կողմից[105]: Պատրիարքարանի նախագծի մեջ ներառվեց նաև Ամենայն հայոց կաթողիկոսի կազմած նախագիծը, որը, ըստ էության, Հայկական հարցի առնչությամբ ռուսական քաղաքական կամքի արտահայտությունն էր: Պատրիարքարանը ստացավ նաև Հայոց ազգային պատվիրակության նախագիծը, որը, սակայն, խիստ էական տարբերություններ ուներ պատրիարքարանի կազմած նախագծի հետ համեմատությամբ: Այն գրեթե ամբողջությամբ հիմնված էր 1895 թ. մայիսյան ծրագրի դրույթների վրա, մասնավորապես՝ ընդհանուր քննիչի ազգությամբ թուրք լինելու և եվրոպական պետությունների կողմից վերահսկիչ մարմին ստեղծելու հանգամանքները: Այդ պատճառով պատրիարքարանը որոշեց Ապահովության հանձնաժողովի անդամ և քարտուղար Վահան Փափազյանին ուղարկել Փարիզ՝ Պողոս Նուբար

103 Տե՛ս Հայերու կացութիւնը Թիւրքիոյ մէջ ներկայացուած վաւերաթղթերով 1908-1912, «Դրօշակ», Ժնեւ, 1913, N 2-3, էջ 31-36: Հմմտ.՝ Փափազեան Վ., Հայկական Բարենորոգումները (1912-1914), «Վէմ», Փարիզ, 1934, Գ, էջ 63:

104 Տե՛ս նույն տեղում:

105 Տե՛ս նույն տեղում, էջ 64:

փաշայի և Ազգային պատվիրակության մյուս անդամների հետ բանակցություններ վարելու համար:Ազգային պատվիրակության ծրագրի հիմքում ընկած էին հետևյալ փաստարկները՝

1. Բարենորոգումների նախագծում բացառել քաղաքական ինքնավարության բաղադրիչը,
2. Քանի որ 1895 թ. մայիսյան ծրագիրն ընդունվել է Օսմանյան կայսրության և եվրոպական պետությունների համաձայնությամբ, հետևաբար այն դիտարկել որպես ուղենիշ հայկական բարենորոգումների ծրագրի համար,
3. Չեղարկել եվրոպական տերությունների կողմից ընտրված եվրոպացի քննիչի հանգամանքը,
4. Ծրագրի իրականացման համար միջազգային մարմնի միջոցով հաստատել եվրոպական վեց պետությունների վերահսկողություն:

Սույն կետերի վերաբերյալ Վահան Փափազյանը ներկայացրեց պատրիարքարանի հետևյալ առաջարկությունները՝

1. Թեև պետք չէ քաղաքական ինքնավարության կերպարանք հաղորդել պատրիարքարանի ներկայացրած պահանջներին, սակայն անհրաժեշտ է ապահովել հայ ժողովուրդի ապագա գոյությունը և ազատ զարգացման նախադրյալները,
2. Մեր նախագծի հիմքում ևս ընկած է Մայիսյան բարենորոգումների ծրագիրը, սակայն պետք է հաշվի առնել նաև այլ միջազգային և թուրքական վարչական կանոնագրեր,
3. Մեր միակ իրական երաշխիքը կարող է լինել ընդհանուր քննիչի նշանակման ձևի և նրան տրվելիք իրավասությունների խնդիրը:Նա պետք է կախում ունենա ոչ միայն թուրքերից, այլև

օտարերկրյա պետություններից: Ցանկալի է, որ այդ պետությունը լինի Ռուսաստանը:

4. Վեց պետությունների վերահսկողության պահանջը վերադառնում է Բեռլինի 61-րդ հոդվածի և Մայիսյան ծրագրի տրամաբանությանը, այսինքն՝ Հայաստանը կրկին պետք է դառնա օտար պետությունների շահերի բախման թատերաբեմ, որից պետք է օգտվի Բարձրագույն Դուռը[106]:

Պողոս Նուբար փաշայի հետ բանակցություններից հետո հայոց պատրիարքարանի կողմից՝ ի դեմս Արշարունի պատրիարքի, Ս.Գարայանի և Գ.Զոհրապի, 1913 թ. ապրիլի սկզբին Կ. Պոլսում ռուսական դեսպանությանն ուղարկվեց պատրիարքարանի նախագիծը, որով Ռուսաստանը վերջնականապես իր ձեռքն էր վերցնում հայկական բարենորոգումների ծրագիրն առաջնորդելու պատասխանատվությունը:

Ամիսներ տևած բանակցություններից հետո Անտանտի երկրների կառավարություններն ի վերջո համաձայնության եկան Օսմանյան կայսրության հայաբնակ նահանգներում բարենորոգումների նախագիծ կազմելու վերաբերյալ: Հատկանշական է, որ դեռևս 1913 թ. հունվարին Կ. Պոլսում ռուսական դեսպանությունն արևմտահայության քաղաքական պահանջները ձևակերպելու նպատակով նախապես դիմել էր հայոց պատրիարքարանին, որն Ապահովության հանձնաժողովի միջոցով գումարված նիստի ընթացքում պարտավորվել էր որոշել բարենորոգումների մշակման նախնական աշխատանքները և կարճ ժամանակահատվածում ներկայացնել ռուսական դեսպանությանը[107]:

[106] Տե՛ս նույն տեղում, էջ 67:
[107] Տե՛ս նույն տեղում:

1913 թ. հունիսի 4-ին Կ. Պոլսում ռուսական դեսպանատան գլխավոր թարգմանիչ Անդրեյ Մանդելշտամի՝ հայկական բարենորոգումների վերաբերյալ պատրաստած ծրագիրն որոշակի վերապահումներով արժանացավ օսմանյան կառավարության և եվրոպացի դեսպանների հավանությանը[108]: Արդյունքում, 1914 թ. հունվարի 26-ին (փետրվարի 8) մեծ վեզիր, երիտթուրքական կուսակցության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Սայիդ Հալիմ փաշայի և Օսմանյան կայսրությունում Ռուսաստանի դեսպան Կոնստանտին Գուլկևիչի միջև կնքվեց համաձայնագիր, որով Բ. Դուռը հանձն էր առնում կայսրության հայաբնակ նահանգներում իրականացնել բարենորոգումներ[109]:

Հատկանշական է, որ 1914 թ. հուլիսին Ղրիմի Լիվադյան պալատում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ Նիկոլայ II-ը անձամբ Թալեաթ փաշային և գեներալ Իզզեթ փաշային հայտնեց, որ Ռուսաստանը հետևողական է լինելու հայկական բարենորոգումների բարեխիղճ իրականացման հարցում[110]:

Նույն թվականի օգոստոսի 2-ին Հովհաննես Արշարունի պատրիարքը հրաժարական տվեց, որից հետո ազգային և ընդհանուր ժողովների կողմից պատրիարքական փոխանորդ ընտրվեց Գաբրիել եպիսկոպոս Ջևահիրջյանը, ով բարենորոգումների ծրագիրն առաջնորդեց մինչև 1914 թ. փետրվարը, երբ Կ. Պոլիս ժամանեց նորընտիր պատրիարք Զավեն Տեր-Եղիայանը: Պատրիարքի ընտրության

---

108 Առավել մանրամասն տե՛ս Mandelstam A., La Société Des Nations Et Les Puissances Devant Le Problème Arménien, Paris, 1926.

109 Տե՛ս Աճառեան Հ., նշվ. աշխ., էջ 75-77: Հմմտ.՝ Aydoğan E., İttihat Ve Terakkî’nin Doğu Politikası (1908-1918), Ankara, 1967, s. 71-86; Türkmen Z., İttihat Ve Terakki Hükûmetinin Doğu Anadolu Islahat Müfettişliği Projesi Ve Uygulamaları (1913-1914): Ermeni Meselesine Çözüm Arayışları, Ermeni Araştırmaları, Cilt: 3, Sayı: 9, Ankara, 2003, s. 41-75.

110 Տե՛ս ՀԱԱ ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 146, 147:

նախապատրաստական աշխատանքներից բացի՝ Զևաhիրջյան եպիսկոպոսը միաժամանակ սկսեց զբաղվել հայկական բարենորոգումների ծրագրի խնդրով: Այսպես օրինակ, 1913 թ. սեպտեմբերի 5-ին նա եվրոպացի դեսպաններին ներկայացրեց հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուսական տեսլականը ներկայացնող մի ծրագիր, որի համաձայն՝

- Օսմանյան կայսրության արևելյան վեց նահանգներից կազմվելու էր մեկ նահանգ,
- Այն ղեկավարվելու էր մեծ պետությունների հավանությամբ ընտրված եվրոպացի նահանգապետի կողմից,
- Նահանգապետը որևէ կապ չէր ունենալու Բ. Դռան հետ: Նահանգապետին էին ենթարկվելու վարչական և դատական իշխանությունները,
- Նահանգային մեջլիսներում վերականգնվելու էր մուսուլմանների և ոչ մուսուլմանների հավասար ներկայացվածության իրավունքը,
- Բարենորոգումների հսկողությունն իրականացնելու էին եվրոպական պետությունները[111]:

Վերոհիշյալ նախագիծը եվրոպացի դեսպանների կողմից արժանացավ խիստ քննադատության. նրանք կարծում էին, որ օսմանյան պետությունը չէր կարող հանդուրժել իր տարածքում ինքնիշխան նահանգապետության գոյությունը[112]: Մասնավորապես Ֆրանսիայի դեսպանը պատրիարքական փոխանորդին ուղղված պատասխան նամակում իր անհամաձայնությունն էր արտահայտել այս հարցի առնչությամբ. «Այստեղ նշված պահանջները վկայում են այն մասին, որ մեծ

---

[111] Տե՛ս Güllü R. E., նշվ. աշխ., էջ 419:
[112] Տե՛ս նույն տեղում:

պետությունների համաձայնությամբ ստեղծվում է մի ինքնիշխան նահանգապետություն, որը որևէ կապ չունի օսմանյան պետության հետ»[113]:

Այսպիսով, կարող ենք նշել, որ հայոց պատրիարքարանը նշանակալի դերակատարություն ունեցավ հայոց բարենորոգումների ծրագրի մշակման ուղղությամբ: Նրա գործունեության շնորհիվ հնարավոր դարձավ ոչ միայն հայության քաղաքական պահանջները լսելի դարձնելու եվրոպական պետություններին, այլև Ռուսաստանի անմիջական նախաձեռնությամբ կազմված ծրագրի հիմքում ներառելու պատրիարքարանի նախագիծը, ինչը լիովին արտահայտում էր արևմտահայության սպասումները:

## 1.3. Զավեն եպիսկոպոս Տեր-Եղիայանը և իր ընտրության հանգամանքները

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունն իր դարավոր պատմության ընթացքում նշանակալի դերակատարություն է ունեցել Օսմանյան կայսրությունում բնակվող հայության կյանքում՝ոչ միայն հոգևոր կամ ներքին համայնքային կենսական պահանջները բավարարելու տեսանկյունից, այլև օսմանյան պետական իշխանության հետ ունեցած հարաբերություններում: Հետևաբար, պատրիարքի անձի գործոնը հարկ է արժևորել միաժամանակ նրա քաղաքագիտական հնարավորությունների համապատկերում:

Պատրիարքական յուրաքանչյուր ընտրությունից առաջ համայնքի ունեցած սպասելիքներն առաջադրված թեկնածուից հիմնականում պայմանավորված են ազգային

---
113 Նույն տեղում:

հարցերի լուծման վերաբերյալ վերջինիս ունեցած տեսլականով, ինչպես նաև պետական մարմինների հետ շփումներում քաղաքական գործչին հատուկ հմտությունների դրսևորմամբ:

Այս առումով 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած իրադարձությունները, մասնավորապես՝ Բալկաններում ծայր առած ազգային-ազատագրական շարժումները, որոնք անուղղակի կերպով հող նախապատրաստեցին Հայկական բարենորոգումների հարցի՝ վերստին միջազգային քաղաքական օրակարգում հայտնվելու առնչությամբ, առավել հրատապ դարձրին պատրիարքական ընտրության հարցը:

Դեռևս 1913 թ. օգոստոսի 2-ին, Կ. Պոլսի հայոց պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոս Արշարունու (1911-1913)՝ արդարադատության և դավանանքների նախարարությանը ներկայացրած հրաժարականի դիմումի համաձայն, դադարեցվել էր նրա ծառայությունը[114]: Նա նախընտրել էր կյանքի մնացած մասն անցկացնել «աղոթքով՝ ի բարօրություն և երջանկություն օսմանյան պետության և ազգի»[115]: Սակայն Արշարունի պատրիարքի հեռացման բուն պատճառը, առողջական խնդիրներից զատ, ինչպես վերջինս նշում է հրաժարականի դիմումի մեջ[116], իր անձի նկատմամբ առկա անվստահության բուռն ալիքն էր, որ համակել էր ինչպես հասարակ ժողովրդին, այնպես և մտավորական շրջանակներին և հոգևոր դասի ներկայացուցիչներին: Ահավասիկ, Մաղաքիա

---

[114] Տե՛ս BOA. İ.AZN. nr. 113/1331. N/02.
[115] Ազգային ժողովը ցաւով կ՚ընդունի Սրբազան Պատրիարքին հրաժարականը. 1ի դէմ 44 քուէով. Ընտրութիւն Քաղ. ժողովի անդամներու. Նոր Կրօնական ժողովը, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 20 Յուլիս: Հմմտ.՝ Ս. Պատրիարքին հրաժարականէն ետք Կրօնական ժողովին վաւերացումը, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 21 Յուլիս:
[116] Տե՛ս նույն տեղում:

արքեպիսկոպոս Օրմանյանը Զավեն եպիսկոպոսին ուղղված՝ 1913 թ. հուլիսի 20-ի նամակում մի դեպք է հիշատակում, երբ Ռոդոսթոյի կոտորածներից փրկված մի խումբ հայեր Արշարունի պատրիարքին օգնության խնդրանքով դիմելիս արժանանում են անտարբեր վերաբերմունքի[117]: Նա նաև նշում է. «Արշարունիին վարկաբեկութեան պատճառներէն մէկն ալ այս էր. գացած տեղերը եւ մօտեցած անձերը չխտրել, ընտանեկան զուարճութեանց մասնակցիլ, դեղարաններ եւ պէրպէրի խանութներ ատեն անցնել, յարմար անյարմար տեղեր մտնել»[118]: Իր հերթին, բանաստեղծ Վահան Թեքեյանը, որն այդ տարիներին գործունյա կերպով ներգրավված էր Կ. Պոլսի ազգային-հասարակական կյանքում, Զավեն պատրիարքին ուղղված՝ 1913 թ. նոյեմբերի 17-ի նամակով հայտնում է, որ Արշարունի սրբազանի «անհնարին դարձած պաշտօնավարութեանը» վերջ դնելու նախաձեռնությունը եղել է իր և Գրիգորիս վարդապետ Պալաքյանի ծրագիրը[119]:

Ըստ էության, պատրիարքական պարտականությունները կատարելիս Արշարունի սրբազանի թույլ տված սխալներն ու թերացումները, ինչպես և երիտթուրքական կառավարության հետ ունեցած հարաբերություններում դիվանագիտական ճկուն քաղաքականության պակասը, համայնքի աշխարհիկ և հոգևոր ներկայացուցիչներին ստիպեցին միջոցներ ձեռնարկել:

Նրա հրաժարականից հետո՝ հուլիսի 26-ին, Ընդհանուր ժողովի նիստին պատրիարքական տեղապահ ընտրվեց Գաբրիել եպիսկոպոս Ջևահիրջյանը, որը պետք է զբաղվեր ինչպես պատրիարքարանի, այնպես և պատրիարքի ընտրության

---

[117] Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 7:
[118] Նույն տեղում, էջ 8, 9:
[119] Տե՛ս՝ նույն տեղում, էջ 9, 10:

կազմակերպական խնդիրներով[120]: Հարկ է նշել նաև հայկական բարենորոգումների հարցով Զնահիրճյանի մի շարք հանդիպումները եվրոպացի դեսպանների հետ[121]:

Հայկական ազգային շրջանակները մեծ հույս էին փայփայում, որ բարենորոգումները շուտով կյանքի կկոչվեն, ուստի ընդհանուր տրամադրություն կար պատրիարքական աթոռին տեսնելու հայաբնակ նահանգների առաջնորդներից մեկին, որը «երկար ատեն գաւառը գտնուած լինելով` բուն ժողովուրդը մօտէն ճանչնար եւ անոր պահանջներուն եւ հոգեբանութեան տեղեակ ըլլար»[122]: Ընդ որում, նոր պատրիարքի ընտրության հարցում առաջնահերթությունը տրվելու էր այն երիտասարդ եկեղեցականին, որն իր փորձառությամբ և գիտելիքներով կնպաստեր թե՛ պատրիարքարանի լիակատար գործունեության իրականացման և թե՛ հայկական բարենորոգումների ծրագրի ժողովներն առաջնորդելու ուղղությամբ: Այդպիսի թեկնածուներ էին նկատվում Զավեն եպիսկոպոս Տեր-Եղիայանը (Սղերդ), Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանը (Կ. Պոլիս), Գաբրիել եպիսկոպոս Զնահիրճյանը (Կ. Պոլիս), Սմբատ եպիսկոպոս Սաադեթյանը (Ադաբազար) և Թորգոմ եպիսկոպոս Գուշակյանը (Պարտիզակ)[123]:

Սակայն վերոհիշյալ բոլոր թեկնածուների մեջ առանձնանում էր Զավեն Տեր-Եղիայանը: Նրան իր անվերապահ վստահությունն էր հայտնել Օրմանյան սրբազանը. «Ես բաւական մաս մը ունիմ այդ գործին մէջ ամէնուն միտքը շինելով, եւ բոլոր անոնց

---

[120] Տե՛ս Ճէվահիրճեան սրբազան պատր. տեղապահ, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 20 Յուլիս: Հմմտ.` BOA. BEO. nr. 4204/315299 lef 2.
[121] Տե՛ս Güllü R.E., նշվ. աշխ., էջ 419. Հմմտ.` Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 27, 28:
[122] Փափազեան Վ., Հայկական Բարենորոգումները (1912-1914), «Վէմ», Փարիզ, 1934, Դ, էջ 73:
[123] Տե՛ս Պատրիարքական ընտրելեաց հնգանուն ցուցակը, «Հեռաձայն», Կ. Պոլիս, 1913, 29 Օգոստոս:

խօսելով, որոնք ինծի կը հարցնէին, թէ նորերէն յարմարագոյնը ո՞վ է: Ամէնուն քու անունդ տուած, եւ ցուցուցած եմ իբրեւ վարչագէտ, քաղաքագէտ, լեզուագէտ, վարուիլ գիտցող, աշխատող, արթուն եւ պարագաներ ուսումնասիրող»[124],- գրում է Օրմանյանը Զավեն եպիսկոպոսին: Մինչդեռ վերջինիս անունը շարունակում էր անհայտ մնալ պոլսահայ մտավորականության և ազգային կուսակցությունների լայն շրջանակների համար[125]: Ավելին, նրա մինչպատրիարքական շրջանի կենսագրության վերաբերյալ տեղեկությունները բավականին սուղ են և հաճախ ոչ ճշգրիտ[126]: Ուստի, հարկ ենք համարում անդրադառնալ նրա կենսագրական ընդհանուր տվյալներին, քանի որ դրանք վճռորոշ դեր ունեցան Զավեն եպիսկոպոսին պատրիարքական թեկնածու առաջադրելու հարցում:

Զավեն Տեր-Եղիայանը ծնվել է 1868թ. սեպտեմբերի 8-ին, Միջագետքի Մոսուլ (Մուսուլ) քաղաքում, սղերդցի Տեր Ավետիս քահանայի ընտանիքում: Քանի որ Մոսուլի բնակչությունը հիմնականում բաղկացած էր արաբներից, և տիրապետող լեզուն եղել է արաբերենը, փոխադրվել է Բաղդադ և

---

[124] Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 8:

[125] Տե՛ս Կողբացի Ե., Ընդդէմ ազգային աղանդաւորաց, «Ժեռաձայն», Կ.Պոլիս, 1913, 29 Օգոստոս:

[126] Զավեն պատրիարքի մասին լույս տեսած մի շարք կենսագրականներում թույլ են տրվել բազում սխալներ՝ կապված տեղի և թվականի հետ: Սակայն տվյալ դեպքում առաջնային սկզբնաղբյուր համարելով Զավեն պատրիարքի հուշագրությունը, որը ևս զերծ չէ որոշակի անճշտություններից, մյուս աղբյուրների հետ համադրմամբ փորձել ենք համառոտ ներկայացնել վերջինիս ընդհանուր կենսագրությունը մինչև Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք ընտրվելը: Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 1-4: Օրմանեան արք. Մ., Ազգապատում, Գ. Հատոր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 5498, 5499: Կերտող Ս., Հայ առաքելական եկեղեցին առաջին աշխարհամարտի տարիներին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2003, էջ 54: Անդրանիկ կոնդակներ սահմանադրական շրջանի պատրիարքներու, հրատ. պատրաստեց Սերովբեան սրկ. Վ., Ստանպուլ, 2013, էջ 165: Ազգ. Ժողովին հանդիսաւոր նիստը, Զաւէն Եպս.՝ Պատրիարք ընտրուած 82ին 64 քուէովը, «Ժեռաձայն», Կ. Պոլիս, 1913, 31 Օգոստոս: Güllü R. E., նշվ. աշխ., էջ 420-421; Pamukciyan K., Biyografileriyle Ermeniler, C. IV, İstanbul, 2003, s. 210. Tuğlacı P., Tarih Boyunca Batı Ermenileri, Cilt: III, (1891-1922), İstanbul, 2009, s. 597.

նախնական կրթությունն ստացել Բաղդադի ազգային վարժարանում՝ աշակերտելով նշանավոր վարժապետ Միհրան Սվաճյանին: Դպրոցն ավարտելուց հետո՝ 1888-1890 թթ., վերջինիս հորդորով զբաղվել է ուսուցչությամբ: 1890-1895 թթ. ուսանել է Արմաշի նորաբաց դպրեվանքում: 1892 թ. ձեռնադրվել է սարկավագ: 1895 թ. հունիսի 18-ին Մաղաքիա Օրմանյանի կողմից՝ օծվել աբեղա: Ավարտաճառի թեման եղել է Յովհան Օձնեցի կաթողիկոսի գործունեությունը: 1896 թ. մայիսի 26-ին ձեռնադրվել է վարդապետ: Օրմանյան Սրբազանի առաջարկությամբ մեկ տարի ուսուցչություն է արել դպրեվանքում:

Օսմանյան բանկի գրավումը և Կ. Պոլսում դրան հաջորդած հայերի ջարդը վտանգավոր իրադրություն ստեղծեցին Արմաշի դպրեվանքի հետագա ճակատագրի առնչությամբ: Դպրեվանքի վանահայր և տեսուչ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը և ներքին տեսուչ Եղիշե վարդապետ Դուրյանը հարկադրված հեռացան Կ. Պոլիս: Յին միաբաններից Արմաշում մնաց Մամբրե վարդապետ Նալբանդյանը, որին հանձնվեց փոխանորդության պաշտոնը, իսկ երիտասարդներից մնացին Զավեն և Աղան վարդապետները, որոնց համապատասխանաբար վստահվեցին մատակարարության գործի և ներքին տեսչի պարտականությունները: Կարճ ժամանակ անց, երբ Կ. Պոլսի Յայոց «երկաթյա» պատրիարք Մատթևոս արքեպիսկոպոս Իզմիրլյանի աքսորից հետո պատրիարք ընտրվեց Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, վերջինիս ջանքերով Արմաշի դպրեվանքը փրկվեց վերջնական կործանումից: 1897 թ. Զավեն վարդապետը մեկնեց Կ. Պոլիս և պատրիարքի կարգադրությամբ 1897-1898 թթ. քարոզչական գործունեություն իրականացրեց Սամաթիայի Ս. Գևորգ և Խասգյուղի Ս. Ստեփանոս եկեղեցիներում՝

միաժամանակ վարելով Օրմանյան պատրիարքի անձնական քարտուղարի պաշտոնը:

Ազգային վարչության որոշմամբ Զավեն վարդապետը նշանակվել է Կարինի առաջնորդական տեղապահ, իսկ 1901 թ.՝ ընտրվել Կարինի հոգևոր թեմի առաջնորդ: «Օսմանյան կայսրությանը մատուցած բարեխիղճ ծառայության համար» տեղական իշխանությունների կողմից 1905 թ. պարգևատրվել է սուլթան Աբդուլ Մեջիդի անվան շքանշանով: 1906 թ. հրաժարվելով թեմական առաջնորդի պաշտոնից՝ Զավեն վարդապետը վերադարձել է Կ. Պոլիս, ստանձնել Յենիքյոյի Ս. Աստվածածին և Մաքրըքյոյի (Բաքըրքյոյ) Ս. Ծնունդ Ս. Աստվածածին եկեղեցիների քարոզչի պաշտոնը: Ազգային վարչության կողմից 1908 թ. նշանակվել է Վանի առաջնորդական տեղապահ: 1909 թ. ընտրվել է Դիարբեքիրի հոգևոր թեմի առաջնորդ, որտեղ պաշտոնավարել է մինչև իր պատրիարքական ընտրությունը: 1910 թ. սեպտեմբերի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ամենայն հայոց կաթողիկոս Մատթևոս Իզմիրլյանի կողմից ձեռնադրվել է եպիսկոպոս: 1913 թ. սեպտեմբերի 24-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի կոնդակով նրան շնորհվել է արքության պատիվ: Տիրապետել է հայերենին, օսմաներենին, արաբերենին, ֆրանսերենին, անգլերենին:

Այս հարուստ փորձառության մեջ հատկանշական է հայաբնակ մի շարք գավառներում (Էրզրում, Վան, Դիարբեքիր) Զավեն Տեր-Եղիայանի պաշտոնավարությունը, որը, ինչպես վերը նշեցինք, կարևոր երաշխիք էր Կ. Պոլսի Ազգային ժողովի խմբակցությունների վստահությունը շահելու համար: Սակայն Հայ հեղափոխական դաշնակցություն և Սահմանադրական Ռամկավար կուսակցությունների դիրքորոշումները

պատրիարքական թեկնածուի հարցում չէին համընկնում, ինչը պարզորոշ դարձավ վերջնական քվեարկության արդյունքում[127]: Առաջինները պաշտպանում էին Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի թեկնածությունը, իսկ Սահմանադրական Ռամկավար կուսակցությունը որոշեց պահպանել չեզոքություն[128]:

Այսպիսով, 1913 թ. սեպտեմբերի 12-ին Գում Գափուի մայր եկեղեցում պատրիարքական տեղապահ Գաբրիել եպիսկոպոս Ջևահիրջյանի նախագահությամբ տեղի ունեցավ նոր պատրիարքի ընտրությունը[129]: Քվեարկությունը, որին մասնակցեց Ընդհանուր ժողովի 82 պատգամավոր, արձանագրեց հետևյալ արդյունքները.

Տ.Զավեն եպս.Եղիայան՝ 64,

Տ.Եղիշե արք.Դուրյան՝ 11,

Տ.Ստեփան արք.Յովակիմյան՝ 1,

Ձեռնպահ՝ 6:

Փաստորեն, ձայների գերակշիռ մեծամասնությամբ Դիարբեքիրի հոգևոր թեմի առաջնորդ Զավեն եպիսկոպոս Տեր-Եղիայանն ընտրվեց Կ.Պոլսի հայոց 79-րդ պատրիարք[130]:

Ամփոփելով՝ նշենք, որ Զավեն պատրիարքի ընտրությունը կարևոր հանգրվան եղավ նախևառաջ համախմբելու արևմտահայության տարբեր հատվածներին՝ միաժամանակ իր ուսերին վերցնելով նաև պոլսահայ համայնքի քաղաքական ղեկավարությունը: Առաջին համաշխարհային պատերազմի հորձանուտում հայտնված հայության ազգային շահերի պաշտպանության առումով թե՛

[127] Տե՛ս Օտեան Ե., Վաղուան պատրիարքը, «Յեռաձայն», Կ.Պոլիս, 1913, 28 Օգոստոս:
[128] Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 10:
[129] Տե՛ս Ազգ. Ժողովին հանդիսաւոր նիստը, Զաւէն Եպս.՝ Պատրիարք ընտրուած 82ին 64 քուէովը, «Յեռաձայն», Կ.Պոլիս, 1913, 31 Օգոստոս:
[130] Տե՛ս BOA. İ. MMS. nr. 170/1331.L/31. Յմմտ.՝ BOA. MV. nr. 231/286.

համայնքային, թե՛ պետական մարմինների հետ նրա վարած քաղաքականությունը էական նշանակություն ունեցավ հայոց պատմության համար: Հատկապես պետք է ընդգծել Զավեն պատրիարքի՝ դիվանագիտական կարողություններով օժտված ազգային-եկեղեցական գործչի հանգամանքը, ինչն անկյունաքարային կարևորություն ձեռք բերեց տվյալ ժամանակաշրջանում օսմանյան խորհրդարանի ընտրություններին հայազգի պատգամավորների ներգրավման և հայկական բարենորոգումների շուրջ Հայոց ազգային պատվիրակության ու օսմանյան իշխանությունների հետ բանակցություններն առաջնորդելու տեսանկյունից, որոնց առանձին կանդրադառնանք հետագա ենթագլուխներում:

## ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

### Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին

### 2.1. Կոստանդնուպոլսի հայոց նորընտիր պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի շրջայցն Օսմանյան կայսրության հայաբնակ գավառներում

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի պաշտոնում Զավեն Տեր-Եղիայանն իր գործունեությունն սկսեց կայսրության հայաբնակ գավառներ կատարած շրջայցով: Պատրիարքական տեղապահ Գաբրիել արքեպիսկոպոս Ջևահիրջյանի՝ Զավեն եպիսկոպոսին ուղղված

պաշտոնական հեռագրից տեղեկանում ենք, որ Ազգային կենտրոնական վարչությունը Զավեն եպիսկոպոսին հորդորում էր նախքան Կ. Պոլիս վերադառնալը շրջել հայաբնակ գավառներով (Բիթլիս, Մուշ, Էրզրում, Տրապիզոն), անձամբ ծանոթանալ տեղի հայության ներկա վիճակին[131]: Իր հերթին, ներքին գործերի նախարարությունը պաշտոնական հեռագրով հրահանգել էր Դիարբեքիրի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթների իշխանություններին պատշաճ ընդունելություն ցուցաբերել նորընտիր պատրիարքին[132]: Իրականում օսմանյան իշխանությունները վերաբերմունքի տեսանկյունից կեղծ պատրանքներ էին ստեղծում հայկական շրջանակներում, մինչդեռ, ըստ էության, այդ միջոցառումները կրում էին բացառապես ձևական բնույթ:

Շուտով Ընդհանուր ժողովի նախաձեռնությամբ նորընտիր պատրիարքի ընդունելության կապակցությամբ կազմվեց հանձնաժողով, որի աշխատանքներին մասնակցեցին նաև ազգային-հասարակական մի շարք կազմակերպություններ[133]:

Դիարբեքիրից հեռանալուց առաջ Զավեն եպիսկոպոսի առաջնորդությամբ քաղաքի մայր եկեղեցում մատուցված պատարագին հաջորդեց պատրիարքի հրաժեշտի արարողությունը, որի ժամանակ ներկաները բարձր գնահատեցին իրենց առաջնորդի զգալի ներդրումը թե՛ համայնքի և թե՛ առաջնորդարանի կյանքում: Զավեն սրբազանին եկան հրաժեշտ տալու կուսակալը, քաղաքապետը և զինվորական հրամանատարը, ինչպես նաև քաղաքի հույն, ասորի, կաթոլիկ, բողոքական և իսլամական

[131] Տե՛ս BOA. DH.İD. nr. 113/53 lef 3.
[132] Տե՛ս BOA. DH.İD. nr. 113/53 lef 1.
[133] Տե՛ս «Ժամանակ», Կ.Պոլիս, 1913, 28 Սեպտեմբեր:

առաջնորդները[134]: Սեպտեմբերի 24-ին փողոցներում խմբված անհամար բազմությունը հայրենասիրական երգերի և ծափողջույնների ներքո սրբազանին ճանապարհեց դեպի Սղերդ[135]: Զավեն պատրիարքն իր հուշերում գրում է, որ Սղերդ այցելելու որոշումը մեծ ոգևորություն էր պատճառել իրեն, քանի որ ինքը, լինելով սղերդցի ծնողների զավակ, մանկության մի զգալի մասն անցկացրել էր այդ քաղաքում[136]:

Հոկտեմբերի 1-ին նաժամանեց Սղերդ, որտեղ նրան ընդառաջ եկավ քաղաքի կառավարիչ Մուսթաֆա Աբդուլ-Խալիքը՝ մի խումբ պաշտոնյաների, իսլամական առաջնորդների և քրիստոնյա բնակիչների ուղեկցությամբ[137]: Այնուհետև ի պատիվ նորընտիր պատրիարքի՝ Գևորգ վարդապետ Նալբանդյանի առաջնորդությամբ տեղի Ս. Թադևոս-Ս. Բարդուղիմեոս եկեղեցում մատուցվեց սուրբ պատարագ:

Հոկտեմբերի 4-ին Զավեն սրբազանը մեկնեց Բիթլիս, որտեղ նրան դիմավորեցին տեղի հոգևոր թեմի առաջնորդ Սուրեն ծայրագույն վարդապետ Գալեմյանը, ինչպես նաև տեղական իշխանությունների կողմից ուղարկված մի քանի երկրորդական պաշտոնյաներ և կուսակալության սուրհանդակը[138]: Այս քայլը մեծ վրդովմունք

---

134 Տե՛ս Պարոնեան Յ. Գ., Նորընտիր պատրիարքին մեկնումը Տիգրանակերտէն. Կուսակալը, քաղաքապետը եւ զինուորականներ ողջերթի կ'երթան. Իթթիհատական պետի մը եւ դաշնակցականի մը ճառերը, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 3 Հոկտեմբեր:

135 Հարկ է նշել, որ ամսաթվերը ներկայացնել իս առաջնայինենք համարել ինչպես հայկական մամուլում տեղ գտած հայկական առաջնորդարաններից և մասնավոր թղթակիցներից Կ. Պոլսի հայոց պատրիարքարան ուղարկված հաղորդագրությունները, այնպես էլ տվյալ նահանգներից ներքին գործերի նախարարության ուղարկված հեռագրերը: Ինչ վերաբերում է Զավեն պատրիարքի հուշագրությանը, ապա այստեղ առկա են որոշակի անճշտություններ:

136 Տե՛ս Զաւէն Արքեպս, նշվ. աշխ., էջ 15, 16:

137 Տե՛ս BOA. DH.İD. nr. 113/53 lef 6.

138 Տե՛ս նույն տեղում, lef 10.

պատճառեց Զավեն պատրիարքին, որը, հակառակ իր այն սովորության, որ քաղաք մտնելիս նախապես այցելում էր կուսակալին, անմիջապես քայլերն ուղղեց դեպի Ս. Կարմրակ եկեղեցի, այնուհետև՝ ազգային առաջնորդարան[139]: Ըստ էության, խուսափելով կառավարության խիստ արձագանքից, կուսակալը համայնքի մեծամեծերից մեկի՝ Կարապետ Խաչմանուկյանի միջոցով ճաշի հրավիրեց պատրիարքին[140]: Զավեն պատրիարքը դժվարությամբ համաձայնվեց և նահանգապետի տանը կազմակերպված ճաշկերույթին ստիպված եղավ լսել վերջինիս կեղծ արդարացումները, թե «իրեն ընդառաջ չգալու պատճառը քաղաքի մոլեռանդ շեյխերի ազդեցությունն էր»[141]: Հոկտեմբերի 5-ին պատրիարքին այցելության եկավ նաև ռուսական հյուպատոսը[142]: Իսկ հաջորդ օրը երեկոյան մայր եկեղեցում տեղի ունեցած քարոզի ժամանակ նա ներկայացրեց արտագաղթի պատճառած վնասներն ու կարևորեց համայնքի կյանքում ազգային համերաշխության միասնական դրսևորումը[143]:

Հոկտեմբերի 13-ին Զավեն պատրիարքը ճանապարհ ընկավ դեպի Մուշ, որտեղ նրան դիմավորելու եկածների թվում էին Մուշի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Խարախանյանը, Ս. Կարապետ վանական համալիրի վանահայր Վարդան վարդապետ Հակոբյանը, դաշնակցական գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանը և Մազհար փաշան: Հատկանշական է, որ Մազհար փաշան ներքին գործերի նախարարության ուղղված հեռագրում սրբազանի հասցեին բացասական կերպով էր արտահայտվել և նրան բնութագրել էր որպես

---

139 Տե՛ս նույն տեղում, էջ 17:
140 Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 17:
141 Նույն տեղում:
142 Տե՛ս Հայորդի, Ս. Պատրիարքը Բաղէշի մէջ. Կուսակալը եւ ռուս հիւպատոսը հացկերոյթ կու տան ի պատիւ Պատրիարքին, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 10 Հոկտեմբեր:
143 Տե՛ս նույն տեղում:

«գործնական անձ»[144]: Զավեն պատրիարքը Մուշում երկօրյա այցի ընթացքում հանդիպեց կուսակալի հետ, այնուհետև հոգևոր դասի ներկայացուցիչների ուղեկցությամբ ուղևորվեց մայր եկեղեցի: Այդ կապակցությամբ հոդվածագիրը գրում է. «... թէ՛ փողոցները և թէ՛ տանիքներու վրայ ասեղ ձգելու տեղ չկար, հարս, աղջիկ, կին, տղայ, ամենքն ալ եկած էին»[145]: Երկրորդ օրը Մշո դաշտում նրա պատվին կազմակերպվեց զորահանդես, որին ներկա էին կուսակալը, քաղաքի կառավարիչը, զինվորական և աշխարհիկ դասի երևելի ներկայացուցիչներ: Սրբազանն այցելեց նաև Ս. Կարապետ վանական համալիր, այնուհետև ճանապարհը շարունակեց դեպի Բուլանըխ, Մանազկերտ, Խնուս, Բասեն և Կարին[146]:

Զավեն պատրիարքը, ինչպես վերը նշվեց, 1901-1905 թթ. եղել էր Կարինի հոգևոր թեմի առաջնորդը, ուստի նրան դիմավորելու եկած կուսակալից, կառավարական պաշտոնյաներից և զինվորականներից զատ պատահական չէր հատկապես ժողովրդի խանդավառությունը[147]: Հոկտեմբերի 26-ին Կարին հասնելուն պես տեղի առաջնորդարանը հեռագիր ուղարկեց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ե Սուրենյանցին՝ խնդրելով արքության տիտղոս շնորհել Զավեն եպիսկոպոսին[148]:

Հայ գրերի գյուտի 1500-ամյակի և հայ տպագրության 400-ամյակի առթիվ Զավեն սրբազանը Կարինի մայր եկեղեցում մատուցեց պատարագ: Կարինի թեմի հոգևոր առաջնորդ Սմբատ եպիսկոպոս Սաադեթյանի հովանավորությամբ նորընտիր

---

[144] Տե՛ս Güllü R. E., նշվ. աշխ., էջ 423-424:

[145] Նորընտիր Ս. Պատրիարքը Մուշի մէջ. Կառավարիչը եւ զինուորականներ ընդառաջ կ'երթան իթթիհատականներու եւ կառավարութեան հացկերոյթները ի պատիւ Պատրիարքին. Պիթլիսի կուսակալը եւս ողջերթի կ'երթայ, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 17 Հոկտեմբեր:

[146] Տե՛ս BOA. DH.İD. nr. 113/53 lef 11.

[147] Տե՛ս Ս. Պատրիարքը Էրզրումի մէջ, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 30 Հոկտեմբեր:

[148] Տե՛ս Զաւէն Արքեպս, նշվ. աշխ., էջ 21:

պատրիարքը հնարավորություն ունեցավ առանձին հանդիպելու կուսակալի, քաղաքի հյուպատոսների և համայնքի նշանավոր անձանց հետ:

Զավեն պատրիարքը Կարինից մեկնեց Բաբերդ[149], Գյումուշհանե, այնուհետև նոյեմբերի 11-ին հասավ Տրապիզոն, որտեղ նրան սպասում էին Ազգային կենտրոնական վարչության հատուկ հրահանգով ուղարկված Կրոնական ժողովի անդամ Մաղաքիա եպիսկոպոս Տերունյանը և Քաղաքական ժողովի անդամ Հարություն Չեքին[150]: Ժամանման հաջորդ օրը Տրապիզոնի քաղաքապետարանի կողմից կազմակերպվեց ընդունելություն, որին ներկա էր նաև Տրապիզոնի նահանգապետ Բեքիր Սամին, ով Զավեն սրբազանի՝ Վանում պատրիարքական փոխանորդի պաշտոնավարության տարիներին զբաղեցնում էր Վանի կուսակալի պաշտոնը: Նահանգապետն իր խոսքում «կարևորեց» օսմանյան կառավարության ջանքերը հայկական բարենորոգումների հարցի առնչությամբ[151]: Իսկ «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ Օմեր Նաջի Բեյն իր ելույթում հավելեց, որ «հարկ չկա որևէ կարևորություն տալ դրսից եկող սուտ խոստումներին և բարենորոգումների հարցը պետք է դիտարկել իբրև օսմանյան պետության «հայրենասիրական պարտականութիւն»»[152]: Իր պատասխան ելույթում Զավեն պատրիարքը հերթական անգամ հայտնեց հայերի հավատարմությունը օսմանյան կառավարությանը»[153]: Պատրիարքն

---

149 Տե՛ս Ս. Պատրիարքը, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 25 Հոկտեմբեր:

150 Տե՛ս Ս. Պատրիարքը Տրապիզոնի մէջ, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 31 Հոկտեմբեր: Հմմտ.՝ Ս. Պատրիարքին ի պատիւ, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 4 Նոյեմբեր:

151 Տե՛ս Ermeni Patrik-i Cedidi, Tanin, İstanbul, 14 Kasım 1913: Հմմտ.՝ Ermeni Patrik-i Cedidi, Tanin, İstanbul, 17 Kasım 1913. Güllü R. E., նշվ. աշխ., էջ 425:

152 Տե՛ս Ս. Պատրիարքին ի պատիւ հացկերոյթ Տրապիզօնի մէջ. Կուսակալին եւ Էօմեր Նաճի պէյի ճառերը. Հայկական բարենորոգումները, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 1 Նոյեմբեր:

153 Տե՛ս նույն տեղում:

առանձին հանդիպում ունեցավ նաև Տրապիզոնի առաջնորդական տեղապահ Գևորգ ծայրագույն վարդապետ Թուրյանի հետ: Դժվար չէ նկատել, որ թե՛ պատրիարքը և թե՛ օսմանյան իշխանությունները պահպանում էին արտաքին պատշաճությունը, թեև փոխադարձ անվստահությունն օրեցօր աճում էր:

Կ. Պոլիս հասնելու համար ներքին գործերի նախարարությունը նորընտիր պատրիարքին տրամադրել էր առանձին շոգենավ, մինչդեռ Ռուսական կայսրության և Ավստրո-Հունգարիայի հյուպատոսները պատրիարքին առաջարկում էին մեկնել իրենց շոգենավով[154]: Զավեն պատրիարքն ավելորդ ուշադրությունից խուսափելու նպատակով ստիպված էր ընդունել օսմանյան կառավարության առաջարկը և նոյեմբերի 19-ի առավոտյան ճանապարհ ընկնել դեպի Կ.Պոլիս[155]:

Նրան ուղեկցում էին Ազգային կենտրոնական վարչության անդամները, Արաբկիրի նախկին առաջնորդ Գարեգին վարդապետ Խաչատուրյանը, Տրապիզոնի առաջնորդական տեղապահ Գևորգ վարդապետ Թուրյանը, Սամսոնի առաջնորդ Համազասպ վարդապետ Եղիսեյանը, երիտթուրքական կուսակցության անդամ Ահմեդ Աղա Կովկասցին և Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարո):

Նախատեսվածի պես նոյեմբերի 20-ին «Գյուլջեմալ» շոգենավը պետք է հասներ Բոսֆորի նեղուցում գտնվող Անադոլու Քավաքի նավահանգիստ, որտեղ պատրիարքին դիմավորելու էին թե՛ կառավարության ներկայացուցիչները և թե՛ պատրիարքական և համայնքային կառույցների երևելի դեմքեր, կուսակցական գործիչներ,

[154] Տե՛ս Ermeni Patrik-i Cedidi, Tanin, İstanbul, 19 Kasım 1913.
[155] Տե՛ս BOA. BEO. nr. 4270/320227. Հմմտ.՝ BOA. MV. nr. 183/8.

ազգային երեսփոխաններ և լրագրերի խմբագիրներ[156]: Կենտրոնական ազգային վարչությունը և «Միացեալ ընկերութիւն հայոց» բարեգործական-կրթական կազմակերպությունն առանձին շոգենավեր էին վարձել, որպեսզի ընդառաջ գնային պատրիարքին Անադոլու Քավաքի նավահանգստում[157]: Այս առիթով նրանց միջև ծագեցին որոշակի տարաձայնություններ, քանի որ Միացյալ ընկերությունը ցանկանում էր պատրիարքին Գում Գափուի նավահանգիստ հասցնել իր շոգենավով՝ «որպես երախտագիտության նշան Միացյալ վարժարանների փոխտեսուչի պաշտոնում նրա կատարած ծառայությունների համար»[158]: Սակայն պատրիարքարանը կտրականապես մերժել էր այդ առաջարկը՝ նշելով, որ հայության գլխավոր և պաշտոնական մարմինը համարվում է Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը, հետևաբար նրան է պատկանում հայոց պատրիարքին փոխադրելու իրավունքը[159]:

Այսպիսով, Անադոլու Քավաքի նավահանգստում հայկական պատվիրակությունից զատ նրան կեղծ հանդիսավորությամբ դիմավորեցին նաև ներքին գործերի նախարարի խորհրդական Ալի Մյունիֆ բեյը, ոստիկանապետ Ազմի բեյը, արդարադատության և դավանանքների նախարարության կրոնական տեսուչ Բեհա բեյը և կայսերական պալատի արարողապետ Էքրեմ բեյը[160]: Նույն օրն արևելյան վիլայեթներում տիրող իրավիճակի վերաբերյալ

---

156 Տե՛ս Ս. Պատրիարքը հինգշաբթի կուգայ, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 5 Նոյեմբեր: Հմմտ.՝ Ս. Պատրիարքը հինգշաբթի հոս է, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 6 Նոյեմբեր:

157 Տե՛ս Ս. Պատրիարքին ընդունելութեան համար, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 2 Նոյեմբեր:

158 Ս. Պատրիարքը, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, Հոկտեմբեր 6:

159 Տե՛ս նույն տեղում:

160 Տե՛ս Նորընտիր պատրիարքին ժամանումը. Փառաւոր ընդունելութիւն. Արտակարգ պատիւներ Նորին Բարձր Սրբազնութեան. Երկու շոգենաւեր ընդառաջ կ'երթան. Զաւէն Արքեպիսկոպոսի յայտարարութիւնները մեր խմբագրին. Առաջին քարոզը. Շնորհաւորական այցելութիւններ, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 8 Նոյեմբեր:

հայկական «Ժամանակ» օրաթերթի թղթակիցներից մեկը հարցազրույց է ունեցել պատրիարքի հետ, ով, խոսելով հայության թշվառ (հատկապես Բիթլիսի նահանգում) վիճակի մասին, նշել է, որ «Ժողովուրդը ակնդէտ կը սպասէ այն վայրկեանին ուր պիտի համոզուի թէ իր վիճակը պիտի լաւանայ, ասոր սպասողը միայն հայը չէ, թուրք և քիւրտ ճնշուող տարրը, նոյնպէս պաշտոնեաները հաւասարապէս կը սպասէն»[161]: Նա հույս է հայտնել, որ քրիստոնյա և իսլամադավան բնակչությունը «փափաքող են եղբայրաբար ապրելու», ուստի «այդ հարաբերութիւնները կախում ունեն Կեդրոնէն»[162]:

Առջևից գնում էին երկու շոգեմակույկները, որոնցից մեկում ոստիկանապետն էր, մյուսում՝ գործակատար Քամեր էֆենդին, իսկ նրանց հետևից գալիս էին Վարչության և Միացյալ ընկերության շոգենավերը: Կեսօրին նրանք ժամանեցին Գում Գափուի նավամատույց: Երբ շոգենավերը մոտեցան նավահանգստին, Գում Գափուի հայկական բոլոր եկեղեցիների զանգերը միաժամանակ սկսեցին ղողանջել: Այստեղ նրան դիմավորեցին պատրիարքարանի ներկայացուցիչները, և պատրիարքական տեղապահ Գաբրիել եպիսկոպոս Ջևահիրջյանը նորընտիր պատրիարքին հանձնեց շուրջառը:

Զինվորականների շքախմբի ուղեկցությամբ և ժողովրդական լայն զանգվածների միջով պատրիարքն ուղևորվեց դեպի առաջնորդանիստ Ս. Աստվածածին մայր եկեղեցի: Նա իր քարոզը սկսեց այն ցավալի իրականության նկարագրությամբ, որին նա ականատես եղավ կայսրության զանազան

[161] Ս. Պատրիարքին խօսքերը մեր խմբագրին, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 8 Նոյեմբեր: Սույն հարցազրույցը արտատպվել է «Միություն և առաջադիմություն» կուսակցության «Tanin» օրաթերթում: Տե՛ս Yeni Patrikle Mülakat, Tanin, İstanbul, 22 Kasım 1913:
[162] Նույն տեղում:

հայաբնակ գավառներում. «Այն ճանապարհին, ուրկէ անցայ, մերկ մարմինով, ոտքերնին բոպիկ եղբայրներ տեսայ և թշվառութենէն զատ ոչ մէկ բանի հանդիպեցայ հոն. գաւառի մեր եղբայրը կ'ուզէ իր ապրուստը հայթայթել խաղաղօրէն, բայց տառապանքէ, արցունքէ զատ ոչ մէկ բան ձեռք կը բերէ»[163]: Զավեն պատրիարքը վստահեցրեց, որ այն ծանր պատասխանատվությունը, որ ընկած է իր ուսերին, պետք է ծառայեցնի ի նպաստ հայության երազանքների իրականացման: Նա նաև ավելորդ չհամարեց շնորհակալություն հայտնել օսմանյան կառավարությանը՝ իր անվտանգությունն ապահովելու համար:

Հաջորդ օրը Գում Գափուի մայր եկեղեցում տեղի ունեցավ Ազգային ընդհանուր ժողովի նիստը, որը նախագահեց պատրիարքական տեղապահ Գաբրիել եպիսկոպոս Ջևահիրչյանը, որը նորընտիր պատրիարքին հանդիսավորությամբ հանձնեց պատրիարքական գավազանը: Ապա դրան հաջորդեց Զավեն պատրիարքի սահմանադրական ուխտի կատարումը[164]: Հատկանշական է նաև Միացյալ ընկերության ատենապետ Արսեն Շմավոնյանի կողմից պատրիարքին հանձնված՝ ընկերության պատվավոր անդամության վկայագիրը, որից հետո պատրիարքը հուզումով նշել էր. «...եթէ Միացեալը չըլլար, ես այսօր ազգին փառքին պիտի չարժանանայի, ես արաբախօս էի, Միացեալը մտնելով հասկցայ թէ հայ եմ եղեր»[165]:

Հաջորդող օրերին պատրիարքին ողջունելու եկան օտարերկրյա դեսպանների թարգմանիչները, ազգային տարբեր մարմինների անդամներ,

---

[163] Նորընտիր պատրիարքին ժամանումը..., նույն տեղում:
[164] Տե՛ս Ազգ. Երեսփ. Ժողովը. Ս. Պատրիարքին հանդիսաւոր Ուխտը. Ազգ. Ժողովոյ պատմական նիստը, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, Նոյեմբեր 9:
[165] Զաւէն Արքեպս, նշվ. աշխ., էջ 25, 26: Հմմտ.՝ «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 8 Նոյեմբեր:

համայնքային նշանավոր դեմքեր և այլն: Նոյեմբերի 25-ին Մաբեյնի պալատում Զավեն պատրիարքին ընդունեց սուլթան Մեհմեթ Ռեշադը[166]: Պատրիարքն իր ելույթում հայտնեց հայ ժողովրդի հավատարմությունը սուլթանին ու օսմանյան կառավարությանը[167]: Ռեշադը, իր հերթին, բավարարվեց սոսկ շնորհակալությամբ, մինչդեռ իր նախորդներն իբրև պատասխան մի քանի սիրալիր խոսք էին ասում նորընտիր պատրիարքի հասցեին[168]:

Մաբեյնից հեռանալուց հետո պատրիարքն այցելեց մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշային, որը նրան պարգևատրեց Մեջիդիեի Ա կարգի պատվո շքանշանով[169]: Այնուհետև պատրիարքը հանդիպումներ ունեցավ ներքին գործերի նախարար Թալեաթ բեյի ու արդարադատության և դավանանքների նախարար Իբրահիմ Հայրուլլահ բեյի հետ: Այցելեց նաև այն օտարերկրյա դեսպաններին, որոնք առաջին օրերին իր մոտ ուղարկել էին իրենց թարգմանիչներին: Նա այցելություններ կատարեց նաև հունաց պատրիարքարան, բուլղարների էքսարհլըք, իրեաների հահամբաշլըք և բողոքականների ազգապետարան:

Երիտթուրքական կառավարության տարածած հաղորդագրության համաձայն թե՛ Կ.Պոլսում և թե՛ գավառներում հայոց նորընտիր պատրիարքի ընդունելության համար կազմակերպված միջոցառումներն[170] իրենց շուքով գերազանցեցին մինչ օրս կայսրության քրիստոնյա համայնքների ղեկավարներին ցուցաբերած ցանկացած ընդունելությունից՝ նշելով, որ «արդարեւ զօրքը

[166] Տե՛ս BOA. İ.MBH. nr. 13/1331.Z/026. Հմմտ.՝ BOA. BEO. nr. 4233/317421.
[167] Նույն տեղում:
[168] Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 27, 28:
[169] Տե՛ս նույն տեղում:
[170] Տե՛ս Ս. Պատրիարքին ճամբորդութիւնը, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 8 Նոյեմբեր:

ոչ մէկ պարագային չէր մասնակցած ոչ-իսլամ հասարակութեանց կրօնական պետերուն եղած ընդունելութեան»[171]:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ Օսմանյան կայսրության հայաբնակ գավառներում երիտթուրքական իշխանությունների կողմից կազմակերպված՝ հայոց պատրիարքի ընդունելությունը մեկ անգամ ևս փաստում է հայերի նկատմամբ երիտթուրքերի խտրական քաղաքականության հանգամանքը: Ըստ էության, պատրիարքի առաջին հանդիպումները կառավարության ներկայացուցիչների հետ զուրկ էին պետություն-կրոնական համայնք ենթադրվող հարաբերությունների սահմաններից: Այդ հանդիպումները հաճախ ուղեկցվում էին կեղծ հանդիսավորության ցուցադրությամբ, ինչը, վստահաբար, պետք է նախանշեր հետագայում պատրիարքարանի և երիտթուրքական իշխանությունների միջև անվստահության մթնոլորտը:

## 2.2. Օսմանյան խորհրդարանի 1914 թ. ընտրությունները և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանը

1912-1913 թթ. տեղի ունեցած Բալկանյան պատերազմները մեծ հարված հասցրեցին Օսմանյան կայսրությանը: Եվրոպական տիրույթների կորստից զատ խաթարվեց երկրի տնտեսությունը, կրճատվեց բնակչության թվաքանակը և այլն: Այսպես, օրինակ, 1906-1907 թթ. մարդահամարի տվյալներով Օսմանյան

171 Տե՛ս Պատրիարքին ժամանումը եւ Օսմ. Կառավարութեան վերաբերումը, «Ժամանակ», Կ.Պոլիս, 1913, 9 Նոյեմբեր:

կայսրության բնակչության թիվը կազմում էր 20.884.630 մարդ, իսկ 1914 թ. նվազեց՝ դառնալով 18.520.016[172]:

Օսմանյան կայսրության ներքին քաղաքական համակարգը ևս անմասն չմնաց վերաձևումներից: Իշխող «Միություն և առաջադիմություն» ու ընդդիմադիր «Ազատություն և համաձայնություն» կուսակցությունների միջև ընթացող տևական քաղաքական պայքարի արդյունքում հաղթեցին իթթիհատականները, որոնք հնարավորություն ունեցան միանձնյա ղեկավարելու նոր մեջլիսը (խորհրդարան):

Դեռևս 1912 թ. ապրիլի 18-ի ընտրություններից հետո ձևավորված երկրորդ օսմանյան խորհրդարանը նույն թվականի օգոստոսի 5-ին լուծարվել էր: Դրան հաջորդել էին ընտրության նախապատրաստական աշխատանքները, որոնք, վերոհիշյալ արտաքին և ներքին քաղաքական գործընթացներով պայմանավորված, անընդմեջ հետաձգվում էին: Ի վերջո, երիտթուրքական կառավարության 1913 թ. հոկտեմբերի 17-ի որոշմամբ տրվեց ընտրական գործընթացի մեկնարկը[173]:

Բալկանյան պետությունների տարած հաղթանակը նոր հույս էր ներշնչում դարեր շարունակ օսմանյան բռնապետության ներքո ճնշված ոչ մուսուլման ժողովուրդներին (հայեր, հույներ և այլն)՝ վերականգնելու իրենց իրավունքները: Միջազգային հարաբերությունների օրակարգ բերված Հայկական հարցի գլխավոր կռվանն օսմանյան վիլայեթներում հայկական բարենորոգումներ իրականացնելու անհրաժեշտությունն էր, ինչը, բնականաբար, չէր կարող իր էական ազդեցությունը չունենալ նոր

---

172 Տե՛ս Demir F., Osmanlı Devleti'nde II. Meşrutiyet Dönemi Meclis-i Mebusan Seçimleri (1908-1914), İmge Kitabevi Yayınları, 2007, s. 300.

173 Տե՛ս Halıcı Ş., Osmanlı Basınına Yansıyan Şekliyle 1914 Meclis-i Mebusan Seçimlerinde Ermeniler, Tarih, İstanbul Üniversitesi, 2015, Sayı: 62, s. 135. Հմմտ.՝ BOA. DH. UMVM. nr. 61/13 (1332.M.30-).

ձևավորվող օսմանյան խորհրդարանում հայերի ներկայացվածության վրա:

Հարկ է նշել, որ Կ. Պոլսի հունաց պատրիարքարանը, իր հերթին, վճռական էր խորհրդարանում հույն թեկնածուների ընդգրկման հարցում: Մասնավորապես պատրիարքը հայ պաշտոնակից պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի կատարած այցելության ժամանակ հույս էր հայտնել, որ հայոց և հունաց պատրիարքություններն առաջիկա ընտրություններին պետք է դրսևորեն միասնականություն` հաշվի առնելով երկու ժողովուրդների ընդհանուր շահերը[174]:

Ի տարբերություն օսմանյան մեջլիսի 1908 և 1912 թթ. ընտրությունների ժամանակ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ու հայ քաղաքական կուսակցությունների միջև ծագած տարաձայնությունների` հայկական համայնքը որոշում ընդունեց 1914 թ. օսմանյան խորհրդարանի ընտրություններին ներկայանալ միասնական ձևաչափով: Այդ նպատակով հայոց պատրիարքարանի գլխավորությամբ ստեղծվեց «ազգային խմբակցական-ընտրական» հանձնաժողով, որն իր շուրջը համախմբեց հայ քաղաքական բոլոր կուսակցություններին (Հայ հեղափոխական դաշնակցություն, Հնչակյան, Ռամկավար և Վերակազմյալ Հնչակյան)[175]: Հանձնաժողովի աշխատանքներին միացան նաև հայ կաթոլիկ ու բողոքական համայնքները:

---

174 Տե՛ս Օսմ. մէպուսական խնդիրը, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 11 Յունուար:
1914 թ. լույս տեսած «Ժամանակ» օրաթերթի` սույն ենթագլխում հիշատակված համարների բացառիկ օրինակները պահվում են Ստամբուլի «Բեյազըթ» պետական գրադարանի արխիվում:

175 Տե՛ս Բարենորոգումներու ծրագիրը. Ս. Պատրիարքին այցելութիւնը Ներքին գործերու նախարարին. Ընտրութիւններու հարցը. Հայերը ի՞նչ առաջարկներ կը ներկայացնեն. Վարչութիւնը պիտի հրաժարի, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 28 Յունուար:

1914 թ. ընտրություններից առաջ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության միջև բուռն քննարկման առարկա դարձավ հայ թեկնածուների ընտրության հարցը, որի առնչությամբ Զավեն պատրիարքը քանիցս հանդիպումներ ունեցավ ներքին գործերի նախարար Թալեաթ բեյի և երիտթուրք բարձրաստիճան մյուս պաշտոնյաների հետ: Աիավասիկ, Զավեն պատրիարքն իր հուշերում գրում էր. «Պատրիարք, Վարչապետ եւ Գործակատար ամէն օր անոնց դուռները կը բախէին, իսկ Ներքին Գործոց նախարարը՝ Թալէաթ, խոստումներով կ'օրօրէր մեզ եւ Իթթիհատի պետերէն Միդհատ Շիւքրին եւ Քէմալը յաճախ Պատրիարքարան գալով երեւութապէս մեզ գոհացնել կը ձեւացնէին»[176]: Ըստ էության, երիտթուրքական իշխանությունները իրենց ստահոդ հայտարարություններով փորձում էին ժամանակ շահել և վերջնականապես կանխել հայ համայնքի ու քաղաքական վերնախավի ուղղակի միջամտությունն օսմանյան խորհրդարանի ընտրություններին: Այսկերպ նրանց պետք է հաջողվեր շնչավորել նախորդ օսմանյան խորհրդարանի ընտրության սցենարը և ընտրել այն հայ թեկնածուներին, որոնք «հարմար» կդիտվեին իշխող գաղափարախոսության ու պայմաններին:

Ինչպես տեղեկանում ենք պոլսահայ մամուլի, մասնավորապես «Ժամանակ» օրաթերթի հրապարակումներից, օսմանյան խորհրդարանում հայերի ներկայացվածության հարցը լայնորեն քննարկվել է դեռևս Կ. Պոլսի հայոց պատրիարքի փոխանորդ Գաբրիել եպիսկոպոս Ջևահիրջյանի

[176] Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., 1947, էջ 40: Յմմտ.՝ Ս. Պատրիարքին տեսակցութիւնը Ներքին գործոց նախարարին հետ. Թալէաթ պէյ կ'խոստանայ 20 երեսփոխան տալ. Պատրիարքարանի տեսակէտը ընդունուած. Յայերու ո՞ր տեղերէն երեսփոխան պիտի տան, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 29 Փետրուար:

պաշտոնավարության օրոք և երիտթուրքական իշխանությունների կողմից ընտրական գործընթացի հետաձգման պատճառաբանությամբ անընդմեջ մտել է փակուղի:

Ի վերջո, 1914 թ. փետրվարի 9-ին Գալաթայի հայկական եկեղեցում գումարված հայոց ընտրական հանձնաժողովի նիստում որոշվում է արդարադատության և դավանանքների նախարար Իբրահիմ Հայրուլլահ բեյին ուղարկել մի պահանջագիր, որի համաձայն հայկական համայնքն Օսմանյան կայսրությունում բնակվող հայության թվաքանակի համեմատությամբ իրավունք պետք է ստանար ընտրելու ազգությամբ հայ 20 պատգամավորի, ըստ որում, հայ թեկնածուների ընտրությունը պետք է կատարվեր հայերի քվեներով: Միաժամանակ, թե՛ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը և թե՛ միջկուսակցական համերաշխության հանձնաժողովը պահանջագրով հայտնում էին նաև, որ պահանջների չբավարարման դեպքում հայությունը պետք է բոյկոտի ենթարկեր ընտրությունները[177]:

Սակայն եթե երիտթուրքական կառավարության որոշմամբ մերժվում էր ազգային ընտրության իրավունքը, ապա հայ թեկնածուների թվի մասին պահանջը բավարարվում էր մասամբ՝ նկատի առնելով այն անհեթեթ հանգամանքը, որ «տվյալ դեպքում Օսմանյան կայսրությունում բնակվող յուրաքանչյուր ազգի (թուրք, հայ, հույն, արաբ) համար անհրաժեշտ կլիներ մշակել առանձին ծրագիր»[178]: Պարզից էլ պարզ էր, որ իթթիհատականներն ամեն կերպ փորձում էին խլացնել ոչ մուսուլման հանրության ձայնն օսմանյան խորհրդարանում՝

[177] Տե՛ս Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան, խմբագիր՝ Փամպուքեան Ե., ԺԱ. հատոր, Պէյրութ, 2015, էջ 68:

[178] Bozkurt G., Alman-İngiliz Belgerinin Ve Siyasi Gelişmelerin Işığı Altında Gayrımüslim Osmanlı Vatandaşlarının Hukuki Durumu (1839-1914), Ankara, 1996, s. 205.

լավագույն դեպքում նախապատվություն տալով հայ ազգի այն թեկնածուներին, որոնք մասնակցել են նախորդ օսմանյան խորհրդարանի աշխատանքներին: Մյուս կողմից երիտթուրքական կառավարությունը, խորհրդարանի ընտրություններին ընդառաջ՝ 1912 թ. վերջին «Վիլայեթների վարչական բարեկարգման» վերաբերյալ օրենքի համաձայն՝ նախապես այնպես էր սահմանել նահանգային-վարչական բաժանումները,որ հայերն Օսմանյան կայսրության գրեթե բոլոր նահանգներում կազմեին փոքրամասնություն:

Հարկ է նկատել, որ հայոց պատրիարքարանի և երիտթուրքական կառավարության հարաբերությունները պաշտոնական մակարդակով միաժամանակ «սառեցվեցին»: Այդ իրավիճակը շարունակվեց մինչև այն պահը, երբ երիտթուրքական իշխանությունների կողմից ներկայացվեց փոխզիջումային մի տարբերակ, ըստ որի հայերին տրվում էր 16 պատգամավորական մանդատ, որից երեքին պետք է ընտրեր իշխող կուսակցությունը, իսկ տասներեքին՝ Կ. Պոլսի հայոց ընտրական հանձնաժողովը[179]: Վերջինիս համաձայնությամբ «Միություն և առաջադիմություն»կուսակցությունն առաջարկեց Կ. Պոլսից ընտրված նախկին պատգամավորներ Գրիգոր Զոհրապի և Պետրոս Հալլաճյանի, իսկ Հալեպից՝ Արթին Բոշգեզենյանի թեկնածությունները:

Միանշանակ չէր, սակայն, հայոց պատրիարքարանի և հայ քաղաքական կուսակցությունների կողմից առաջադրվելիք հայ թեկնածուների հարցը, քանի որ այստեղ առկա էին

[179] Տե՛ս Ս. Պատրիարքը Թալէաթ պէյի մօտ. Իթթիհատը 16 երեսփոխան կուտայ. Անորոշ վիճակ, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 4 Փետրուար:

լուրջ անհամաձայնություններ: Նախապես հայոց պատրիարքարանը հեռագրով պատվիրել էր գավառների առաջնորդարաններին՝ կազմելու հայ պատգամավորական թեկնածուների ցուցակը[180]: Իրենց հերթին, հայ քաղաքական կուսակցությունները համառորեն փորձում էին պատգամավորական ցուցակներում ընդգրկել առավելապես իրենց կուսակցության ներկայացուցիչներին, ինչը, անշուշտ, բացասական ազդեցություն էր թողնում ընտրական գործընթացի արդյունավետ կազմակերպման վրա: Կուսակցությունների միջև չդադարող «աթոռակռվի» պայմաններում պոլսահայ մտավորականության շրջանակներում ստեղծվել էր անվստահության մթնոլորտ, հատկապես, երբ ազգասիրության բարձրագույն զգացումի ներքո ի հայտ էին գալիս եսապաշտական նկրտումներ: Ահավասիկ լրագրող Արտաշես Գալփաքճյանի մտահոգությունն այդ մասին. «Օսմ. Խորհրդարանին մէջ քսան հայ երեսփոխանի տեղ, տասը հատ, հինգ հատ և նոյն իսկ երկու հատ ունենանք, բայց հայ ազգին օգտակար ու պատուաբեր ներկայացուցիչներ ունենանք»[181]:

Չաշվի առնելով հայոց ընտրական հանձնաժողովի «չեզոք» դիրքորոշումը երիտթուրքական կառավարության կողմից ազգային ընտրության սկզբունքը մերժելու առնչությամբ և,

---

180 Տե՛ս Ընտրական խնդիրը. Հայ պատուիրակների դիմումը. Միտհաթ Շիւքրի պէյ 16 երեսփոխան կը խոստանայ. Վարչութեան իրաւասութիւնը, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 30 Յունուար:

181 Ա. Գալփաքճեան, Տեսութիւն մը երեսփ. ընտրութեան խնդրոյն առթիւ, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 7 Փետրուար: Պոլսահայ մտավորականության մտահոգությունների մասին տե՛ս նաև՝ Իդիպոս, Ի՞նչպէս պիտի ընտրուին Հայ մէպուսները, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 30 Յունուար: Վ. Զէյթունցեան, Ընտրութեանց շուրջ մոլորումներ, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 8 Փետրուար: Օսմ. Երեսփոխանական հարցը. Կուսակցութիւնները անհամերաշխ. Միտհաթ Շիւքրի պէյ Ազգ. Պատրիարքարանի մէջ. Պատրիարքարանը պիտի ստիպէ, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 25 Փետրուար: Անտոնեան Ա., Ընտրական զաւեշտը, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 1 Մարտ:

հետևաբար, բացառելով համազգային բոյկոտի վերաբերյալ նախապես ընդունված որոշումը՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը նախընտրեց որոշ ժամանակ ձեռնպահ մնալ առաջիկա ընտրություններին: Այդ մասին են վկայում Դաշնակցության՝ Հայաստանի բյուրոյից (Կարին), Տարոնի, Վասպուրականի, Սեբաստիայի կենտրոնական կոմիտեներից ստացված բազմաթիվ նամակները, որոնցում կուսակցությունը նման «ձախող» իրավիճակի պատասխանատվությունը փորձում էր բարդել Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի վրա՝ վերջինիս մեղադրելով ինքնահաստատման և դիրքերն ամրապնդելու մեջ[182]:

Այսօրինակ լարված իրադրության պայմաններում ավելի ուշ պոլսահայ մամուլը գուժեց Զավեն պատրիարքի հրաժարականի լուրը, ինչը հակազդեցության մեծ ալիք բարձրացրեց պոլսահայ մտավորականության շրջանում: Վերահաս պատերազմի վտանգի առջև կանգնած հայության համար պատրիարքի հրաժարականը վերջնականապես կխորտակեր ազգային այն ծրագրերը, որոնք երկար ժամանակ ի վեր սպասում էին իրենց օրինական կենսագործմանը: Ուստի, չուշացավ տարբեր համայնքային կառույցների, անհատների և լրագրերի՝ Սրբազան պատրիարքին ուղղված աջակցության խոսքը, ինչը տվեց իր դրական արդյունքը[183]:

Երրորդ օսմանյան խորհրդարանի ընտրությունները սկսվեցին 1914 թ. փետրվարի կեսերից և շարունակվեցին մինչև ապրիլի վերջ: Ընտրությունների առաջին ու գլխավոր կենտրոնը Կ. Պոլիսն էր, որտեղ փետրվարի 28-ին կայացած

[182] Տե՛ս Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան ..., էջ 68-93:

[183] Տե՛ս Ս. Պատրիարք Հօր հրաժարականին շուրջ, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 10 Ապրիլ: Համակրանք Ս. Պատրիարքին, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 28 Ապրիլ:

ընտրություններում հաղթած 11 պատգամավորից 2-ը իթթիհատականների կողմից առաջադրված՝ օսմանյան հասարակության մեջ հեղինակություն վայելող հայ քաղաքական գործիչներ Պետրոս Հալլաջյանն ու Գրիգոր Զոհրապն էին: Մինչև մարտի վերջ տեղի ունեցան նաև Իզմիրի (Օննիկ Իհսան), Դիարբեքիրի Էրգանի Մադենի շրջանի (Ստեփան Չըրաջյան), Սեբաստիայի (Տիգրան Պարսամյան), Կեսարիայի [Կարապետ Թոմայան (Թումայան)], Սիսի (Մատթեոս Նալբանդյան) և Հալեպի [Արթին (Հարություն) Բոշգեզենյան] ընտրությունները:

Ապրիլ ամսին հայտնի դարձան Մուշի, Բիթլիսի և Մարաշի ընտրությունների արդյունքները: Ըստ այդմ, Մուշում ընտրվեց Գեղամ Տեր-Կարապետյանը (Տատրակ-Ասողիկ), Բիթլիսում՝ Մինաս Չերազը (թուրքական աղբյուրներում՝ Քիրազ Էֆենդի), իսկ Մարաշում՝ Հակոբ Խըրլաքյանը: Ինչ վերաբերում է Էրզրումի ու Վանի հայ թեկնածուներին, ապա նրանք որոշվեցին օսմանյան խորհրդարանի բացումից անմիջապես հետո: Էրզրումից ընտրվեցին Վարդգես (Հովհաննես) Սերենգյուլյանը և Հովսեփ Մեդեթյանը, իսկ Վանից՝ Արշակ Վռամյանն (Օննիկ Դերձակյան) ու Վահան Փափազյանը:

Ինչպես կարելի էր ենթադրել, հայ թեկնածուների թվի վերաբերյալ երիտթուրքական իշխանությունների կողմից տրված խոստումները կրկին ի չիք դարձան: 1914 թ. մայիսի 14-ին բացված օսմանյան երրորդ խորհրդարանում նախապես որոշված 20-ը դարձավ 18, ապա նվազեց 16-ի, սակայն, ի վերջո, խորհրդարան անցան հայ 15 պատգամավոր[184]: Նրանցից ընդամենը 5-ն էին (Գ. Հալլաջյան, Գ. Զոհրապ, Գ. Տեր-Կարապետյան, Ա. Բոշգեզենյան և Վ.

---

[184] Տե՛ս Karacakaya R., Meclis-i Mebusan Seçimleri Ve Ermeniler (1908-1914), Yakın Dönem Türkiye Araştırmaları, İstanbul Üniversitesi Atatürk İlkeleri Ve İnkılâp Tarihi Enstitüsü Dergisi, Yıl: 2/2003, Sayı: 3, İstanbul, 2003, s. 140-141. Հմմտ.՝ Ahmad F., Dankwart A., İkinci Meşrutiyet Döneminde Meclisler: 1908-1914, Güney-Doğu Avrupa Araştırmaları Dergisi, Sayı: 4-5, Yıl: 1975-1976, İstanbul 1976, İstanbul Üniversitesi Edebiyat Fakültesi Yayınları, s. 265-284.

Սերենգյուլյան), ովքեր որպես պատգամավոր մասնակցել էին նախորդ երկու խորհրդարանների աշխատանքներին: Չըրաջյանը և Վռամյանը եղել էին երկրորդ խորհրդարանի, իսկ Փափազյանը՝ առաջին խորհրդարանի պատգամավոր: Մնացած հայ պատգամավորներն առաջին անգամ էին ընտրվում օսմանյան խորհրդարանում:

Գ.Զոհրապի գլխավորությամբ խորհրդարանի հայ պատգամավորները կարճ ժամանակ անց նիստ գումարեցին՝ հստակեցնելու խորհրդարանում իրենց առաջիկա անելիքները, մասնավորապես՝ Հայկական բարենորոգումների և քրիստոնյաների զինվորագրության հարցերի շուրջ[185]: Հարկ է նշել, որ խորհրդարանում ներկայացված հայ պատգամավորներից առավել ակտիվ գործունեությամբ աչքի էին ընկնում Ա. Բոշգեզենյանը, Գ.Զոհրապն ու Վ.Սերենգյուլյանը, ովքեր խորհրդարանի ամբիոնից պարբերաբար հանդես էին գալիս տնտեսական, իրավական, զինվորական ու հասարակական բնույթի ելույթներով[186]: Մյուս հայ ազգի պատգամավորները տարբեր պատճառներով պակաս ներգրավվածություն ունեին խորհրդարանի աշխատանքներին կամ բնավ չէին մասնակցում դրանց: Այսպես, օրինակ, Ա. Վռամյանը 1915 թ. ապրիլից մասնակցում էր Վանի ինքնապաշտպանական կռիվներին և սպանվել էր Բիթլիսի մոտակայքում: Հայ ազգի պատգամավորի սպանության մասին լուրը օսմանյան խորհրդարանը նախընտրեց չբարձրաձայնել՝ բացի խոհրդարանի պատգամավոր Մեհմեդ Սայիդ Էֆենդուց, ով

[185] Տե՛ս Օսմանեան խորհրդարանին մէջ հայ մէպուսներու խորհրդակցութիւնը.Բարենորոգմանց եւ զինուորագրութեան հարցերը,«Ժամանակ»,Կ.Պոլիս,1914,4Մայիս:

[186] Halıcı Ş., 1914 Meclis-i Mebusan Seçimlerinde Ermeniler, “Türkler ve Ermeniler. Tarih boyunca Türk-Ermeni ilişkileri”, Marmara Üniversitesi, http://turksandarmenians.marmara.edu.tr/tr/1914-meclis-i-mebusan-secimlerinde-ermeniler/ (01.05.2019-ի դրությամբ հասանելի է).

լկտիաբար ամբիոնից հայտարարեց. «Թող կրի իր պատիժը»[187]:

Հաջորդաբար սպանվեցին նաև Էրզրումի պատգամավոր Վ. Սերենգյուլյանը, Դիարբեքիրի պատգամավոր Ստ.Չըրաջյանը և Կ.Պոլսի պատգամավոր Գ.Զոհրապը: Իսկ Բիթլիսի պատգամավոր Մ.Չերազը և Կեսարիայի պատգամավոր Կ.Թոմայանը մինչև 1915 թ. տեղահանության մասին օրենքի հրապարակումն անդարձ մեկնել էին Եվրոպա:

Նշենք, 1916 թ. դեկտեմբերի 11-ին օսմանյան խորհրդարանը որոշում ընդունեց հայազգի պատգամավորների թափուր տեղերը լրացնել նոր պատգամավորներով,սակայն՝ ոչ հայերից: Մինչև 1918 թ. օսմանյան խորհրդարանի լուծարումը խորհրդարանում իրենց գործունեությունը դեռևս շարունակում էին իրականացնել 8 հայ պատգամավորներ՝ Օննիկ Իհսանը, Պետրոս Հալլաջյանը, Տիգրան Պարսամյանը, Մատթեոս Նալբանդյանը, Հակոբ Խըրլաքյանը, Գեղամ Տեր-Կարապետյանը, Արթին Բոշգեզենյանն ու Հովսեփ Մեդեթյանը:

Ամփոփելով նշենք, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին՝ ի դեմս նորընտիր պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի, ծանրագույն պատասխանատվություն էր վերապահված՝ մի կողմից ապահովելու հայազգի թեկնածուների մանդատները երրորդ օսմանյան խորհրդարանում,մյուս կողմից՝ չխաթարելու երիտթուրքական իշխանությունների հետ ունեցած շատ թե քիչ բարիդրացիական հարաբերությունները: Հայոց պատրիարքարանն ակամա դառնում էր արևմտահայության և երիտթուրքական իշխանությունների միջնորդը կամ քաղաքական ներկայացուցիչը, որն իր ժամանակի արտաքին ու ներքին քաղաքական

[187] Նույն տեղում:

հանգամանքներով պայմանավորված, այն է՝ երիտթուրքերի վարած հայատյաց քաղաքականությունը, հայ քաղաքական կուսակցությունների և առանձին անհատների շահադիտական նկրտումները և այլն, փորձեց հնարավորինս օգտակար լինել արևմտահայության կենսական պահանջները բավարարելու տեսանկյունից:

Սակայն ինչպես նախորդ օսմանյան խորհրդարանների ընտրություններին, այս անգամ նույնպես երիտթուրքական իշխանություններին հաջողվեց խաթարել հայերի և մյուս ոչ թուրք ժողովուրդների՝ օրենսդրությամբ վերապահված իրավունքներն ու «բացարձակ մեծամասնությամբ» ղեկավարել նորընտիր օսմանյան խորհրդարանը:

## 2.3. Հայկական բարենորոգումների ծրագիրը Կոստանդնուպոլսի հայոց Զավեն պատրիարքի օրոք

Կ.Պոլսի հայոց նորընտիր պատրիարք Զավեն Տեր-Եղիայանն իր պատրիարքական լիազորությունները ստանձնելուց հետո անմիջապես սկսեց զբաղվել հայկական համայնքին վերաբերող մի շարք հրատապ խնդիրների լուծմամբ: Այդ հարցերից թերևս կարևորագույնն Օսմանյան կայսրության հայաբնակ նահանգներում բարենորոգումների իրականացման ծրագիրն էր, որի վերաբերյալ բանակցությունները վերսկսվել էին Հովհաննես Արշարունի պատրիարքի օրոք: Այս առթիվ Զավեն պատրիարքը գրում է. «Խնդիրը իր ամէնէն տաք շրջանին մէջ էր եւ բոլոր Հայոց միտքերը

կ'զբաղեցնէր, ինչպէս նաեւ զիս եւ ինծի խորհրդական՝ Կեդրոնական վարչութիւնը»[188]:

Զավեն պատրիարքը մեծ պատրաստակամությամբ և ջանադրությամբ լծվեց բարենորոգումների ծրագրի առնչությամբ պատրիարքարանին բաժին ընկած գործառույթների իրականացմանը: Պատրիարքարանը շարունակում էր սերտ կապերի մեջ մնալ Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի հետ: 1914 թ. փետրվարի 20-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն կոնդակով շնորհակալություն է հայտնում Պողոս Նուբար փաշային՝ «զանկեղծ և զսրտեռանդն գործունէութիւն Ձեր վասն մարդասէր և սուրբ նպատակի, որ հայի յերջանկութիւն և ի փրկութիւն բազմաչարչար հոգևոր որդւոց Մերոց սիրելեաց և ի պայծառութիւն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ»[189]: Գևորգ Ե-ն բարձր էր գնահատում նրա կատարած աշխատանքը՝ մասնավորապես նշելով. «Յընթացս եռանդուն գործունէութեան Ձերոյ վասն յաջողութեան խնդրոյ բարենորոգութեանց Տաճկա-Հայաստանի և վասն ապահովութեն Տաճկահայոց, Մեք յուսալից սրտիւ և հոգեկան մխիթարութեամբ իրազէկ լինէաք ի բազմաթիւ պարբերական տեղեկագրոց և ի նամակաց Ձերոց և տեսանէաք զհեռատես աշխատանս և զգուշավոր դիւանագիտական յարաբերութիւնս Ձեր, որպէս ներկայացուցչի Մերոյ և Նախագահի Ազգային Պատգամաւորութեան, ընդ նախարարապետս, նախարարս և դեսպանս Եւրոպական Պետութեանց և ընդ այլ քաղաքական և հասարակական ականաւոր գործիչս լուսաւորեալ ազգաց Եւրոպիոյ»[190]: Անձամբ Զավեն պատրիարքը նույնպես բարձր էր գնահատում Պողոս Նուբար փաշայի գործադրած ջանքերը եվրոպական

[188] Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 30:
[189] ՀԱԱ ֆ. 57, ց. 5, գ. 62, թ. 1:
[190] Նույն տեղում:

կառավարությունների հետ ունեցած նպաստավոր համագործակցության ուղղությամբ՝ մասնավորապես նշելով.«Պօղոս Փաշա Նուպար,որուն յիշատակը օրհնութեամբ պէտք է յիշուի, ամէն զոհողութիւն կ'ըներ գործը յաջողութեամբ առաջ վարելու համար»[191]:

Զավեն պատրիարքը մշտական կապի մեջ էր նաև Բարձրագույն Դռան և եվրոպական պետությունների պոլսական դեսպանատների հետ: Սակայն երիտթուրքական իշխանությունների՝ հայոց պատրիարքարանի նկատմամբ որդեգրած չեզոք քաղաքականությունը վերջինիս ստիպում էր բացառապես ապավինել եվրոպական հակակշռին. «...Կառավարութեան հետ մեր յարաբերութիւնները բնաւ բաղձալի վիճակ մը չունէին եւ կառավարութիւնը բնաւ բարեացակամ չէր հանդէպ Հայոց»[192]: Երիտթուրքական իշխանությունները փորձում էին ամեն կերպ ձախողել հայկական բարենորոգումների իրականացումը, մասնավորապես՝ 1914 թ. օսմանյան խորհրդարանի ընտրություններին հայ պատգամավորական թեկնածուների թիվը նվազեցնելով՝ նրանք հետամուտ էին տպավորություն ստեղծել, թե հայերի թվաքանակը կայսրությունում այդքան էլ մեծ չէր,հետևաբար «հայկական բարենորոգումների հարցն ինքնին մղվում էր դուրս»[193]:

Զավեն պատրիարքը քանիցս հանդիպումներ է ունեցել ներքին գործերի նախարար Թալեաթ բեյի հետ՝ միաժամանակ ներկայացնելով թե՛ հայկական բարենորոգումների ծրագրի վերաբերյալ հայության սպասելիքները և թե՛ արևելյան նահանգներում հայերի դեմ ուղղված՝ քրդերի հարձակումների մասին պատրիարքարանի ստացած

---

[191] Զաւէն Արքեպս, նշվ. աշխ., էջ 29:
[192] Նույն տեղում, էջ 37:
[193] Նույն տեղում, էջ 39:

լուրերը: Զավեն պատրիարքը կառավարությունից պահանջում էր անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել՝ դադարեցնելու այդ անօրինական գործողությունները[194]: Սակայն, ինչպես միշտ, այդ հանդիպումները չունեցան ոչ մի գործնական արդյունք:

Դիցուք, երիտթուրքական կառավարության կողմից պատրիարքարանի գործունեությունը վերահսկելու կասկածանքով Կենտրոնական վարչության առաջիկա ժողովներին Զավեն պատրիարքը ստիպված էր բավարարվել հայկական բարենորոգումների ծրագրի վերաբերյալ զուտ ընդհանուր բնույթի հարցերի քննարկմամբ: Ազգային ընդհանուր ժողովի որոշմամբ՝ Ազգային պատվիրակության կամ եվրոպական դեսպանատներին ուղղված նամակագրության մանրամասները այսուհետ պետք է քննարկվեին միայն մասնավոր վարչական ժողովների ընթացքում, որպեսզի խստորեն գաղտնի պահվեր Պողոս Նուբար փաշայի հետ պատրիարքարանի համագործակցության փաստը[195]:

Պատրիարքարանի ձեռնարկած քայլերի շնորհիվ շուտով պարզ էր դառնում, որ իսկապես «կառավարութիւնը լրտես ունի պատուիրակութեան մէջ.անոր քաղաքական գաղտնիքները կը հաղորդուին կառավարութեան»[196]: Սա բավական չէր, պատրիարքարանի աշխատանքները ճախողելու նպատակով արհեստականորեն կրկին գլուխ բարձրացվեց երուսաղեմյան ավանդական խնդիրը, ինչը զբաղեցրեց վարչության հետագա մի քանի ժողովների օրակարգը: Այս լարված իրադրության պայմաններում այլևս անհնարին էր դառնում

194 Տե՛ս Ermeni Patriği'nin Ziyareti, İkdam, 9 Mart 1914.
195 Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 34:
196 Փափազեան Վ., Հայկական Բարենորոգումներ (1912-1914). XV Ազգային ժողովը եւ վարչութիւնը, «Վէմ», 1934, Դ, Փարիզ, էջ 76:

վարչության գործունեությունը: Խնդիրն այն էր, որ Կենտրոնի խմբակցությունը մեղադրում էր վարչությանը և անձամբ պատրիարքին՝ պատրիարքարանի վարչական երկու ժողովներում դաշնակցականներին վերապահված հատուկ դիրքի և նրանց ազդեցությամբ գործելու համար: Ըստ էության, Կենտրոնի խմբակցության համար երուսաղեմյան խնդիրը սոսկ պատրվակ էր՝ բացառելու համար դաշնակցականների ակտիվ ներգրավվածությունը պատրիարքարանի աշխատանքներին: Այդ պատճառով խուսափելով պատրիարքարանի ներսում հասունացող ներքին պայթունավտանգ իրավիճակից՝ Ազգային ժողովը ստիպված է լինում հատուկ որոշմամբ լուծարել Ստեփան Գարայանի վարչությունը[197]: Հատկանշական է, որ 1914 թ. փետրվարի 5-ին Օսմանյան կայսրությունում Ռուսաստանի դեսպան Մ. Գիրսը Պետերբուրգում Պետական Դումայի պատգամավոր Մ. Պապաջանյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ քննադատեց հայության ներսում ծագած երկպառակությունները՝ մասնավորապես նշելով. «Հայկական համայնքը պետք է զբաղվի ներքին կառուցողականությամբ, որպեսզի այնպես բարձրացնի իր ազգային ուժերը, որ որոշ ժամանակ անց ժողովուրդն իրավունք ունենա հասնելու բարենորոգումների իրագործմանը»[198]:

Փետրվարի 28-ին տեղի են ունենում Կրոնական ժողովի ընտրություններ, որոնց արդյունքում ընտրվում են արքեպիսկոպոսներ Մաղաքիա Օրմանյանը, Եղիշե Դուրյանը, Հովհաննես Արշարունին, Գաբրիել եպիսկոպոս Ջևահիրջյանը, վարդապետներ Սմբատ Գազազյանը և Եղիշե Գալֆայանը, քահանաներ Գրիգոր Երեցյանը,

---

[197] Տե՛ս նույն տեղում:

[198] ՀԱԱ ֆ. 57, ց. 5, գ. 61, թ. 1 (շրջ.):

Յակոբոս Տելեճեկյանը, Վարդան Դերձակյանը, Պետրոս Կարապետյանը, Աբել Երեցյանը, Վահրամ Յակոբյանը, Աբրահամ Էպեյանը և Սահակ Պետրոսյանը[199]: Իսկ Քաղաքական ժողովի անդամներն ընտրվում են վարչության գումարած երեք նիստերի ժամանակ (մարտի 7, ապրիլի 14, 25): Նրանք են՝ դոկտոր Գրիգոր Դավիթյանը (ատենապետ), Գևորգ Կյուրեղյանը, Լևոն Տնտեսյանը, Ներսես Զաքարյանը, Յայկ Անտոնյանը, Գառնիկ Պեզազյանը, Մաքսուտ Նարկիլեճյանը, Արամ Յալաճյանը, Յովհաննես Կյուլպենկյանը, Մարտիկ Էքսերճյանը, Բարսեղ Ավետիսյանը, Գասպար Չերազը, Աղասի Աղասյանը և Սարգիս Սուինը[200]: Յատկանշական է, որ այս ընտրությամբ կատարվում էր Կենտրոնի խմբակցության կամքը, այն է՝ ապահովել քաղաքական ժողովի անդամների անկուսակցականության պարտադիր պայմանը:

Չնայած նրան, որ Քաղաքական ժողովի նորընտիր անդամներն ազգային պաշտոններ վարելու փորձառություն չունեին, սակայն ժողովի ատենապետ դոկտոր Գ. Դավիթյանի շրջահայացության և արդարամտության շնորհիվ նրանց հաջողվեց օգտակար լինել հայկական բարենորոգումների ծրագրի իրագործմանը: Դավիթյանի վարչությունը պաշտոնավարեց շուրջ երկու տարի՝ մինչև երիտթուրքական կառավարության կողմից պատրիարքության լուծարումը

1914 թ. սեպտեմբերի 2-ին Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովը Գևորգ Ե-ին ուղղված նամակում գրում է, որ Ռուսաստանի Նախարարների խորհրդի նախագահ Ի. Գորեմկինն իրեն հավաստիացրել է, որ «ռուսական ղեկավարությունը ոչ մի դեպքում չի պատրաստվում նահանջել Յայկական հարցի

199 Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 46:
200 Տե՛ս նույն տեղում, էջ 46, 47:

լուծումից, մասնավորապես՝ Թուրքիայի հայկական նահանգներում բարեփոխումների իրականացումը դիտարկելու որպես ռուսական առաջնահերթ ծրագիր և այն իրականացնելու բացառապես Ռուսաստանի վերահսկողությամբ»[201]:

Այսպիսով, ռուս-թուրքական համաձայնագրի ստորագրմանը հաջորդում է նահանգապետների նշանակման հարցը, որի առնչությամբ եվրոպական պետությունները սկսել էին զբաղվել դեռևս հունվար ամսից: Ռուսական դեսպանատան պահանջով հայոց պատրիարքարանը և անձամբ Պողոս Նուբար փաշան ևս միանում են տեսուչների որոնման աշխատանքներին[202]: Ինչպես տեղեկանում ենք պատրիարքարանի՝ ռուսական կառավարության ուղղված դիմումից, տեսուչների ազգության վերաբերյալ պատրիարքարանն ուներ հստակ դիրքորոշում, այն է՝ հնարավորինս խուսափել տեսուչներին Բելգիայում կամ Շվեյցարիայում փնտրելուց, քանի որ այդ պետություններն առևտրատնտեսական ամուր կապեր ունեին Օսմանյան կայսրության հետ[203]: Պատրիարքարանի նախընտրությամբ տեսուչները պետք է ընտրվեին Սկանդինավյան երկրներից կամ Հոլանդիայից[204]:

Նույն թվականի մայիսին նահանգապետեր են նշանակվում ազգությամբ հոլանդացի դիվանագետ Լուիս Վեստենենկը և նորվեգացի գնդապետ Նիկոլաս Հոֆը[205]: Հունիսի սկզբին նրանք հասնում են Կ. Պոլիս՝ ստանալով եվրոպական պետությունների և Օսմանյան կայսրության հրահանգներն իրենց պարտականությունների ստանձնման վերաբերյալ: Կ.

201 ՀԱԱ ֆ. 57, ց. 5, գ. 86, թ. 1, 2:
202 Տե՛ս Փափազեան Վ., Հայկական Բարենորոգումներ (1912-1914). XX Մարզպանները, «Վէմ», 1934, Դ, Փարիզ, էջ 77:
203 Տե՛ս նույն տեղում:
204 Տե՛ս նույն տեղում:
205 Տե՛ս Fahri Taş N., Vilâyât-ı Şarkiyye Islahatı Ve Nicolas Hoff, Atatürk Araştrma Merkezi Dergisi, Cilt: XV, Sayı: 42, Ankara, 1988, s. 923-968. Հմմտ.՝ Münir Süreyya Bey, Ermeni Meselesinin Siyasi Tarihçesi (1877-1914), Ankara, 2001, s. 98-10.

Պոլիս ժամանման հաջորդ օրը նեթ եվրոպացի տեսուչները հանդիպում են նաև հայոց պատրիարքին[206]:

Քանի որ հայկական բարենորոգումները կարծես թե մտնում էին իրենց կենսագործման թվացյալ հունի մեջ, պատրիարքարանը դաշնակցականների աջակցությամբ շրջաբերական ուղարկեց հայաբնակ նահանգներ՝ վարչական, ֆինանսական և դատական բարձր պաշտոնների համար մասնագետներ և պաշտոնյաներ գտնելու համար[207]: Սակայն երիտթուրքական կառավարությունն այս անգամ ևս փորձեց այդ ցուցակների մեջ ընդգրկել իր նախընտրած թեկնածուներին, ինչի առթիվ Զավեն պատրիարքը հայտնեց իր անհամաձայնությունն անձամբ Թալեաթ բեյին՝ խնդրելով այդ պաշտոններում նշանակել ազգասեր և խղճամիտ անձանց[208]: Բացի այդ, Զավեն պատրիարքը Գրիգոր Զոհրապի առաջարկությամբ պահանջում էր յուրաքանչյուր նահանգային կենտրոնում նշանակել հայերից ընտրված մեկական իրավական խորհրդատուի, որպեսզի պաշտոնական գրագրության մեջ կամ օտարախոս անձանց հետ հաղորդակցվել իս տեսուչները չունենային որևէ դժվարություն[209]:

Հուլիսի 2-ին գնդապետ Հոֆն իր պաշտոնակիցների հետ եկավ պատրիարքարան՝ հրաժեշտ տալու պատրիարքին[210]: Մի քանի օր անց նա մեկնեց Վան, իսկ Վեսթենենկը, որ դեռևս չէր անցել իր պարտականությունների կատարմանը, շարունակում էր մնալ Կ. Պոլսում: Հայկական շրջանակներում անասելի ցնծություն էր տիրում, քանի որ երկար սպասված բարենորոգումները կարծես կյանքի էին

---

[206] Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 41, 44:
[207] Տե՛ս Փափազեան Վ., Հայկական Բարենորոգումներ..., էջ 76:
[208] Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 41:
[209] Տե՛ս Güllü R. E., նշվ. աշխ., էջ 445, 446, 448, 449:
[210] Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 41, 42:

կոչվում: Սակայն շուտով բռնկվում է Առաջին համաշխարհային պատերազմը և հավերժ խորտակում հայության այդքան բաղձալի երազը: Հայկական բարենորոգումներն այդպես էլ մնում են սոսկ թղթի վրա[211]: 1914 թ. դեկտեմբերի 28-ին Ներքին գործերի նախարարությունը պաշտոնապես հանդես է գալիս հայտարարությամբ հայկական բարենորոգումների ծրագրի չեղարկման և եվրոպացի տեսուչներին հետ ուղարկելու վերաբերյալ[212]: Այս կապակցությամբ Զավեն պատրիարքը գրում է. «Եւրոպական պատերազմին հրատարակութիւնը Բ. Դուռը պատեհ առիթ համարեց իր այնքան դժկամութեամբ ընդունած համաձայնութիւնը ջնջելու եւ պատերազմը պատրուակ բռնելով առկախելու բարենորոգմանց գործադրութիւնը, երկու ընդհանուր քննիչները՝ Վեսթէնէնկը եւ Հօֆը ետդարձնելով»[213]:

Ըստ էության, Առաջին համաշխարհային պատերազմն Օսմանյան կայսրության համար տարածքային, ֆինանսական և մարդկային ահռելի կորստից զատ ունեցավ վճռորոշ նշանակություն՝ վերջնականապես լուծելու իր տարածքում բնակվող ոչ մուսուլման բնակչության, մասնավորապես՝ հայերի, հույների, ասորիների և այլ ժողովուրդների ճակատագիրը: Առաջին աշխարհամարտի հռչակմամբ տասնամյակներ շարունակ հայկական և եվրոպական քաղաքական շրջանակներում խմորվող Հայկական բարենորոգումների հարցն այլևս կորցրեց իր կենսունակությունը, ինչը նպաստավոր հիմք հանդիսացավ կայսրության ամբողջ տարածքում իրագործելու երիտթուրքերի՝ վաղուց ծրագրված բնաջինջ քաղաքականությունը:

---

211 Տե՛ս Ünal Ş., Uluslararası Hukuk Açısından Ermeni Sorunu, Ankara, 2011, s. 67-68.

212 Տե՛ս Türkmen Z., Vilayât-ı Şarkiye (Doğu Anadolu Vilayetleri) Islahat Müfettişliği 1913-1914, Ankara, 2006, s. 82-88.

213 Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 49:

## 2.4. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանը Հայոց ցեղասպանության տարիներին

Հաշվի առնելով վերահաս պատերազմի վտանգը՝ Զավեն պատրիարքը մի շարք քայլեր ձեռնարկեց արևմտահայության սպառնացող վտանգները կանխելու կամ մեղմելու ուղղությամբ: Մասնավորապես, 1914 թ. հուլիս-օգոստոս ամիսներին նրա կարգադրությամբ դոկտոր Նազարեթ Տաղավարյանն ուղևորվեց Թիֆլիս, որտեղ նա հանդիպումներ ունեցավ հայ մտավորականության երևելի ներկայացուցիչների հետ՝ հորդորելով նրանց հնարավորինս զերծ մնալ արևմտահայության ճակատագրին առնչվող հարցերում սուր և վնասաբեր դիրքորոշմամբ հանդես գալուց[214]: Հարկ է նշել, որ այդ ժամանակ Թիֆլիսում Ազգային բյուրոյի նախաձեռնությամբ հայերը կազմում էին կամավորական խմբեր, որոնք պատրաստվում էին դուրս գալ թուրքական բանակի դեմ և ազատագրել Արևմտյան Հայաստանը[215]: Ընդսմին, 1915 թ. ապրիլի 11-ին Թիֆլիսի հայոց ազգային խորհուրդը Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին ուղղված նամակում կամավորական խմբերի կազմակերպման նվիրատվությունները պաշտոնական հիմքերի վրա դնելու մասին նամակում գրում է. «Բիւրոն դիմելով իր տեղական մարմիններին, խնդրում է յայտնել ամէն տեղ ի գիտութիւն հայ հասարակութեան, որ հայ կամավորական խմբեր կազմակերպողը և նրանց պէտքերի մասին հոգացողը է միայն Ազգային Բիւրոն, որն ընտրուած է Ռուսահայ ժողովրդից

[214] Տե՛ս նույն տեղում, էջ 50:
[215] ՀԱԱ ֆ. 57, ց. 5, գ. 28, թ. 174-176:

պատգամավորական համագումարում»[216]: Այդուամենայնիվ, դոկտոր Տաղավարյանի ջանքերը մտավորական կարող ուժերին տարհամոզելու ուղղությամբ անցան ապարդյուն, և նա մեկ ամիս անց ստիպված եղավ վերադառնալ Կ.Պոլիս:

Առաջին աշխարհամարտի նախօրյակին երիտթուրքական իշխանություններն ամբողջ Օսմանյան կայսրությունում հայտարարեցին զորակոչ, որին ենթակա էին կայսրության բոլոր քաղաքացիները, այդ թվում՝ ոչ մուսուլման ժողովուրդները: 1916 թ. դեկտեմբերի 29-ին Երևանի և շրջակայքի արևմտահայ փախստականների հանձնաժողովը Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին ուղղված նամակում գրում է. «Յայտնի է թէ թուրքական բանակի մէջ գտնուած հայ զինուորութիւնը ի՜նչ անողոք կեանքի վայրկեաններ ապրեցաւ, երբ բռնի քշուեցաւ պատերազմի դաշտը ու մասսայօրէն զինաթափութեան ու ջարդի ենթարկուեցաւ, իբրև «խայինի» տարր բանակի և Օսմանեան հայրենիքի համար»[217]: Հայոց պատրիարքարանի որոշմամբ Ազգային Կենտրոնական վարչությունը փորձեց զինվորագրությունից ազատել լավագույն դեպքում ուսուցիչներին ու դպիրներին, սակայն թուրքական իշխանությունների գործադրած խստությունների պատճառով հնարավոր չեղավ այն իրականացնել:

Առաջին համաշխարհային պատերազմը պայթելուն պես հայոց պատրիարքարանը նահանգների հայոց առաջնորդարաններից պարբերաբար ստանում էր մեծաթիվ նամակներ, որոնցում ներկայացվում էին հայության հանդեպ իրականացվող հարստահարությունները, զանգվածային սպանությունները և անօրինական

216 Նույն տեղում, ց. 1, գ. 102, թ. 7:
217 ՀԱԱ ֆ. 57, ց. 5, գ. 90, թ. 47:

այլևայլ գործողություններ: Մասնավորապես, գյուղացիները բողոքում էին, որ տղամարդկանց օսմանյան բանակ զորակոչելով՝ գյուղերը մնում էին անպաշտպան[218], գյուղացիների ձեռքից խլվում էր ունեցվածքը[219], բերքի տասանորդի փոխարեն գանձվում էր մեկ վեցերորդը[220], դաշտերը մնում էին առանց աշխատուժի[221], դժվարին էր դառնում հավաքել ձմռան պաշարը[222] և այլն: Բացի դրանից, 1915 թ. փետրվար-մարտ ամիսներին կառավարության հրամանով հայ ժողովուրդը ենթակա էր զինաթափման[223]: Ըստ որում, հայերի տներից հավաքված զենքերը, որոնց մեծ մասը ձեռք էր բերված օրինական ճանապարհով, կառավարության կողմից ներկայացվեցին իբրև հայերի կողմից հակապետական ապստամբության նախապատրաստելու հիմնավոր ապացույց:

Շուտով կառավարությունը որոշում ընդունեց նաև արգելել հայկական դպրոցներում «հայոց պատմություն» և «հայերեն» առարկաների ավանդումը[224]: Կառավարության մեկ այլ որոշմամբ խլվեցին հայերին պատկանող որոշ վանքապատկան

---

[218] Տե՛ս 1914 թ. սեպտեմբերի 3-ին Կ.Պոլսի հայոց պատրիարքարանին Վանի առաջնորդարանի ուղարկած նամակը (տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 53, 54):

[219] Տե՛ս 1914 թ. օգոստոսի 1-ին Կ.Պոլսի հայոց պատրիարքարանին Կարինի առաջնորդարանի ուղարկած նամակը (տե՛ս նույն տեղում, էջ 59): Տե՛ս նաև 1914 թ. սեպտեմբերի 27-ին Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի Դիարբեքիրի առաջնորդարանի ուղարկած նամակը (տե՛ս նույն տեղում, էջ 54): Տե՛ս նաև 1914 թ. սեպտեմբերի 3-ին Կ.Պոլսի հայոց պատրիարքարանին Վանի առաջնորդարանի ուղարկած նամակը (տե՛ս նույն տեղում, էջ 53, 54):

[220] Տե՛ս 1914 թ. հոկտեմբերի 6-ին Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի Դիարբեքիրի առաջնորդարանի ուղարկած նամակը (տե՛ս նույն տեղում, էջ 57, 58):

[221] Տե՛ս 1914 թ. սեպտեմբերի 3-ին Կ.Պոլսի հայոց պատրիարքարանին Վանի առաջնորդարանի ուղարկած նամակը (տե՛ս նույն տեղում, էջ 53, 54):

[222] Տե՛ս 1914 թ. սեպտեմբերի 18-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին Դիարբեքիր առաջնորդարանի ուղարկած նամակը (տե՛ս նույն տեղում, էջ 57):

[223] Տե՛ս 1915 թ. գարնանը Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին Սեբաստիայի առաջնորդարանի ուղարկած նամակը (տե՛ս նույն տեղում, էջ 51):

[224] Տե՛ս հավանաբար 1914-1915 թթ. Կ.Պոլսի հայոց պատրիարքարանին Սեբաստիայի առաջնորդարանի ուղարկած նամակը (տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 66):

հողեր, զորօրինակ Սեբաստիայի Ս. Նշան եկեղեցուն պատկանող հողատարածքների վրա կառուցվեցին թուրքական զորանոցներ և այլ ենթակառուցվածքներ[225]:

Երիտթուրքական կառավարությունը ջանք չէր խնայում հակահայկական տրամադրություններ ստեղծելու մուսուլման բնակչության շրջանում: Թուրքական իշխանությունները կայսրության ներքին գավառներում կեղծ լուրեր էին տարածել, թե հայերը զինված խմբեր («չեթե») են կազմել, որպեսզի հարմար առիթի դեպքում միանալով կայսրության հյուսիսարևմտյան սահմանին գտնվող հայերից կազմված կամավորական ջոկատներին՝ հարձակում գործեին մուսուլման բնակչության վրա[226]:

1914 թ. նոյեմբերի 8-ին հայոց պատրիարքարանին ուղղված Մուշի առաջնորդ Ներսես եպիսկոպոս Խարախանյանի նամակից պարզ էր դառնում, որ արևմտահայությունը կարծես կանխազգում էր, որ երիտթուրքական կառավարության այդ գործելաոճը տանում էր դեպի հայ ժողովրդի բնաջնջում. «Յստատուն նշաններ կան թէ կառավարութիւնը պատրուակ կը փնտռէ գաւառիս Յայերը աղէտներու ենթարկելու»[227]: Այդ կապակցությամբ Զավեն պատրիարքը նույնպես գրում է. «Բոլոր այս իրար լրացնող տեղեկութիւնները ցոյց կու տան թէ Յայոց դէմ թուրք կառավարական շրջանակներուն մէջ կը պատրաստուէր դաւ մը: Այնպէս որ Պատրիարք եւ Վարչութիւն նախազգացումը կունենային թէ ազգին

[225] Տե՛ս հավանաբար 1914-1915 թթ. Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին Սեբաստիայի առաջնորդարանի ուղարկած նամակը (տե՛ս նույն տեղում):
[226] Տե՛ս 1914 թ. հոկտեմբերի 4-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին Կարինի առաջնորդարանի ուղարկած նամակը (տե՛ս նույն տեղում, էջ 68): Տե՛ս նաև 1914 թ. հոկտեմբերի 13-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին Բաղեշի առաջնորդարանի ուղարկած նամակը (տե՛ս նույն տեղում, էջ 69):
[227] 1914 թ. նոյեմբերի 8-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին Մուշի առաջնորդարանի ուղարկած նամակը (տե՛ս նույն տեղում, էջ 71):

ադէտ մը կ'սպառնար եւ ամէն կարելին կը գործադրէին չարիքը սահմանափակելու համար»[228]:

1914 թ. օգոստոսի 5-ին Գևորգ Ե Ամենայն հայոց կաթողիկոսը Կովկասի կառավարչապետ Ի. Վորոնցով-Դաշկովին ուղարկած կոնդակով հայտնում էր. «Եւրոպական մեծ պատերազմը, որ միացրել է ամբողջ Ռուսաստանը, առանց կրօնի և ազգութեան խտրութեան մի ուժեղ հայրենասիրական ձգտման մէջ, հասաւ Կովկասի սահմանները: Բազմամեայ բարենորոգութեանց պատմութիւնը Տաճկա-Հայաստանում, հայ ժողովրդի վստահութիւնը դէպի բարենօրոգութիւնները ոչնչացրեց, որն եկաւ խորին համոզման, որ միմիայն Ռուսաստանը կարող է ապահովել ազգի ֆիզիքական և կուլտուրական զարգացումը Տաճկա-Հայաստանում»[229]:

1914 թ. հոկտեմբերի 8-ին Ազգային կենտրոնական վարչությունը նիստ գումարեց՝ որոշելու պատերազմի արհավիրքին դիմագրավելուն ուղղված պատրիարքարանի միջոցառումները: Սակայն պատրիարքարանը դեռ չէր հասցրել որևէ գործնական քայլ կատարել, երբ կարճ ժամանակ անց Սև ծովում օսմանյան և ռուսական ռազմանավերի միջև բախման հետևանքով Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Օսմանյան կայսրությանը:

1914 թ. հոկտեմբերի 30-ին Ազգային կենտրոնական վարչությունը նիստ գումարեց, որին մասնակցում էին արքեպիսկոպոսներ Վահրամ Մանկունին և Հմայակ Դիմաքսյանը, օսմանյան խորհրդարանի պատգամավորներ Պետրոս Հալլաճյանը, Գրիգոր Զոհրապը, Վարդգես Սերենգյուլյանը և Համբարձում Պոյաճյանը, ինչպես նաև՝ դոկտոր Սիմոն Սեղբոսյանը, Մանուկ Ազարյանը, Բյուզանդ Քեչյանը, Դավիթ Տեր Մովսեսյանը, Հայկ

[228] Նույն տեղում, էջ 72:
[229] ՀԱԱ ֆ. 57, ց. 5, գ. 76, թ. 1, 2 (շրջ.):

Խոճասարյանը, Տիրան Քելեկյանը և Հակոբ Հակոբոֆը[230]: Նիստի ընթացքում որոշվեց պատերազմի ընթացքում հայոց պատրիարքարանի կողմից իրականացվելիք քաղաքականությունը, այն է՝ բարիդրացիական հարաբերություններ հաստատել և մշտական կապի մեջ գտնվել երիտթուրքական կառավարության հետ: Երկու օր անց կայացած հերթական նիստի ընթացքում պատրիարքարանը որոշեց նաև իթթիհատական կուսակցության հետ լավ հարաբերություններ ունենալուց զատ Հայկական Դրամատան վարչության տնօրենությամբ և պատրիարքարանի վերահսկողությամբ հիմնել շրջիկ հիվանդանոց, ինչպես նաև հատուկ շրջաբերական ուղարկել նահանգների առաջնորդարաններին, որպեսզի տեղի հայությունը, ինչպես հարկն է, կայսրության մյուս քաղաքացիների նման կատարի իր պարտականությունները[231]: Նույն թվականի հոկտեմբերի 25-ին Զավեն պատրիարքը այցելեց նաև ներքին գործերի ու արդարադատության և դավանանքների նախարարներին՝ հայտնելով հայ ազգի հավատարմությունն օսմանյան հայրենիքի հանդեպ[232]:

Երիտթուրքական կուսակցության հետ հարաբերությունները բարելավելու նպատակով Զավեն պատրիարքի առաջին քայլը եղավ այն, որ նա պատրիարքարան հրավիրեց օսմանյան խորհրդարանի հայ ազգի պատգամավոր, իթթիհատական գործիչ Պետրոս Հալլաճյանին՝ խնդրելով նրան իշխող կուսակցության առաջնորդներին հաղորդել, որ

---

230 Տե՛ս «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 18 Հոկտեմբեր:

231 Տե՛ս Պատրիարքարանի գովելի մէկ ձեռնարկը, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 23 Հոկտեմբեր: Հմմտ.՝ Զաւէն Արքեպիսկոպոս, Պատրիարքարանի շրջաբերականը առաջնորդներուն. Հայերը եւ պատերազմը, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 26 Հոկտեմբեր:

232 Տե՛ս Ս. Պատրիարքը Թալէաթ պէյի մօտ. Նախարարին շնորհակալութիւնը, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 26 Հոկտեմբեր:

«Պատրիարքարանը յանուն հայ ժողովուրդին կը յայտարարէ թէ անիկա ոչ մէկ կերպով պիտի թերանայ իր պարտականութիւնը կատարելու, եւ կը խնդրէ որ կառավարութեան եւ թուրք ժողովուրդին համակրութիւնը չպակսի իրեն հանդէպ»[233]:

Ինչ վերաբերում է շրջիկ հիվանդանոց ստեղծելու գաղափարին, ապա այն կառավարության ձեռնարկած խիստ միջոցառումների հետևանքով իրականություն չդարձավ, իսկ Ս. Փրկիչ ազգային հիվանդանոցը տրամադրվեց Դարդանելի պատերազմի հետևանքով վիրավորված զինվորներին[234]:

Օսմանյան պետության հանդեպ ցուցաբերած հավատարմության ժեստ կարելի է դիտարկել նաև 1915 թ. հունվարին Դարդանելի ճակատում ստեղծված լարված իրադրության ժամանակ կառավարական կենտրոնը Կ. Պոլսից Քոնիա փոխադրելու վերաբերյալ կառավարության որոշումից հետո Խառը ժողովի գումարած նիստին Զավեն պատրիարքի առաջարկը՝ հետևելու կառավարության օրինակին և պատրիարքարանը փոխադրելու Քոնիա[235]: Այս առաջարկը միաձայն ընդունվեց նիստին ներկա մասնակիցների կողմից և ուղարկվեց արդարադատության և դավանանքների նախարարությանը: Յաջորդ օրը կրոնական տեսուչ Բեհա բեյն այցելեց պատրիարքարան՝ հայտնելով նախարարության շնորհակալությունն օսմանյան հայրենիքի հանդեպ տածած նվիրվածության համար: Զավեն պատրիարքն իր հուշագրության մեջ հիշատակում է Բեհաբեյի հետ ունեցած հանդիպման մանրամասները՝ նշելով, որ վերջինիս խոստովանությամբ կայսրության պատմության մեջ աննախադեպ երևույթ էր պատրիարքի նմանօրինակ

[233] Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 75:
[234] Տե՛ս նույն տեղում:
[235] Տե՛ս նույն տեղում, էջ 77:

հայտարարությունը. «Պատրիարքներուն մէջ միակն եմ որ այսպիսի առաջարկ կը բերեմ»[236]:

Հայոց պատրիարքարանի ձեռնարկած միջոցառումներից բացի՝ Կ. Պոլսի Հայ բժշկական միության ջանքերով Կ. Պոլսի մի քանի թաղամասերում օսմանյան վիրավոր զինվորների համար կազմակերպվեցին հիվանդապահության դասընթացներ, որոնք վարում էին անվանի բժիշկներ Վահրամ Թորգոմյանը և Ռուբեն Չիլինկիրյանը (Սևակ)[237]: Շարունակվող կեղեքումների և հալածանքների պայմաններում գավառահայությունը նույնպես փորձում էր իր հնարավորությունների սահմաններում օգտակար լինել օսմանյան բանակին՝ նրա համար ապահովելով հագուստ և գուլպաներ[238]: Զավեն պատրիարքն այս առթիվ գրում է. «Յաւալի է ըսել, թէ մեր այս քայլերը որքան որ ալ Թուրքերը գնահատել կը ձեւացնէին, իրական ու դրական ապացոյց մը չէին տար անկեղծութեան եւ ազնիւ վերաբերումի»[239]:

Օսմանյան կառավարության հանդեպ հավատարմության կոչով հայոց Զավեն պատրիարքն օրեր շարունակ պտտվեց Կ. Պոլսի մի շարք թաղամասերով, հանդիպումներ ունեցավ հայության զանազան խավերի հետ և հորդորեց նրանց չթերանալ իրենց պարտականությունների կատարման մեջ[240]: Դրանից զատ նա քանիցս դիմումներ ուղարկեց ներքին գործերի նախարարությանը՝ խնդրելով դադարեցնել պատրիարքարան հասած նամակներում հիշատակվող՝ Կարինի, Վանի և Բաղեշի նահանգներում տեղի ունեցող

---

236 Նույն տեղում, էջ 78:
237 Տե՛ս նույն տեղում:
238 Տե՛ս Օսմ. զինուորներուն համար 10000 զոյգ գուլպայ եւ բժշկական մարմին, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1914, 25 Հոկտեմբեր: Հմմտ.՝ Ս. Պատրիարքը օսմ. վիրաւորներուն մօտ, «Ժամանակ», Կ. Պոլիս, 1915, 23 Ապրիլ:
239 Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 78:
240 Տե՛ս նույն տեղում, էջ 80:

ավարառություններն ու սպանությունները[241]: Հակառակ օսմանյան խորհրդարանի պատգամավորների բողոքների և Զավեն պատրիարքի անձնական դիմումների՝ կառավարությունը շարունակում էր իրականացնել իր հայատյաց քաղաքականությունը՝ զանգվածային ձերբակալություններ, զենքերի հավաքում, սպանություններ, աքսոր և այլն: Զավեն պատրիարքն այդ առթիվ գրում է. «Որոշ էր որ կառավարութիւնը Հայոց դէմ պատրաստած էր վրէժխնդրական ծրագիր մը, որուն նպատակն է իրագործել հայ ցեղին բնաջնջումը»[242]: 1915 թ. ապրիլի 16-ին Թիֆլիսի հայոց ազգային բյուրոն Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին գրում է. «...Տաճկահայաստանից ամեն օր նոր տեղեկութիւններ են գալիս այնտեղ կատարուող սոսկալի դէպքերի մասին: Դրութիւնն այնպէս է, որ եթէ արտաքին միջամտութիւնն ուշանայ, երկիրը կարող է վերջնականապէս աւերուել և ժողովուրդը բնաջինջ լինել»[243]:

Կայսրությունում հաստատված գրաքննության պատճառով հայոց պատրիարքարանի կապը նահանգների առաջնորդարանների հետ աստիճանաբար խզվեց: Սկզբում արգելվեց հայերեն լեզվով նամակագրությունը՝ թույլատրելով նամակներ գրել բացառապես թուրքերենով: Այնուհետև նամակագրական կապն առհասարակ արգելվեց:

Պատրիարքարան հասած սակավաթիվ նամակների թվում հատկանշական է Կիլիկիո հայոց կաթողիկոս Սահակ Խապայանի կողմից տարբեր անձանց միջոցով ուղարկված նամակները, որոնցում նա ներկայացնում էր կայսրության զանազան

241 Տե՛ս նույն տեղում:
242 Նույն տեղում, էջ 87:
243 ՀԱԱ ֆ.57, ց.5, գ.28, թ.161 (շրջ.):

նահանգներում հայ գաղթականության ողբալի վիճակը[244]: Հատկանշական է, որ Սահակ կաթողիկոսն այդ նամակներն ավարտում էր «Կաթողիկոս աւերակաց»[245] ստորագրությամբ: Ի դեպ, Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանի շնորհիվ Պողոս Նուբար փաշային և կաթողիկոսին ուղարկված նամակների վերջում էլ Զավեն պատրիարքը ստորագրում էր. «Նահատակ Թրքահայութեան վշտակիր պատրիարք»[246] կամ «Դժբախտ Պատրիարք Հայոց Թուրքիոյ»[247]: Հատկանշական է, որ Զավեն պատրիարքի տվյալ նամակները հետագայում օգտագործվեցին անգլիական կառավարության հանձնարարությամբ Ջեյմս Բրայսի կազմած «Հայերի վիճակը Օսմանյան կայսրությունում 1915-1916 թթ.» փաստաթղթերի ժողովածուում, որն առավել հայտնի է «Կապույտ գիրք» անվանումով[248]:

Այսպիսով, 1915 թ. ապրիլի 23-ին՝ բառացիորեն Կ. Պոլսում հայ մտավորականության ձերբակալության նախորդ օրը, պատրիարքարանում տեղի ունեցավ խորհրդակցական նիստ, որին վարչության անդամներից բացի հրավիրված էին մասնակցելու նաև Զարեհ Տիլպերը, պատգամավորներ Գրիգոր Զոհրապը, Վարդգես Սերենգյուլյանը, Հարություն Բոշգեզենյանը և Հովսեփ Մադաթյանը[249]: Ներկայացնելով գավառներում տիրող ցավալի իրադարձությունների վերաբերյալ հասած տեղեկությունները՝ ժողովի մասնակիցների ընդհանուր համաձայնությամբ որոշվեց իրենց ձեռքին եղած իրողություններն ու փաստերը ներկայացնող մի հիշատակագիր պատրաստել՝ ուղարկելով մեծ վեզիրին, շեյխ ուլ իսլամին,

[244] Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 175-178:
[245] Տե՛ս նույն տեղում, էջ 178:
[246] Տե՛ս նույն տեղում, էջ 136:
[247] Տե՛ս նույն տեղում, էջ 149:
[248] Տե՛ս Bryce J., The Treatment of Armenians ın The Ottoman Empire 1915-1916, London, 1916.
[249] Տե՛ս Զաւէն Արքեպս, նշվ. աշխ., էջ 94:

պատերազմական, ներքին գործերի ու արդարադատության և դավանանքների նախարարություններին: Զոհրապի կողմից պատրաստված հիշատակագրում մասնավորապես նշվում էր (ներկայացնում ենք հատվածաբար). «...ազգը ո՛չ թէ քաղաքական նպատակներ կը հետապնդէ, այլ ընդհակառակը՝ կը վախնայ որ մի՛ գուցէ այսքան խստութիւններուն յաջորդէ ընդհանուր ջարդ մըն ալ, թէ՝ կառավարութեան կասկածը եւ ազգին այս մտահոգութիւնը իրարու հետ խոտոր կը համեմատին եւ այս կացութեան դարման տանելու համար ո՛չ թէ խիստ եւ ճնշող՝ այլ մեղմ եւ ներող քաղաքականութիւն մը աւելի նպաստաւոր է եւ անհրաժեշտ, թէ՝ կը խնդրուի՛ այսպէս վերաբերուիլ հայ ազգին հետ, գոնէ ի յարգանս յիշատակին հազարաւոր հայ զինուորներուն՝ որոնք Օսմանեան հայրենեաց պաշտպանութեան համար իրենց արիւնը թափած են»[250]:

Հաջորդը օրը ևեթ Կ.Պոլսում տեղի ունեցան հայ մտավորականության (գրող, եկեղեցական, բժիշկ, խմբագիր, փաստաբան, ուսուցիչ, կուսակցական և այլն) զանգվածային ձերբակալություններ, որոնց թիվը, ըստ Զավեն պատրիարքի հուշագրության, հասնում էր շուրջ 500-ի[251]: Ապրիլի 25-ին Բերայի Ս. Երրորդություն եկեղեցում տեղի ունեցած սգո արարողության ընթացքում Զավեն պատրիարքը ներկաներին հայտնեց, որ ապրիլի 24-ին Կ.Պոլսից աքսորված մտավորականներին վերադարձնելու դիմում է ներկայացրել մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշային, որը բառացիորեն պատասխանել է հետևյալը. «Պատերազմէն առաջ Համաձայնական Տէրութեանց դիմելով ուզեցիք անջատել ձեր ազգը Օսմանեան Պետութենէն. ձեր ըրածներուն պատիժն է

[250] Նույն տեղում, էջ 98:
[251] Տե՛ս նույն տեղում, էջ 97:

որ կը կրէք. Հայերուս մասին եղածը արդիւնք է ծրագրի մը որ պիտի գործադրուի»[252]:

Հիշատակագիրը ապրիլի 26-ին տեղի ունեցած Խառը ժողովի հերթական նիստին հաստատվելուց հետո նույն օրը ներկայացվեց մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշային և ներքին գործերի նախարար Թալեաթ բեյին[253]: Նրանք հայտարարեցին, թե կառավարությունը վստահ է օսմանյան հայրենիքի հանդեպ հայության հավատարմության մեջ, ուստի կառավարության ձեռնարկած միջոցառումները սոսկ ուղղված են կուսակցական գործիչների դեմ[254]:

Ահավասիկ, ինչպես Զավեն պատրիարքի, այնպես էլ Ամենայն հայոց կաթողիկոսի շարունակական նամակների շնորհիվ 1915 թ. մայիսի 24-ին Անտանտի երկրների՝ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունները հանդես եկան միասնական հայտարարությամբ, որով դատապարտում էին Օսմանյան կայսրությանը և արևմտահայության կոտորածները բնութագրվում էին որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված ոճրագործություն»[255]:

1915 թ. հունիսի 25-ին Զավեն պատրիարքը հանդիպում ունեցավ արդարադատության և դավանանքների նախարար Փիրիզադե Իբրահիմ բեյի հետ՝ նրան հայտնելով իր դժգոհությունը. «Ամէն տեղ նոյնն է. մեկ միլիոնի չափ ժողովուրդ մահուան կը դատապարտուի և դուք իբրեւ Արդարութեան Գործոց նախարար ասիկա ի՞նչպէս արդարութեան

252 Անտոնեան Ա., Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները եւ Թալէաթ փաշա, Պոսթըն, 1921, էջ 121:
253 Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 97:
254 Տե՛ս նույն տեղում, էջ 98, 100:
255 Հայոց ցեղասպանություն: Աշխարհի պետությունները, ազգերը, խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում, Նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ Բարսեղյան Լ., Երևան, 2005, էջ 5:

համաձայն կը կգտնէք»[256]: Երկու օր հանդիպում ունեցավ նաև մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշայի հետ, ով պնդում էր, թե կառավարությունը բնավ նպատակ չուներ բնաջինջ անելու հայ ազգին, հակառակը՝ պատերազմական գործողություններից հեռու մնալու նպատակով նրանց փոխադրում էին ավելի անվտանգ վայրեր[257]: Հատկանշական է, որ այս տեսակետը հետագայում դարձավ Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ ժամանակակից թուրք պատմագրության մեջ հաճախակի շրջանառվող թեզերից մեկը:

Թուրքական պաշտոնյաներից միակը, ում հետ չէր հաջողվում հանդիպել, ներքին գործերի նախարարի Թալեաթ փաշան էր: Սեպտեմբերի 19-ին, ի վերջո, երեսփոխանական խորհրդի նախագահ Խալիլ բեյի միջնորդությամբ հնարավոր եղավ հանդիպել Թալեաթ փաշայի հետ, ով հայերի տեղահանությունները և կոտորածները դիտարկեց որպես հայերի կողմից պետական դավաճանության դրսևորում. «Եթէ ժողովուրդը իր հայրութիւնը չընդունի և Ռուսը իրեն հայր ընէ, ա՛յն ատեն կառավարութիւնը հօր մը պէս չի վարուիր: Աշխարհի և ո՛չ մէկ կողմ չի գտնուիր ժողովուրդ մը՝ որ մայրաքաղաք մայրաքաղաք պտտի և իր կառավարութեան գործերուն միջամտել խնդրէ: Այս բոլոր բաները եղան և ազգին ամբողջութիւնը բան մը չըրաւ և լռութեամբ հաւանութիւն յայտնեց»[258]: Զավեն պատրիարքն օգնության ակնկալիքով դիմեց նաև Շեյխ ուլ իսլամ Մուսա Քյազիմ էֆենդիին, սակայն ապարդյուն:

Հուսախաբ եղած հայոց պատրիարքն իր վերջին հույսը փորձեց կապել արտաքին աշխարհի հետ՝ ապավինելով «առաջադեմ մարդկության» և

---
[256] Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 119:
[257] Տե՛ս նույն տեղում, էջ 121, 122:
[258] Նույն տեղում, էջ 125:

քաղաքական վերնախավի միջամտությանը: Մասնավորապես, Զավեն պատրիարքը դիմեց ավստրիական դեսպանին[259], պապական նվիրակ Մոն. Տոլչիի միջոցով Հռոմի պապին[260], Բուլղարիայի դեսպանին[261], ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուին[262], Գերմանիայի դեսպանին[263] և այլն: Հատկանշական է Մոսուլի գերմանական հյուպատոս Հոլշթայնի՝ Մուշ և Բաղեշ կատարած շրջայցը, որի վերաբերյալ նա զեկուցագիր էր ուղարկել գերմանական կառավարությանը՝ հայտնելով, որ «Հայերը անվստահելի տարր մըն են եւ Համաձայնական պետութեանց նուիրուած»[264]: Երիտթուրքական կառավարությունը, բնականաբար, մանրամասն տեղեկացված էր արևմտահայ քաղաքական ուժերի արևմտամետ և գլխավորապես ռուսամետ կողմնորոշման վերաբերյալ դաշնակից կառավարության ձեռքբերած լուրերից, սակայն մյուս կողմից երիտթուրքական իշխանությունների լրտեսական ցանցը հնարավորություն էր ընձեռում մշտական վերահսկողություն իրականացնելու թե՛ կայսրության ներսում և թե՛ դրսում:

Հետաքրքրական է նաև դոկտոր Յոհաննես Լեփսիուսի հանդիպումը Զավեն պատրիարքի հետ: Պատրիարքին հայտնած տեղեկությունների համաձայն՝ Լեփսիուսն ի նպաստ հայության քանիցս դիմումներ է ներկայացրել թուրք նախարարներին և անձամբ գերմանացի դեսպան Վանգենհայմին[265]: Հետագայում իր «Հայաստանի ջարդերը» գրքում նա պատրիարքի մասին գրեց հետևյալը. «Զաւէն

[259] Տե՛ս նույն տեղում, էջ 160:
[260] Տե՛ս նույն տեղում, էջ 158-160:
[261] Տե՛ս նույն տեղում, էջ 157:
[262] Տե՛ս նույն տեղում:
[263] Տե՛ս նույն տեղում, էջ 161-164:
[264] Նույն տեղում:
[265] Տե՛ս նույն տեղում, էջ 110:

Սրբազանի նկարագիրն այնքան հեռու է նենգախոհ քաղաքագէտի նկարագրից, որքան որ կարելի է: Ան ծանրօրէն տառապած է իր ազգին եւ եկեղեցիին պարտադրուած ճակատագիրէն. բայց ան գաղափարն իսկ չունէր դիմադրութիւն մը իսկ հակադրելու կառավարական հեղինակութեան: Ան ըրած է այն բոլոր դիմումները, որոնք իր իշխանութեանն էին. Նախարարներուն պարզած է իր ժողովուրդին դժբախտ կացութիւնը՝ շարունակական աղերսանքներով եւ տրտունջներով, մինչեւ որ դռները իր առջեւ փակուեցան ու ինք համոզուեցաւ իր պաշտօնին անզօրութեան»[266]: Ապա շարունակում է. «Իր ամենափոքր խնդրանքներուն իսկ գոհացում տալ չէին ուզէր. նոյն իսկ անոնց՝ որոնք կը վերաբերէին տարագիրներու հոգեւոր խնամքին...: Զաւէն Սրբազան աննկուն վկան եղաւ իր ժողովուրդին բնաջնջումին, Պատրիարքարանի իրաւունքներուն անկման ու ջնջումին եւ հայ ազգին եկեղեցական կազմակերպութեան ոչնչացումին»[267]:

Հայոց ցեղասպանության տարիներին Զավեն պատրիարքի մտահոգությունների առանցքում մշտապես եղել է հայ գաղթականության հարցը: Ինչպես վերը նշվեց, հայոց պատրիարքարանն ամբողջովին զրկված էր հաղորդակցության որևէ հնարավորությունից, սակայն մասնավոր անձանց միջոցով երբեմն հնարավոր էր դառնում որոշակի տեղեկություններ հայթայթել հայկական գավառներում տեղի ունեցած ահասարսուռ իրադարձությունների վերաբերյալ: Այդկերպ հայոց պատրիարքին անգամ հաջողվեց պատրիարքարանի տրամադրության տակ գտնվող

[266] Նույն տեղում, էջ 110, 111: Հմմտ.՝ Lepsius J., Rapport Secret Sur Les Massacres D'Arménie : 1915-1916, Paris, 1918, p. 195.
[267] Նույն տեղում:

Ֆինանսական աղբյուրների զգալի մասն ուղղել Քոնիայում, Հալեպում, Կարինում, Սամսունում, Բրուսայում, Բանդըրմայում, Էսքիշեհիրում, Դամասկոսում, Երուսաղեմում և հայ գաղթականներով լցված մյուս խոշոր կայանատեղիներին: Օրորինակ Քոնիան, որտեղ ապաստան էին գտել Օսմանյան կայսրության արևմտյան նահանգներից գաղթած շուրջ 5000 հայեր, պատրիարքարանը կանոնավոր կերպով այնտեղ ուղարկում էր նպաստ, որն օրական մեկ դուրուշի հաշվով բաժանվում էր հայ գաղթականներին[268]: Այդ գործում հայոց պատրիարքին մեծապես օգնում էր Քոնիայում գտնվող Մեսրոպ եպիսկոպոս Նարոյանը, որին աջակցում էին Աբիկ Մուպահյաճյանը, Խոսրով Պապայանը, Տիգրան Ամսեյանը, ինչպես նաև Հրանտ և Հմայակ արմաշական երիտասարդ վարդապետները[269]: Իսկ Դամասկոսում պատրիարքարանի նպաստաբաշխման աշխատանքներն իրականացվում էին Երուսաղեմի միաբան Արիստակես վարդապետ Խաչատրյանի վերահսկողությամբ, Հալեպում՝ առաջնորդական տեղապահ Հարություն քահանա Եսայանի և այլն[270]: Չավեն պատրիարքի գործադրած ջանքերը հայ գաղթականների փրկության ուղղությամբ թեև սահմանափակվում էին կառավարության ձեռնարկած խիստ վերահսկողության պատճառով, այդուամենայնիվ, դրանք լավագույնս ցույց են տալիս, որ հայոց պատրիարքարանն իր հնարավորության սահմաններում փորձել է օգտակար լինել հայ տարագիրների փրկության նվիրական գործին: Այդ մասին ահա թե ինչ է գրում անձամբ պատրիարքը.«Իսկ Տէր Զօր եւ աւելի անդին, արաբական անապատներու մէջ թափառող զանգուածներու համար գրեթէ ոչինչ

268 Տե՛ս Զաւէն Արքեպս.,նշվ.աշխ.,էջ 172:
269 Տե՛ս նույն տեղում:
270 Տե՛ս նույն տեղում,էջ 173:

կրցանք ընել եւ անոնք իրենց բախտին լքուեցան, շատ դժբախտաբար: Ինչ որ ըրինք մեծ բան մը չէր, սակայն բան մըն էր: Աւելին ընելու համար մեծ միջոցներու կը կարօտէինք եւ դժբախտաբար չունէինք: Մեր միջոցները, այսինքն՝ Պատրիարքարանի տրամադրութեան տակ գտնուած դրամները, շատ աննշան էին բաղդատմամբ կարիքներուն, որոնք անսահման էին: Իսկ նպաստ հաւաքելու կարելիութիւն չկար, քանի որ անխտիր ամէն Հայ, վաղուան անստուգութիւնը ունէր աչքի առջեւ եւ իր ունեցածը իրեն պահել կ'ուզէր: Նոյնիսկ եթէ տրամադիր ըլլային, կարելի չէր որ հայ գաղթականներու հասցնելու համար, Պատրիարքարանը ոեւէ հանգանակութիւն ընելու համարձակէր, վասնզի ասիկա պիտի նկատուէր հակապետական գործ մը»[271]:

Զավեն պատրիարքը հատուկ ուշադրություն դարձրեց նաև աքսորյալ քահանաներին՝ նրանց ուղարկելով ամսական մեկ ոսկի[272]: Պատրիարքարանն իր հոգածության տակ առավ նաև այն զինվորագրված հայերին, ովքեր պատերազմի ժամանակ վիրավորվելով՝ կառավարության որոշմամբ բուժման նպատակով կարճաժամկետ ուղարկվում էին իրենց հայրենիք, սակայն տեսնելով, որ իրենց ընտանիքները տեղահան էին արվել, նրանք ժամանում էին Կ. Պոլիս՝ հայոց պատրիարքարանից օրական ստանալով 5 ղուրուշ[273]: Իսկ ինչ վերաբերում է Կ. Պոլսի Ս. Փրկիչ ազգային հիվանդանոցի ծախսերը հոգալուն, ապա Զավեն պատրիարքը, պատեհ առիթ համարելով Դարդանելի ճակատում վիրավորված զինվորների բուժման և խնամքի կազմակերպումն այդ հիվանդանոցում, պարենի պակասության խնդրով անձամբ դիմեց ռազմական գործերի նախարար Էնվեր

[271] Նույն տեղում:
[272] Տե՛ս նույն տեղում, էջ 172:
[273] Տե՛ս նույն տեղում:

փաշային, և որոշակի դժվարություններով հանդերձ նրան հաջողվեց լուծել հիվանդանոցի պարենավորման հարցը[274]:

Կառավարության որոշմամբ պատերազմը սկսվելուն պես հայտարարվեց մորատորիում, ինչի հետևանքով հայոց պատրիարքարանի համար որոշակի դժվարություններ ստեղծվեցին նաև բանկերում պահվող գումարների ստացման առնչությամբ: Սակայն շուտով Օսմանյան բանկի պաշտոնյա Պերճ Քերեսթեճյանի շնորհիվ պատրիարքարանն անարգել կարողացավ տնօրինել իր դրամական հաշիվները[275]: Մինչդեռ Հայկական դրամատան դեպքում առաջ եկան որոշակի անհարմարություններ, որից հետո Զավեն պատրիարքն այդ բանկի արժեթղթերի որոշ մասը տեղափոխեց «Պայպլ Հաուզ» բանկ: Այստեղ էին փոխանցվում նաև արտասահմանից պատրիարքարանին հազվադեպ ուղարկվող գումարները, որոնք անձամբ գանձապետ Պարոն Սմիթի հովանավորությամբ ապահով կերպով փոխանցվում էին Հալեպի և Քոնիայի բանկերին՝ ի նպաստ հայ գաղթականության գործին[276]:

1916 թ. սկզբին կառավարության հրամանով հայկական հաստատությունների (Դպրոցասեր Տիկնանց վարժարան, Ազգանվեր Հայուհյաց ընկերություն, «Զավարյան» ֆոնդ, «Օգնենք Սասունին» և այլն)՝ բանկերում պահվող գումարները ենթակա էին բռնագրավման: Հրամանը դեռ չէր ստորագրվել, երբ հունվարի 29-ին Քաղաքական ժողովի որոշմամբ վերոհիշյալ հաստատությունների գումարները փոխանցվեցին պատրիարքարանի հաշվին[277]: Սակայն կարծես կանխազգալով, որ պատրիարքարանի արժեթղթերը նույնպես կարող են վտանգի

[274] Տե՛ս նույն տեղում, էջ 175:
[275] Տե՛ս նույն տեղում, էջ 174:
[276] Տե՛ս նույն տեղում:
[277] Տե՛ս նույն տեղում, էջ 182:

ենթարկվել, պատրիարքի որոշմամբ դրանք տրվեցին ի պահ ամերիկյան դեսպանատանը[278]: Պատրիարքի հրահանգով պատրիարքարան փոխադրվեցին նաև Ազգային միացյալ ընկերությունում պահվող գրքերը, տետրակները և հռչակավոր ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու երկու գեղանկարները[279]:

Այսպիսով, Զավեն պատրիարքի բազմաթիվ դիմումներն ուղղված թե՛ կայսերական բարձրաստիճան պաշտոնյաներին, թե՛ Կ. Պոլսում օտարերկրյա պետությունների դեսպանություններին մատնվեցին անտարբերության: Այդուամենայնիվ, Զավեն պատրիարքն ամեն ջանք գործադրեց՝ փրկելու արևմտահայությանը ծանր օրհասական վիճակից, թեև հաջողվեց միայն որոշակիորեն կազմակերպել մի քանի երկրամասերում ապաստան գտած հայ գաղթականության հոծ խմբերին նպաստ հասցնելու գործը: Պատրիարքը խոստովանում է իր հուշագրության մեջ, որ «այլեւս պաշտօն վարելն ամօթ կը համարեմ ինձ. առանց ժողովուրդի Պատրիարք մ'եմ, այսինքն միայն Պատրիարքարանի պատրիարք»[280]: Այս իրավիճակը շարունակվեց այնքան ժամանակ, մինչև կառավարության որոշմամբ չեղարկվեց 1863թ. Հայոց ազգային սահմանադրությունը, փակվեց Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, և Զավեն պատրիարքն աքսորվեց Բաղդադ:

Այդ ողբերգական իրադարձությունների վերաբերյալ Զավեն պատրիարքն Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ Արսեն ծայրագույն վարդապետ Վեհունուն 1916 թ. մարտի 30-ին ուղղված նամակում գրում է.«Հայ ժողովուրդը իր դարաւոր հայրենիքէն վտարուելով դէպի հարաւ քշուեցաւ, ճամբան

278 Տե՛ս նույն տեղում:
279 Տե՛ս նույն տեղում, էջ 182, 183:
280 Տե՛ս նույն տեղում, էջ 120:

չէթէներուն բիւրաւոր զոհեր տալով, իւր ինչքը, եթէ թոյլ տրուած էր բան մը առնել իրեն հետ, կողոպտուելով, օրերով ու ամիսներով հետիոտն ճամփորդեց: Կարաւանները հնադարեան գերիներու պէս ամէն քաղաք հասնելով հրապարակները շարուեցան և իսլամ ժողովուրդը հրաւիրուեցաւ անոնցմէ իր հաւնածը առնելու: Այրերէն շատերը արդէն իրենց ծննդավայրին մէջ կոտորուած ըլլալով, մնացեալներն ալ ճամբան կոտորուեցան չէթէներու և ժանտարմներու կողմէ, մանուկները խլուեցան իրենց մայրերուն գրկէն և իբրև անտէր ապրանք իսլամներու յանձնուեցան»[281]:

## 2.5. Հայոց ազգային ինսահմանադրության և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության վերացման երիտթուրքական քաղաքականությունը

18-րդ դարի սկզբին մինչև 19-րդ դարի վերջը Օսմանյան կայսրությունում ծայր առած եվրոպականացման գործընթացները շարունակվում էին: Տերության ներքին և արտաքին քաղաքական հաշվեկշռում զգալիորեն աճում էր եվրոպական պետությունների ազդեցությունը, հասարակության տարբեր շրջանակներում ավելի ու ավելի զգալի էր դառնում հետաքրքրությունը ժողովրդավարական արժեքների ու սկզբունքների նկատմամբ: Օսմանյան իշխանություններն այս կերպ փորձում էին ոչ միայն դուրս գալ քաղաքական, տնտեսական և ֆինանսական ճգնաժամից, այլև հակադրվել կայսրությունում բնակվող ոչ մուսուլման ժողովուրդների՝ նոր թափ առած ազգային-ազատագրական պայքարին: Այլ կերպ ասած՝ Օսմանյան կայսրության ոչ թուրք բնակչության ազատագրական ձգտումները Բ. Դռան իշխանության

[281] ՀԱԱ Ֆ. 57, ց. 5, գ. 21, թ. 72 (շրջ.):

թուլացման և տնտեսության անկման պայմաններում ակամա հող էին նախապատրաստում տարածաշրջանում օտարերկրյա պետությունների դիրքերի ամրապնդման, կայսրության ներքին գործերին միջամտելու համար: Ինչպես նկատում է պատմաբան Ա. Խառատյանը, օսմանյան վերնախավը կեղծ պատրանքներ էր ստեղծում իր երկրի քաղաքակրթական հնարավորությունների շուրջ[282]:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հայության և երիտթուրքական կառավարության միջև հարաբերությունները խիստ լարվել էին՝ մի կողմից Օսմանյան կայսրության հայաբնակ նահանգներում եվրոպական պետությունների միջամտությամբ իրականացվելիք բարենորոգումների, մյուս կողմից՝ Ռուսական կայսրության հովանավորությամբ հայ կամավորական խմբերի ստեղծման, ինչպես նաև տեղահանության վերաբերյալ 1915 թ. օրենքի ընդունման և իրագործման պատճառներով: Այս իրավիճակում 1916 թ. օգոստոսի 10-ին «Իրադարձությունների օրացույց» (Takvim-i Vekayi) պաշտոնաթերթը հրապարակում է օսմանյան իշխանությունների որոշումը՝ չեղարկելու Հայոց ազգային սահմանադրությունը և դադարեցնելու Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի գործունեությունը[283]:

Համաձայն թուրք պատմաբան Ռամազան Էրհան Գյուլլուի աշխատության՝ Կ. Պոլսի հայոց պատրիարքության լուծարման հետ կապված աշխատանքները սկսվել էին դեռևս 1916 թ. սկզբներին՝ անձամբ ներքին գործերի նախարար

282 Տե՛ս Խառատյան Ա., Դարձյալ արևմտահայերի ազգային սահմանադրության մասին, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2008, N 2, էջ 2:

283 Տե՛ս Takvim-i Vekayi, İstanbul, 10 Ağustos 1916. Հմմտ.՝ BOA. A. DVNS.GMC.d., nr. 11, s. 19-24.

Թալեաթ փաշայի գլխավորությամբ[284]: Թուրքական պաշտոնական պատմագրության հերթական կեղծ թեզերից մեկն անդրադառնում է այդ խնդրին՝ նշելով, որ երիտթուրքական կառավարությունը Կ. Պոլսի հայերին «քաղաքական խարդավանքներից հեռու պահելու համար» նոր սահմանադրության պատրաստություններ էր տեսնում[285]:

Ուստի, նույն թվականի ապրիլի վերջին Թալեաթ փաշան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար Ջեմալ փաշային ուղղված նամակում նշում է, որ «կայսրությունում գործող հայկական կրոնական բոլոր կառույցները Սիսի կաթողիկոսությանը միացնելու շնորհիվ՝ հնարավոր կլինի կանխել Էջմիածնի միջամտությունը Թուրքիայի հայերի գործերին»[286]: Փաստորեն, օսմանյան իշխանությունները, Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի և Էջմիածնի կաթողիկոսության հարաբերությունների դադարեցմամբ, նպատակ ունեին չեզոքացնել Էջմիածնի կաթողիկոսության միջոցով Ռուսական կայսրության և արևմտահայության միջև առկա «վտանգավոր» կապը[287]: Այդ է պատճառը, որ երիտթուրքք առաջնորդներն Ազգային սահմանադրության չեղարկմամբ բացառում էին Ազգային ընդհանուր (երեսփոխանական) ժողովի գոյությամբ պայմանավորված պոլսահայության «քաղաքական» ձգտումները՝ հայերին ստիպելով զբաղվել միայն կրոնական, դպրոցական և համայնքային այլևայլ գործերով:

---

[284] Տե՛ս Güllü R. E., նշվ. աշխ., էջ 471:
[285] Տե՛ս նույն տեղում, էջ 470.
[286] Նույն տեղում, էջ 471. Հմմտ.՝ BOA. A.DVNS.GMC.d., nr. 11, s. 16-19; BOA.DH.ŞFR. nr. 63/136; Arslan A., Ermeni Papalığı - Eçmiyazin Kilisesi'nde Stratejik Savaşlar, İstanbul, 2010, s. 133; Yalçınkaya A., Ermeni Patrikliği'nin Uluslararası Aktörleşmesi, ASAM Ermeni Araştırmaları Enstitüsü, Ermeni Araştırmaları 2. Türkiye Kongresi Bildirileri, Cilt: II, Ankara, 2007, s. 747-764.
[287] Տե՛ս Arslan A., II. Meşrutiyet Devrinde Eçmiyazin Katoğigosluğu'nun Etkisi Kırmaya Yönelik Çalışmalar, ASAM Ermeni Araştırmaları Enstitüsü, Ermeni Araştırmaları 2. Türkiye Kongresi bildirileri, Cilt: II, Ankara, 2007, s. 765-777.

Հայոց ցեղասպանության ծրագրի ճանապարհին բնաջնջման ենթակա հայ մտավորականության մեջ երիտթուրքերը կարևորում էին հայ հոգևոր դասի վերացումը, ինչը հետևողականորեն իրականացրին նախ Արևմտյան Հայաստանի, ապա ամբողջ կայսրության տարածքում: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին նրանք չհամարձակվեցին անմիջապես լուծարել Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի հայոց պատրիարքությունները՝ խուսափելով օտարերկրյա պետությունների հակազդեցությունից: Սակայն հատկապես 1916 թվականից, երբ հիմնականում ավարտվել էին հայության տեղահանությունն ու կոտորածը,նրանք կանգ չառան նաև հայկական ներքին ինքնավարության՝ հոգևոր կառույցների վերացման քայլերի առաջ:

Արդյունքում, 1916 թ. օգոստոսի 10-ին հրապարակվում է 39 կետից բաղկացած՝ Հայոց կաթողիկոսության և պատրիարքության վերաբերյալ կայսերական կանոնագիրը, որից հարկ ենք համարում առանձնացնել մի քանի ուշագրավ կետեր.

- Միավորել Սիսի և Աղթամարի կաթողիկոսությունները[288]՝ դրանց գումարելով Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի պատրիարքությունները: Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի հոգևոր իշխանությունն այսուհետ պատկանում է վերոհիշյալ կաթողիկոսությանը և պատրիարքությանը՝

[288] Աղթամարի հայոց կաթողիկոսությունը վերացել էր դեռևս 1895 թ.: Տվյալ դեպքում խոսքը հիմնականում նրա ենթակայության տակ գտնվող Վասպուրականի թեմերի մասին է:

խզելով Էջմիածնի կաթողիկոսության հետ ունեցած հարաբերությունները[289]:

- Կաթողիկոս-պատրիարքը բացառապես կրոնական հարցերով կարող է դիմել միայն Արդարադատության և դավանանքների նախարարությանը[290]:
- Կաթողիկոս-պատրիարքի թեկնածու կարող է համարվել այն եկեղեցականը, որը 1) ունի եպիսկոպոսական հոգևոր աստիճան, 2) ծնունդով Օսմանյան կայսրության հպատակ է, 3) պետության և հայկական համայնքի կյանքում ունի վստահություն, 4) դատապարտված չի եղել, 5) առնվազն հինգ տարի զբաղեցրել է առաջնորդական պաշտոն, 6) 45 տարեկանից բարձր է, 7) տիրապետում է պետական լեզվին, 7) հնարավորինս ծանոթ է պետության օրենքներին և կանոնագրերին[291]:
- Հոգևոր ժողովը բաղկացած է 12 եպիսկոպոսից և նախագահից: Վերջինիս պարտականությունները կատարում է կաթողիկոս-պատրիարքը: Այն իր բնույթով կրոնական գործերի վերահսկիչ մարմին է[292]:
- Խառը ժողովը բաղկացած է նախագահից, որի պարտականությունները կատարում է կաթողիկոս-պատրիարքը, և 12 անձից, որոնցից 4-ը Հոգևոր ժողովի անդամներ են, 8-ը՝ ոչ եկեղեցականներ: Այն զբաղվում է պատրիարքարանի ֆինանսական հարցերով[293]:

---

[289] Առաջին հոդված: Տե՛ս Կանոնագիր Հայոց կաթողիկոսութեան եւ պատրիաքութեան, «Բիւզանդիոն», Կ.Պոլիս, 1916, 2 Յուլիս: 1916 թ. լույս տեսած «Բյուզանդիոն» օրաթերթի՝ սույն ենթագլխում հիշատակված համարների բացառիկ օրինակները պահվում են Ստամբուլի հայոց պատրիարքարանի արխիվում:

[290] Երկրորդ հոդված: Տե՛ս նույն տեղում:

[291] Չորրորդ հոդված: Տե՛ս նույն տեղում:

[292] Հինգերորդ և վեցերորդ հոդվածներ: Տե՛ս նույն տեղում:

[293] Յոթերորդ և ութերորդ հոդվածներ: Տե՛ս նույն տեղում:

- Կ. Պոլսի առաջնորդը պետք է կրի «պատրիարքական փոխանորդ» տիտղոսը[294]:
- Չեղարկել 1863 թ. Հայոց ազգային սահմանադրությունը[295]:

Թալեաթ փաշայի՝ Ջեմալ փաշային ուղղված նամակից պարզ էր դառնում նաև, որ կաթողիկոս-պատրիարքի թեկնածուի պաշտոնում ի սկզբանե շրջանառվում էր Մեծի Տանն Կիլիկիո հայոց կաթողիկոս Սահակ Բ Խապայանի անունը[296]: Ուստի, Թալեաթ փաշան այդ պահին Երուսաղեմում գտնվող Ջեմալ փաշային հորդորում է անձամբ հանդիպել Սահակ կաթողիկոսի հետ՝ ապահովելով վերջինիս համաձայնությունը[297]: Սահակ կաթողիկոսն ընդունում է իրեն առաջադրված պաշտոնը ստանձնելու առաջարկը և անցնում իր պարտականությունների կատարմանը[298]: Վերոհիշյալ կայսերական կանոնագրի և Երուսաղեմում տիրող իրավիճակի մասին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին ուղղված Գյուտ եպիսկոպոս Մխիթարյանի զեկույցից տեղեկանում ենք, որ Սահակ կաթողիկոսը, այնուամենայնիվ, հաղթահարելով եղած դժվարությունները, տալիս է իր համաձայնությունը. «Եթէ սովորական վիճակի մէջ ըլլայինք, անտարակոյս չէի համակերպիր բարձրագոյն հրամանին, սակայն ներկայ տագնապներուն մէջ, նոր և մեծագոյն տագնապի մը առիթ չըլլալու համար, մանաւանդ վտարանդի ազգիս օգտակար ըլլալու յուսով այս, կառավարութեան գթոտ բարեացակամութեամբ և վանքին,

---

294 Քսանչորսերորդ հոդված: Տե՛ս Կանոնագիր Հայոց կաթողիկոսութեան եւ պատրիարքութեան, «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1916, Յուլիս 30:

295 Երեսունյոթերորդ հոդված: Տե՛ս Güllü R. E., նշվ. աշխ., էջ 477:

296 Տե՛ս BOA.DH.ŞFR. nr. 63/136.

297 Տե՛ս BOA. DH. ŞFR. nr. 518/46.

298 Տե՛ս BOA. DH.ŞFR. nr. 522/59.

միաբանութեան համերաշխ գործակցութեամբ կամայ-ակամայ խոնարհեցայ նոր խաչին տակ»[299]:

Ըստ այդմ, կաթողիկոս-պատրիարքի նստավայրը դառնում էր Երուսաղեմի Սրբոց Յակոբյանց վանքը[300]: Պատրիարքարանի արխիվը և եկեղեցապատկան ողջ գույքը կնքվեց և ավելի ուշ՝ 1922 թ. իր վերջնական հանգրվանը գտավ Երուսաղեմի հայոց պատրիարքարանում:

Ավելի ուշ՝ 1917 թ. դեկտեմբերի 8/9-ին անգլիացիների կողմից Երուսաղեմի գրավումից առաջ, նստավայրը փոխադրվեց Դամասկոս[301]: Սակայն կլիմայական պայմանների ազդեցությամբ առաջ եկած որոշակի անհարմարությունների պատճառով Սահակ կաթողիկոսը ստիպված եղավ դիմել արդարադատության և դավանանքների նախարարությանը՝ խնդրելով նստավայրը տեղափոխել Դամասկոսից շատ հեռու՝ Սիսի նախկին կաթողիկոսարան կամ Ադանա քաղաքի շրջակայքը[302]: Սահակ կաթողիկոսի դիմումի հիման վրա՝ երիտթուրքական Պատգամավորական ժողովի որոշմամբ կաթողիկոսություն-պատրիարքության նստավայրը փոխադրվում է Դամասկոս քաղաքի հյուսիսային շրջաններից մեկը[303]:

Օգոստոս ամսվա վերջին Սահակ կաթողիկոսը, խորհրդակցելով Սիսում գտնվող Օրմանյան սրբազանի հետ, Գաբրիել արքեպիսկոպոս

---

[299] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Դ, կազմեց՝ Բեհբուդյան Ս., Տ.Տ. Սահակ Բ Խապայեան կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ 1891-1940 թթ., Երևան, 1997, էջ 227-228:

[300] Օսմանյան կառավարության հրամանագրերից մեկի համաձայն նախապես որոշվել էր կաթողիկոս-պատրիարքի աթոռը հաստատել Սիսում (տե՛ս BOA. DH.ŞFR. nr. 63/136): Սակայն հարկ է նշել, որ հետագայում օսմանյան իշխանությունները հրաժարվել են այդ մտքից՝ հարմար գտնելով Երուսաղեմը՝ որպես քրիստոնեական աշխարհի կենտրոն, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկար ժամանակ Երուսաղեմում հայերն ունեցել են առանձնակի ներկայություն (տե՛ս Güllü R. E., նշվ. աշխ., էջ 471):

[301] Տե՛ս Özdemir H., Cemal Paşa Ve Ermeni Göçmenler- 4. Ordu’nun İnsani Yardımları, İstanbul, 2009, s. 223-224.

[302] Տե՛ս BOA. BEO. nr. 4510/338204 lef 3.

[303] Տե՛ս Güllü R. E., նշվ. աշխ., էջ 485, 486:

Ջևահիրջյանին նշանակում է Կ. Պոլսի կաթողիկոսական-պատրիարքական փոխանորդ[304]:

Սակայն կաթողիկոսի գլխավորությամբ նշանակվեցին նաև Յոգևոր ժողովի անդամները՝ Ստեփաննոս արքեպիսկոպոս Յովակիմյան (Նիկոմեդիա), Եղիշե եպիսկոպոս Չիլինկիրյան (Երուսաղեմ), Կարապետ եպիսկոպոս Մազլմյան (Բանդըրմա-Բալըքեսիր), Պետրոս եպիսկոպոս Սարաճյան (Յաճըն), Գարեգին ծայրագույն վարդապետ Խաչատուրյան (Քոնիա), Մովսես վարդապետ Ոսկերչյան (Անտիոք), Մաղաքիա եպիսկոպոս Տերունյան (Կ. Պոլիս), Մեսրոպ եպիսկոպոս Նարոյան (Կ. Պոլիս), Գյուտ եպիսկոպոս Մխիթարյան (կաթողիկոսի քարտուղար), Դավիթ ծայրագույն վարդապետ Տերտերյան (Սրբոց Յակոբյանց վանքի լուսարարապետ), Տրդատ եպիսկոպոս Պալյան (Մանիսա) և Գրիգորիս վարդապետ Պոյաճյան (Սրբոց Յակոբյանց վանքի միաբան)[305]:

1917 թ. սկզբներին նշանակվեցին նաև Խառը ժողովի ութ քաղաքացիական անդամները՝ Մանուկ Շահպազյան (Ադանա), Նազարեթ Պիլեզիքճյան (Մարաշ), Յարություն Թերզյան (Յաճըն), Մելքիս Բարեղամյան (Քոնիա), Սարգիս Վերանյան (Բանդըրմա), Գևորգ Մուստեղյան (Մերսին), Վարդան Սիրունյան (Կյուրին) և Գրիգոր Թեպելեքյան (Սիվրիհիսար)[306]:

Յարկ է նշել, որ այդ նույն ժամանակահատվածում Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ներսում առաջ էին եկել նոր հուզումներ: Քանի որ վարչական ժողովների պաշտոնավարության շրջանը լրացել էր, Ազգային

[304] Տե՛ս Տ.Գաբրիէլ Արքեպսկ.Ճէվահիրճեան կաթողիկոսական և պատրիարքական փոխանորդ Պոլսոյ, «Բյուզանդիոն», 1916, 18 Օգոստոս:Յմմտ.՝ BOA. DH.ŞFR. nr. 530/18.

[305] Տե՛ս BOA. DH. EUM. 2 Şb. nr. 39/35 lef 17. Յմմտ.՝ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, նշվ. աշխ., էջ 229; Աղաւնունի եպիսկոպոս Մ., Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի,Երուսաղէմ,1929,էջ 438l:

[306] Տե՛ս BOA. DH. EUM. 2. Şb. nr. 54/67 lef 16. Յմմտ.՝ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության,նշվ.աշխ.,էջ 230:

կանոնադրության համաձայն, պաշտոնական լիազորությունների շարունակման համար արտոնություն ստանալու նպատակով պետք էր դիմել արդարադատության և դավանանքների նախարարությանը: 1916 թ. մարտի 18-ին տեղի ունեցած Խառը ժողովի նիստում Զավեն պատրիարքը ստիպված եղավ ներկաներին հաղորդել հայոց պատրիարքարանը փակելու վերաբերյալ իր ստացած տեղեկությունները՝ պնդելով, որ օսմանյան իշխանություններին ուղղված նոր դիմումը հնարավորություն կընձեռեր արագացնելու պատրիարքությունը լուծարելու գործընթացը[307]: Թեև այդ մասին դեռևս չկար որևէ պաշտոնական հաղորդագրություն,սակայն հաջորդող ամիսներին պատրիարքարանի շուրջ սաստկացող անորոշ իրադրությունը անխուսափելի էր դարձնում վերջինիս վերահաս վախճանը: Իրենց հերթին, վերոհիշյալ ժողովի մասնակիցներն արդարադատության և դավանանքների նախարարություն ուղարկվելիք նամակի առնչությամբ դրսևորում էին անփույթ շտապողականություն՝ անհանգստություն պատճառելով թե՛ անձամբ Զավեն պատրիարքին և թե՛ նրա շուրջը համախմբված քիչ թվով եկեղեցականներին: Ահավասիկ, Զավեն պատրիարքն այդ մասին գրում է. «...շատ տխուր էի եւ ընկճուած, մասնաւորապէս ժողովականներու ձեռնթափութենէն զգացուած ըլլալով,վասնզի այս կերպով ինքզինքս մինակ մնացած կ'զգայի Պատրիարքարանին մէջ: 1916 Ապրիլէն մինչեւ Յուլիս, մէն կողմէ լքուած եւ չափազանց յուսահատ շրջան մը անցուցի, Պատրիարքարանին մէջ միայն

[307] Տե՛ս Զաւէն Արքեպս.,նշվ.աշխ.,էջ 188:

պաշտոնեաներով մնացած, կարծես սպասելով մօտալուտ փոթորիկի մը…»[308]:

Կարճ ժամանակ անց՝ 1916 թ. հուլիսի 28-ին, հայոց պատրիարքարանի դռների առջև հայտնվեցին ոստիկանության տեսուչ Ահմեդ բեյը և կրոնական տեսուչ Բեհա բեյը՝ պատրիարքին ուղղելով արդարադատության և դավանանքների նախարարի պաշտոնական նամակը. «Ամենապատիւ Տէ՛ր, Կրօնից նախարարութեան կողմէ Վեհ. Սուլթանին ներկայացուած եւ Սուլթանական բարձր հրամանով վաւերացուած եւ այսօր Թաքվիմը Վաքայի մէջ հրատարակուած Հայոց Կաթողիկոսութեան եւ Պատրիարքութեան կանոնագրութեան համաձայն Սիսի եւ Աղթամարի Կաթողիկոսութիւնները եւ Կ. Պոլսոյ եւ Երուսաղեմի Պատրիարքութիւնները եւս այս կաթողիկոսութեան միացած է: Հետեւաբար Ձեր պաշտօնը եւ Հայոց պատրիարքարանի կազմակերպութիւնը վերջ գտած ըլլալով՝ Պատրիարքարանի վերաբերեալ բոլոր գոյքերը եւ պաշտօնաթուղթերը Կաթողիկոս-Պատրիարքին կողմէ փոխանորդ նշանակուելիք անձին յանձնուելու եւ մինչեւ այն ժամանակ ոստիկանական պաշտպանութեան տակ մնալու համար, Ձեր Ամենապատուութեան մասնակցութեամբ կնիքի տակ առնուելու պաշտօն տրուած է ոստիկանութեան Ընդհ. Տնօրէն՝ Ահմէտ եւ Կրօնից տեսուչ՝ Պէհա պէյերուն, ըստ այնմ պարտ ու պատշաճը գործադրելու համար այս պաշտօնագիրը տրուեցաւ»[309]: Նրանց հեռանալուց հետո, սակայն, հայոց հոգևոր առաջնորդի պաշտոնից զրկված Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանը հուսախաբ չեղավ և անմիջապես քայլեր ձեռնարկեց իրավիճակը փրկելու ուղղությամբ: Օսմանյան

---

[308] Նույն տեղում, էջ 188-189, 191:
[309] Նույն տեղում, էջ 192:

իշխանություններին հավաքական դիմում ուղարկելու առաջարկությամբ նրա կողմից ուղարկված Սմբատ վարդապետը հանդիպումներ ունեցավ Կ. Պոլսում մնացած մի քանի եպիսկոպոսների՝ Եղիշե Դուրյանի, Վահրամ Մանկունու, Գաբրիել Ջևահիրջյանի, Հմայակ Դիմաքսյանի, Դանիել Հակոբյանի և այլոց հետ: Ցավոք, նրանց պատասխանը հետևյալն էր. «...ազգը Պատրիարք ունի, անոր պարտականութիւնն է դիմում ընել»[310]:

Զավեն պատրիարքը կանչվեց ոստիկանություն և տեղեկացվեց. «Կառավարութիւնը յարմար չի տեսներ Ձեր Պոլիս բնակութիւնը, ուստի պէտք է քանի մը օրէն մեկնիք Պաղտատ Ձեր հայրենիքը, ինքնաբերաբար երթալու ձեւով, առանց աղմուկի»[311]: Զավեն սրբազանը խնդրեց մի քանի օր ժամանակ տալ իրեն, որպեսզի կարողանա ավարտել պատրիարքարանի կիսատ թողած գործերը: Նույն ժամանակամիջոցին ամերիկյան դեսպանատան թարգմանիչ, ազգանպաստ գործիչ Արշակ Շմավոնյանը դիմեց ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուին, ինչպես նաև գերմանական դեսպանատանը՝ խնդրելով միջնորդել, որպեսզի կառավարությունը թույլատրի Զավեն պատրիարքին մնալ Կ.Պոլսում, սակայն ապարդյուն[312]:

Հոգեբանական այդպիսի ծանր պայմաններում հայտնված Զավեն Տեր-Եղիայանին այլ բան չէր մնում, քան հավաքել անձնական իրերն ու հեռանալ պատրիարքարանի շենքից: Նա աքսորվեց Բաղդադ, այնուհետև չհարմարվելով պատերազմական

---

310 Նույն տեղում, էջ 194:

311 Նույն տեղում, էջ 198:

312 Պալաքեան եպիսկ. Գ., Հայ գողգոթան. Դրուագներ հայ մարտիրոսագրութենէն. Պեռլինէն դէպի Տէր Զօր, Բ. Հատոր, Փարիզ, 1959, էջ 103, 104: Զավեն պատրիարքի աքսորի վերաբերյալ այս և իր գրքում հիշատակվող մյուս տեղեկությունները Գրիգորիս եպիսկոպոս Պալաքյանին հաղորդել է պատրիարքի եղբոր դուստրը, ով նրան ուղեկցել է Կ.Պոլսից մինչև Բաղդադ և Մոսուլ: Տե՛ս Նույն տեղում, էջ 107:

դժվարություններին՝ փոխադրվեց իր ծննդավայր՝ Մոսուլ, որտեղ նա մնաց մինչև 1918 թ. Հայոց ազգային սահմանադրության վերականգնումը և Կ. Պոլիս վերադառնալը: Արդարադատության և դավանանքների նախարարության որոշմամբ նրան հատկացվեց ամսական 2500 քուրուշ թոշակ[313]:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի փակումը, ըստ էության, պետք է դիտարկել երիտթուրքական կառավարության հայատյաց ցեղասպան քաղաքականության շղթայի մեջ: Թեև պոլսահայ բնակչությունը զերծ մնաց Օսմանյան կայսրության զանազան հայաբնակ նահանգներում դաժանությամբ կատարվող բուն ցեղասպանական գործողություններից, սակայն պոլսահայ մտավորականության ջարդը և պատրիարքի հեռացումը Կ. Պոլսից քաղաքի բնակչությանը նույնպես ստիպեցին դեմ հանդիման կանգնել թուրքական ջարդարար մեքենայի առաջ, որն ամեն վայրկյան պատրաստ էր ամբողջությամբ կյանքի կոչել իր ծրագիրը:

Թե ինչպես այդ տարիներին պոլսահայերը դիմակայեցին իրենց բաժին ընկած փորձություններին, անշուշտ, առանձին ուսումնասիրության նյութ է: Սակայն վստահ կարող ենք նշել, որ հոգևոր և քաղաքական առաջնորդի բացակայությունը համայնքի կազմակերպման տեսանկյունից խիստ զգալի էր թե՛ պոլսահայ և թե՛ առհասարակ արևմտահայ իրականության մեջ:

Սակայն հարցը չէր լուծվում բացառապես պատրիարքարանի փակմամբ, քանի որ երիտթուրքական իշխանությունների գլխավոր նպատակն ի սկզբանե եղել էր զրկել Հայոց ազգային սահմանադրության հռչակմամբ հայկական համայնքին տրված իրավական

[313] Տե՛ս BOA. MV. nr. 203/14.

կարգավիճակից:Մասնավորապես,Ընդհանուր ժողովի գործունեությունն իր մեջ պարունակում էր նաև քաղաքական կառույցի բաղադրիչ, ինչը փաստացի կերպով լուրջ մարտահրավեր էր երիտթուրքական կառավարությանը: Ավելին, Ընդհանուր ժողովը լայն հնարավորություններ էր ընձեռում եվրոպական պետությունների, ինչպես նաև Ռուսական կայսրության հետ փոխադարձ համագործակցության համար: Ուստի, երիտթուրքական կառավարությունը, օգտագործելով Առաջին աշխարհամարտի տարիներին ստեղծված պատեհ առիթը, անմիջապես ձեռնամուխ եղավ իրականություն դարձնելու վաղուց փայփայած ծրագիրը, այն է՝ Հայոց ազգային սահմանադրության չեղարկմամբ և հայոց պատրիարքարանի լուծարմամբ կտրել արևմտահայության ողջ մնացած հատվածին՝ ինքնակազմակերպվելու և արտաքին աշխարհի օգնությանը դիմելու ցանկացած հնարավորությունից:

## 2.6.Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի գործունեությունն աքսորի տարիներին (1916-1918)

1916 թ. օգոստոսի 22-ին Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանը, հոգեբանական ծանր կացության մեջ գտնվելով,ստիպված եղավ իր եղբոր ու նրա դստեր հետ հեռանալ Կ. Պոլսից և թուրք ոստիկանների ուղեկցությամբ ճանապարհ ընկնել դեպի Բաղդադ, որտեղ նա եղել էր շուրջ 26 տարի առաջ[314]: Հատկանշական է, որ հայոց պատրիարքին Բաղդադ աքսորելու վերաբերյալ երիտթուրքական

[314] Տե՛ս BOA. DH. EUM. 2 Şb. nr. 31/61.

իշխանությունների կայացրած որոշումը խիստ անհանգստացնում էր անձամբ Զավեն պատրիարքին, քանի որ վերջինս գրեթե վստահ էր, որ ինքն էլ կարժանանար իր հայրենակիցների ճակատագրին. «Որքան ալ այս մասին ապահովիչ խօսքերը ինծի կը հասնէին, սակայն ես Պոլիսէն մեկնիլ կը պատրաստուէի դէպի մահ դիմելու համոզումով: Կը խորհէի թէ Թուրք կառավարութիւնը հարիւր հազարաւոր հայ մահացնել է վերջ զիս ինչո՞ւ պիտի վարանէր»[315]:

Մեծ դժվարություններով անցնելով մի շարք քաղաքներով և գյուղերով՝ Զավեն սրբազանն ականատես եղավ խոշոր ավերածությունների և մարդկային զգալի կորուստների: Արևմտյան Հայաստանից բռնությամբ տեղահանված հայության հավաքակայաններից մեկը համարվող Հալեպի նահանգի Մեսքենե քաղաքում՝ Եփրատ գետի ափին, նա իր աչքերով տեսավ, թե ինչպես էր «բարբարոս Թուրքը՝ իր երկիրին աղն ըլլալու սահմանուած եւ անոր համ ու հոտ տուող տարրը՝ Հայը բնաջնջած էր, անոր արիւնը եւ արցունքը խառնելով Եփրատի ջուրերուն, Երզնկայէն, Քէմախէն, Ակնէն եւ Խարբերդէն վար մինչեւ այս անապատները»[316]: Այստեղ ապաստանած հայ գաղթականներից մեկը, հանկարծ նկատելով սրբազանին, մոտեցավ նրան և աղաղակեց. «Allah'a şükür, bir Ermeni gördüm ki sürgün değildir» (թուրքերեն՝ «Փա՛ռք Աստծո, մի հայ տեսա, որ աքսորված չէ»)[317]: Իսկ Համամից Ջիրաթ ճանապարհ ընկնելիս հայ գաղթականներն այնպես էին շուրջկալել պատրիարքին տանող կառքը, փորձելով մոտենալ նրան և համբուրել նրա ձեռքը, որ, այդ տեսարանից ազդված, Զավեն սրբազանը բռնով արծաթյա դրամներ նետեց խեղճ տարագրյալների կողմը:

---

[315] Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 202:
[316] Նույն տեղում, էջ 209:
[317] Նույն տեղում:

Նույն թվականի սեպտեմբերի 26-ին Զավեն սրբազանը ժամանեց Բաղդադ, որտեղ նա մնաց հինգ ամիս: Ամբողջ ժամանակը նա անցկացրեց տանը՝ խուսափելով ավելորդ անգամ թուրքական ոստիկանության տեսադաշտում հայտնվելուց, քանի որ նրա տունը հեռվից հսկում էր մի թուրք ոստիկան: Միայն մեկ անգամ նա հանդիպեց Բաղդադի կուսակալ Ալի Սուատ բեյի հետ՝ հայտնելով կառավարության կողմից տրվելիք թոշակի մասին:

1917 թ. փետրվարի 24-ին Քութի գրավումից հետո անգլիական բանակը շարժվեց դեպի Բաղդադ: Կառավարության ջանքերով քաղաքի բնակչությունն աստիճանաբար փոխադրվեց Մոսուլ: Թուրքական իշխանությունների որոշմամբ՝ մարտի 2-ին Զավեն սրբազանը և իր եղբոր դստեր՝ Վարդանուշի հետ թուրք ոստիկանի ուղեկցությամբ Բաղդադից ճանապարհ ընկավ դեպի Մոսուլ: Շուտով պարզ դարձավ, որ մարտի 11-ին անգլիական զորքը գրավել է Բաղդադը:

Մոսուլում Զավեն սրբազանը արժանացավ քաղաքի կուսակալ Հայդար բեյի և ոստիկանապետ Մեհմեդ Խալիդի սիրալիր ընդունելությանը: Սակայն իրավիճակը փոխվեց մեկ ամիս անց, երբ Հայդար բեյին վերոհիշյալ պաշտոնում փոխարինեց Բաղդադի կուսակալ Մեմդուհ բեյը, ով անմիջապես հրամայեց խիստ հսկողության տակ վերցնել նախկին պատրիարքի տունը:

Մոսուլի անշուք հյուղակներում իրենց գոյությունը հազիվ պահպանող բազմաթիվ հայ գաղթականներ էին հանգրվանել[318]: Գրեթե բոլոր փողոցները լցված էին հայ որբերով ու կանանցով, որոնք մուրացկանություն էին անում: «Տեսնելով

[318] Առավել մանրամասն տե՛ս Տէր Յակոբեան Մ., Իրաքահայ կեանքէն. Մոսուլ հասնող գաղթականութիւնը (1915-1918)՝ ընդելուզուած Գրիգոր աւագ քահանայ Տէր Յակոբեանի ինքնակենսագրութեամբ, Ա.հատոր, Պէյրութ, 1981:

որ Հայ մանուկներ եւ կիներ փողոցները կը պտտին եւ կը մուրան շատ նեղուեցայ, որովհետեւ Հայուն մուրալը չէի տեսած»[319],- իր հուշագրության մեջ գրում է Զավեն Տեր-Եղիայանը: Թեև նա փորձում էր զերծ մնալ այդ ահասարսուռ տեսարաններից, սակայն միտքն ամբողջությամբ իր հայրենակից տարագրյալների հետ էր: Նա իր խնայած գումարով կարմիր հաստկտոր գնեց և մուրացկան դարձած հայ երեխաների համար իր ձեռքով շապիկ ու վարտիք կարեց: Այդպիսով, մի քանի օրվա մեջ, Մոսուլի նեղլիկ փողոցները լցվեցին կարմրազգեստ հայ որբերով: Սակայն որպեսզի նրանք իրենց նույնազույն զգեստով չգրավեն տեղական իշխանությունների ուշադրությունը, սրբազանը հնարամտորեն զգեստների գույնն այնուհետև փոխեց կապույտի[320]:

Հատկանշական է, որ Զավեն սրբազանին օգնության ձեռք մեկնեցին անձամբ կաթողիկոս-պատրիարք Սահակ Բ Խապայանը՝ Երուսաղեմից նրան ուղարկելով 500 թուրքական թղթադրամ[321], ինչպես նաև քաղաքի հակոբիկյան և կաթոլիկ ասորիները, եզդիները և բազմաթիվ հայ անհատներ:

Սովի և ծայրաստիճան թշվառության մատնված մեծաթիվ հայ գաղթականներն արաբների աջակցությամբ շուտով փախուստի՝ իրենց փրկությունը գտնելով անգլիական տիրապետության ներքո: Բաղդադի նախկին ոստիկանապետ, զորահրամանատար Մուհամմադ Խալիլ փաշան այս կապակցությամբ մեղադրանք էր հնչեցրել նախկին պատրիարքի հասցեին՝ հայտարարելով. «Ցորչափ պատրիարքը հոս է, այս փախչողներու խումբերը պիտի չդադրին: Ինքն է

[319] Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 233:
[320] Տե՛ս նույն տեղում:
[321] Պալաքեան եպիսկ. Գ., նշվ. աշխ., էջ 107:

ասոնք կազմակերպողը»[322]: Իր հերթին, Մոսուլի կուսակալ Մեմտուհ բեյը ներքին գործերի նախարարությանն ուղարկել էր մի պահանջագիր, որով հայտնում էր, թե «այլևս չի կարող հանդուրժել նախկին պատրիարքի ներկայությունն իր քաղաքում և մտադիր է նրան աքսորել Երուսաղեմ»[323]: Ըստ էության, ներքին գործերի նախարարությունն անմհիմն էր համարել վերոհիշյալ բողոքագրերը և բացասական պատասխան էր տվել նահանգային իշխանություններին[324]: Ինչպես նշում է Զավեն պատրիարքն իր հուշագրության «Թրքական Մուսուլի մէջ» ենթագլխում, Մոսուլի կուսակալի իրական նպատակն էր նախկին պատրիարքին աքսորել դեպի Դեր Զոր[325]: Ներքին գործերի նախարարությանն ուղարկված հեռագրերից մեկից պարզ էր դառնում, որ Մեմտուհ բեյը, վախենալով, որ սրբազանը Դեր Զորի ճանապարհին «կդիմի փախուստի», խուսափել էր ավելորդ պատասխանատվությունից[326]: Մի առիթով նույնիսկ նա իր տանը ծառայող հայուհիներից մեկին խոստովանել էր, թե «այս Պատրիարքին միսը չկրցանք ուտել»[327]:

Հետագայում նույնպես բազմաթիվ բողոքներ հնչեցին Զավեն Տեր-Եղիայանի հասցեին՝ նրան մեղադրելով ընդհանուր առմամբ «տարածաշրջանում տիրող խռովությունների մեջ»[328]: Մասնավորապես, ներքին գործերի նախարարությանն ուղղված Մոսուլի կուսակալի հաղորդագրություններից պարզ էր դառնում, որ նախկին պատրիարքն իբրև թե անմիջական մասնակցություն է ունեցել Բաղդադի երկաթուղում աշխատող հայերի փախուստի

---

322 Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 238:
323 BOA. DH.ŞFR. nr. 548/29. Հմմտ.՝ BOA. DH.ŞFR. nr. 578/9.
324 Տե՛ս BOA. DH.ŞFR. nr. 84/196.
325 Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 239, 240:
326 Նույն տեղում:
327 Տե՛ս նույն տեղում, էջ 238:
328 Güllü R. E., նշվ. աշխ., էջ 493:

կազմակերպման մեջ, ինչն էլ հաճախ առիթ է եղել հայերի ձեռքով մուսուլմանների սպանության և վիրավորելու դեպքերի[329]: Հատկանշական է, որ Զավեն պատրիարքը դեռևս 1915 թ. օգոստոսին, երբ թուրքական կառավարության հրամանով Բաղդադի երկաթուղու տնօրինությանը հարկադրվեց իր հայ աշխատողներից 850 հոգու իրենց ընտանիքներով փոխադրել տերության հեռավոր տարածքներ, հայ ժողովրդի և անձամբ իր անունից շնորհակալություն հայտնեց Բաղդադի երկաթուղու ընկերության գլխավոր տնօրեն Գյունթերին՝ ի նպաստ հայ աշխատողների և նրանց ընտանիքների անվտանգության ուղղված միջամտության[330]: Թերևս այդ «շնորհակալական նամակն» էր պատճառ հանդիսացել, որ Մոսուլի իշխանությունները կասկածի առնեն պատրիարքի մասնակցությունը Բաղդադի երկաթուղում աշխատող հայերի և նրանց ընտանիքների փախուստի կազմակերպմանը և անհիմն զրպարտություններ ուղղեն պատրիարքի անձին:

Մոսուլի վիլայեթի իշխանությունները համառորեն շարունակում էին դիմել ներքին գործերի նախարարությանը՝ առաջարկելով նախկին պատրիարքին աքսորել մեկ այլ վիլայեթ, սակայն կուսակալի անհիմն առաջարկները շարունակաբար մերժվում էին ներքին գործերի նախարարության կողմից: Զավեն պատրիարքը շարունակում էր մնալ Մոսուլում՝ օգտակար լինելով ինչպես հայ,

---

[329] Տե՛ս նույն տեղում:

[330] Տե՛ս Մեյեր Է., Բերքյան Յ. Ա., Հռենոսի և Արաքսի միջև. 900 տարվա գերմանա-հայկական հարաբերություններ, Երևան, 2016, էջ 89: Բեռլին-Բաղդադ երկաթուղում աշխատող հայերի մասին տե՛ս նաև հայագետ, գերմանագետ, լեզվաբան, ԵՊՀ պրոֆեսոր Դորա Սաքայանի՝ շվեյցարական արխիվներից հավաքած և գոթերեն ձեռագրերից վերծանած՝ Հայոց ցեղասպանության ականատեսների՝ շվեյցարացի ամուսիններ Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթիների օրագրությունները՝ Սաքայան Դ., «Նրանց քշում են անապատները...». Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթիները Հայոց ցեղասպանության ականատեսներ (1915-1918), Երևան, 2017:

այնպես էլ մուսուլման կարիքավոր գաղթականներին:

1918 թ. հուլիսի 3-ին սուլթան Մեհմեդ Հինգերորդ Ռեշադի մահվանից հետո գահ բարձրացավ Օսմանյան կայսրության վերջին սուլթանը՝ Մեհմեդ Վեցերորդ Վահիդեթթինը, ում հրամանով հայտարարվեց քաղաքական հանցավորների համաներում: Լուրը ստանալուն պես Մոսուլի կուսակալը դիմեց կենտրոնական իշխանություններին՝ պարզելու, թե արդյոք հայոց նախորդ պատրիարքը նույնպես ենթակա՞ է ներման[331]: Թեև ներքին գործերի նախարարության պատասխանը դրական եղավ, սակայն այդ մասին դեռևս որևէ պաշտոնական հաղորդագրություն չկար:

1918 թ. հոկտեմբերի կեսերին, երբ թուրքական բանակն աստիճանաբար սկսեց նահանջել անգլիացիների շեշտակի առաջխաղացումից, Մոսուլի հանձնումն անխուսափելի դարձավ: Նույն թվականի հոկտեմբերի 30-ին Հունաստանի Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստում՝ անգլիական «Ագամեմնոն» հածանավի վրա, Անտանտի երկրների և Օսմանյան կայսրության միջև զինադադար կնքվեց: Նոյեմբերի 6-ին անգլիական բանակին հաջողվեց վերջնականապես դուրս մղել թուրքական տարրը Մոսուլից և իշխանությունը վերցնել իր ձեռքը:

Անգլիական բանակի կողմից Մոսուլի գրավումից հետո Զավեն սրբազանն ակտիվորեն սկսեց զբաղվել Հայոց ցեղասպանության հետևանքով հիմնականում Սղերդից ու Կարինից եկած և Մոսուլում ապաստան գտած հայ գաղթականության հարցերով: Շուտով Զավեն սրբազանը ծանոթացավ քաղաքի կառավարիչ, գնդապետ Լիչմենի հետ, և այդ բարեկամական հարաբերությունները մեծապես նպաստեցին նրա

[331] Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 241:

ձեռնարկած գործին: Այդ հանդիպման ժամանակ Զավեն սրբազանը գնդապետ Լիչմենին խնդրեց, որ նա «իր հոգածութիւնը տարածէ մեր տարագիր աղքատ ժողովուրդին վրայ եւս»[332]: Ըստ այդմ, Զավեն սրբազանն առաջարկեց քաղաքի ոստիկանական ուժերի օգնությամբ շուտափույթ կազմակերպել հայ որբերին և կանանց մուսուլմանների տներից հավաքելու և իր համայնքի հոգածության տակ առնելու գործը, նրանց կարիքները հոգալու համար հատկացնելու 2000 ռուփի, 1 տոննա բուրդ և օրական 500 կիլոգրամ ցորեն: Գնդապետ Լիչմենն անձամբ խոստացավ կատարել նրա խնդրանքը և համապատասխան հրամանագրով տեղյակ պահել ոստիկանությանը: Դեկտեմբերի 10-ին Մոսուլում լույս տեսնող «Մոսուլ» պաշտոնաթերթում նրա հրահանգով տարածվեց մի հայտարարություն, որով «կը պատուիրուէր նահանգին ժողովուրդին որ իրենց քով անընդունելի կերպով Հայ կին, տղայ կամ աղջիկ ունեցողները իրեն յանձնեն»[333]: Հատկանշական է, որ մինչև 1917 թ. վերջը Մոսուլում կարիքավոր գաղթականների թիվը հասնում էր շուրջ 1700-ի[334]:

Դրանից զատ Զավեն սրբազանը նամակ գրեց Բաղդադի հայոց թեմի առաջնորդ Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանին՝ նրան խնդրելով տեղափոխվել Մոսուլ և աջակցել հայ տարագրյալների փրկության գործին: Սակայն, ինչպես նշում է պատրիարքն իր հուշագրության մեջ, Մուշեղ եպիսկոպոսի «...ժամանումը օգտակար չեղաւ, եթէ ոչ վնասակար: Մուշեղ եպս. յախուռն քայլերով վէճի ու գայթակղութեան պատճառ եղաւ»[335]: Խնդիրն այն է, որ երբ Մուշեղ եպիսկոպոսը Էնեզեի շեյխ Ֆեհեդի արաբական աշիրեթից հայ աղջիկներին ու որբերին

[332] Նույն տեղում, էջ 247:
[333] Նույն տեղում, էջ 254:
[334] Տե՛ս նույն տեղում, էջ 249:
[335] Նույն տեղում, էջ 251:

հավաքելու նպատակով դիմել էր գնդապետ Լիչմենի աջակցությանը, վերջինս բացասական պատասխան էր տվել՝ խուսափելով արաբական աշիրեթների հետ ավելորդ վիճաբանության մեջ մտնելուց: Այս կապակցությամբ Մուշեղ եպիսկոպոսն իր «Դիտումներ եւ դատումներ» խորագրով օրագրության մեջ գրում է. «Անգղ. զինուորական կառավարութիւնը կը քաշուի խուզարկելէ արաբներու վրանները, նամէհրամի[336] և աւելի քաղաքական պատճառներով»[337]:

Ահավասիկ, երբ Զավեն արքեպիսկոպոսն ու Մուշեղ եպիսկոպոսը Մոսուլում ապաստանած շուրջ 1500 հայ գաղթականներին տրվող օգնության ծավալները մեծացնելու միասնական խնդրագրով դիմեցին գնդապետ Լիչմենին, նա ստիպված եղավ հիշեցնել Մուշեղ եպիսկոպոսի՝ իրեն ուղղված բողոքագիրը և մերժել նրանց[338]: Ըստ երևույթին, նրանց միջև ծագած անախորժությունները, հատկապես Մոսուլից Զավեն սրբազանի հեռանալուց հետո, պատճառ հանդիսացան, որպեսզի անգլիական բարձր զորահրամանատարությունը՝ ի դեմս գնդապետ Լիչմենի, դադարեցնի իր աջակցությունը Մոսուլի հայ գաղթականներին: Հատկանշական է Արսեն Հացագործյանի՝ Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանին տված բնութագիրը. «Շնորհիվ իր անթաքթ քաղաքականութեան ու անհատական գործերուն աւելի ևս բարդացուց գործերը... անհրաժեշտ է փոխարինել զայն աւելի կարող և Խրիմյան հոգին կրող անձնազոհ հովիւով մը,

---

336 Թուրքերեն «նամահրեմ» (nâmahrem) բառի աղավաղված տարբերակն է: Նկատի ունի չամուսնացած աղջիկներին:

337 Սերոբեան Մ., Դիտումներ եւ դատումներ (էջեր օրագրէս), Պէյրութ, 1932, էջ 115:

338 Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 251:

մինչեւ որ վերջ գտնէ Միջագետքի Հայութեան բաբելոնեան տարագրութիւնը»[339]:

Դեկտեմբերի 24-ին գնդապետ Լիչմենն առանձին հանդիպում ունեցավ Զավեն սրբազանի հետ՝ նրան հայտնելով, որ Մեծ Բրիտանիայի պատերազմի նախարարությունը ներքին գործերի նախարարության թույլտվությամբ պարտավորվում էր ապահովել նախկին պատրիարքի վերադարձը Կ. Պոլիս: Ինչպես հետագայում պարզ դարձավ, զինադադարը կնքվելուն պես Կ. Պոլսի հայոց կաթողիկոսական-պատրիարքական փոխանորդության կողմից արդարադատության և դավանանքների նախարարությանն էր ուղարկվել մի պահանջագիր, որով կոչ էր արվում չեղարկել Կ. Պոլսի հայոց պատրիարքության և Կիլիկիայի հայոց կաթողիկոսության միացումը, վերահաստատել 1863 թ. Հայոց ազգային սահմանադրությունը և վերականգնել Կ. Պոլսի նախկին հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի պատրիարքական լիազորությունները[340]:

1918 թ. նոյեմբերի 11-ին ձևավորված՝ Թևֆիկ փաշայի կառավարության առաջին քայլերից մեկը վերաբերում էր 1916 թ. Կ. Պոլսի հայոց պատրիարքության լուծարման վերաբերյալ կանոնագրի չեղարկմանը և 1863 թ. Հայոց ազգային սահմանադրության վերահաստատմանը[341]: Ընդ որում, թուրքական պաշտոնական շրջանակները պնդում էին, որ պատերազմի ընթացքում «հայերի հանդեպ անօրինականություն գործած անձինք կպատժվեն, հայերի հետ միասին մյուս փոքրամասնությունները ևս կներգրավվեն

[339] Մարգարյան Ն., Հայ գաղթականների վրանաքաղաքներն Իրաքում 1918-1922 թթ., «Ցեղասպանագիտական հանդես», N 2, Երևան, 2016, էջ 73:
[340] Sabah, İstanbul, 7 Kasım 1918.
[341] Güllü R. E., նշվ. աշխ., էջ 495:

պետական կառավարման համակարգում, և այդպիսով սկիզբ կդրվի մերձեցման մի գործընթացի»[342]:

Այսպիսով, որոշումն ընդունելուց հետո կառավարությունը պատրիարքի գտնվելու վայրը ճշտելու նպատակով դիմում է Մեծ Բրիտանիայի պատերազմի նախարարությանը: Վերջինիս աջակցությամբ դեկտեմբերի 29-ին Զավեն սրբազանը Մոսուլից ճանապարհ ընկավ Կ.Պոլիս՝ ստանձնելու իր պատրիարքական պարտականությունները:

Ամփոփելով՝ նշենք, որ երիտթուրքական իշխանությունների կողմից Կ. Պոլսի հայոց պատրիարքության վերացմամբ ոչ միայն խզվեց Ռուսական կայսրության հովանավորությամբ Էջմիածնի կաթողիկոսության և արևելահայության միջամտությունն արևմտահայ կյանքին, այլև արմատախիլ արվեց արևմտահայության հոգևոր-մշակութային և քաղաքական կենտրոնը հանդիսացող Կ.Պոլսի կապը Հայոց ցեղասպանության հետևանքով իրենց ծննդավայրից կտրված հայ գաղթականների հետ: Այդուամենայնիվ, գաղտնիության պայմաններում, Կ. Պոլսի պատրիարքարանի ջանքերով և անձամբ Զավեն պատրիարքի անմիջական նախաձեռնությամբ՝ իրագործվեց արևմտահայ գաղթականների փրկության և նրանց խնամքի կազմակերպման գործը, որը շարունակվեց Մոսուլում, իսկ ավելի ուշ նաև՝ Կ. Պոլսում, զինադադարի կնքումից հետո: Հայոց ցեղասպանության տարիներին Զավեն պատրիարքին հաջողվեց որոշակի օգնություն հասցնել հայ գաղթականների խոշոր կայանատեղիներ հանդիսացող Քոնիա, Բուրսա, Դամասկոս, Երուսաղեմ և այլ քաղաքներ: Նրան մեծապես հաջողվեց նաև նպաստել Մոսուլում ապաստան գտած շուրջ 1700

[342] Çelik A., Osmanl'ının Ermeni'yle İmtihan – Mütakere Dönemi İstanbul Hükümetleri Ve Ermeniler, İstanbul, 2011, s. 96.

կարոտյալ հայ որբերի և կանանց փրկության և խնամքի կազմակերպմանը:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանն Առաջին համաշխարհային հետպատերազմյան տարիներին (1918-1922)

### 3.1. Հայոց ազգային սահմանադրության վերահաստատումը և Զավեն պատրիարքի վերադարձը Կոստանդնուպոլիս

1918 թ. հոկտեմբերի 30-ին Անտանտի պետությունների և Օսմանյան կայսրության միջև կնքված՝ Մուդրոսի զինադադարից հետո Կոստանդնուպոլսի հայոց կաթողիկոսական-պատրիարքական փոխանորդության կողմից արդարադատության և դավանանքների նախարար Ալի Հայդար Մոլլա Արսեբյուքին ներկայացված դիմումի համաձայն՝ պահանջվում էր չեղարկել 1916 թ. «Հայ կաթողիկոսության և պատրիարքության սահմանադրության» վերաբերյալ կանոնագիրը, վերահաստատել 1863 թվականի Հայոց ազգային սահմանադրությունը և վերականգնել Կ. Պոլսի նախկին հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի պարտավորությունները պատրիարքի պաշտոնում[343]: Նույն թվականի նոյեմբերի 17-ին Թևֆիկ փաշայի կառավարությունն այդ դիմումը ներկայացնում է

[343] Տե՛ս Sabah, İstanbul, 7 Kasım 1918.

սուլթան Մեհմեդ Վահիդեթթինին, ով հատուկ հրամանագրով հավանության է արժանացնում այն[344]:

Կ. Պոլսի հայոց պատրիարքության վերահաստատումից հետո թուրքական կառավարության որոշմամբ Կ. Պոլսի հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանն արժանանում է համաներման: Քանի որ Բաղդադը և Մոսուլը գրավված էին անգլիական բանակի կողմից, ուստի թուրքական իշխանությունները Զավեն պատրիարքի գտնվելու վայրը պարզելու նպատակով դիմում են Մեծ Բրիտանիայի պատերազմական նախարարությանը: 1918 թ. նոյեմբերի 29-ին վերջինիս կողմից Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարությանն ուղղված հեռագրից տեղեկանում ենք, որ թուրքական կառավարությունը անգլիացի զինվորականների միջնորդությամբ հայոց պատրիարքին գտնելու համար հետաքննություն էր սկսել Բաղդադում և Մոսուլում[345]:

Հարցն այն է, որ հայկական շրջանակներում կեղծ լուրեր էին պտտվում այն մասին, որ Զավեն պատրիարքը թուրքերի ձեռքով կա՛մ կախաղան է բարձրացվել, կա՛մ սպանվել այլ հանգամանքներում[346]: Հատկապես Մոսուլի գրավումից հետո, երբ օսմանյան կառավարության կապը նախկին պատրիարքի հետ բոլորովին խզվեց, թուրքական իշխանությունները հայտարարեցին, որ անտեղյակ են պատրիարքի գտնվելու վայրից: Ուստի, բնական է, որ օսմանյան կառավարությունը նրան գտնելու միակ հույսը պետք է կապեր Մոսուլում հաստատված անգլիական զորահրամանատարության հետ: Ի վերջո, օսմանյան կառավարության կարճատև

---

344 Տե՛ս Ermeni Patrikhanesi'nin Yeniden Tesisi, Vakit, İstanbul, 21 Kasım 1918. Համմտ.` BOA. A.DVNS.GMC.d., nr. 11, s. 24-25; Güler A., Ermenilerle İlgili 1916 Ve 1918 Yıllarında Yapılan Hukuki Düzenlemeler, OTAM- Ankara Üniversitesi Osmanlı Tarihi Araştırma Ve Uygulama Merkezi Dergisi, Sayı: 6, Ankara, 1995, s. 91-137.

345 Տե՛ս Güllü R. E., նշվ. աշխ., էջ 500:

346 Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 250:

որոնումները հաջողությամբ են պսակվում, և պարզ է դառնում, որ Զավեն պատրիարքը Մոսուլի գրավումից հետո չի հեռացել քաղաքից:

Հատկանշական է, որ թուրքական պաշտոնական շրջանակներում պտտվում էր մի կեղծիք, ըստ որի Զավեն պատրիարքն անգլիական զորահրամանատարության հետ հաստատել էր գաղտնի կապեր[347]: Մինչդեռ պատրիարքի և անգլիական զորահրամանատարության հարաբերությունները բացառապես պայմանավորված էին Բաղդադում և Մոսուլում ապաստան գտած հազարավոր հայ գաղթականներին օգնելու հարցերով: Ի սկզբանե թուրքական իշխանություններին կասկածելու տեղիք էր տվել նաև այն հանգամանքը, որ դեռևս Մուդրոսի զինադադարի ստորագրումից երեք օր առաջ՝ հոկտեմբերի 27-ին, անգլիական բարձրագույն հրամանատարությանն ուղղված մի զեկույցում Պողոս Նուբար փաշան, հանդես գալով Օսմանյան կայսրությունում բնակվող հայության անունից, անգլիացիներից օգնություն էր ակնկալել «Կ. Պոլսի և Անատոլիայի հայության ապագայի համար»[348]:

Հայոց պատրիարքության իրավունքների վերականգնումից հետո պատրիարքական փոխանորդի պաշտոնակատար Գաբրիել եպիսկոպոս Ջևահիրջյանի գլխավորությամբ պատրիարքարանի ներկայացուցիչներից կազմվում է մի պատվիրակություն, որը հանդիպումներ է ունենում Կ. Պոլսում գտնվող Անտանտի երկրների ներկայացուցիչների հետ՝ երախտիքի խոսքեր հայտնելով նրանց՝ հայ ազգին ցուցաբերած օգնության համար[349]: Պատվիրակությունը հանդիպում է նաև արդարադատության և

---

[347] Տե՛ս Güllü R. E., նշվ. աշխ., էջ 498:

[348] Bozkurt A., İtilaf Devletleri'nin İstanbul'da İşgal Yönetimi, İstanbul Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü, Yayınlanmamış Doktora Tezi, İstanbul, 2009: Հմմտ.՝ Güllü R. E., նշվ. աշխ., էջ 499.

[349] Տե՛ս Güllü R. E., նշվ. աշխ., էջ 500:

դավանանքների նորանշանակ նախարար Հըդըր Էֆենդիին՝ խնդրելով ապահովել պատրիարքի անվտանգ վերադարձը Կ. Պոլիս[350]: Այս հանդիպումներից հետո օրենքով սահմանված կարգով Գաբրիել եպիսկոպոս Ջևահիրջյանը հրաժարական է տալիս: Եվ քանի որ Զավեն պատրիարքը դեռևս չէր ժամանել Կ.Պոլիս և ըստ այդմ չէր կարող Հայոց ազգային սահմանադրությամբ վերապահված իրավունքով իր բացակայության ընթացքում եկեղեցականներից մեկին նշանակել պատրիարքական փոխանորդ, ուստի Ընդհանուր ժողովի որոշմամբ պատրիարքական փոխանորդ է ընտրվում Արմաշի Դպրեվանքի փոխվանահայր Մեսրոպ եպիսկոպոս Նարոյանը[351]:

Ինչպես գրում է Զավեն պատրիարքն իր հուշագրության մեջ, Կ. Պոլսի հայոց ազգային շրջանակները, տեղեկանալով իր գտնվելու վայրի մասին, դիմում են Մոսուլի անգլիական զորահրամանատարությանը՝ կազմակերպելու նրա վերադարձը Կ.Պոլիս[352]: Մոսուլ քաղաքի կառավարիչ, գնդապետ Լիչմենը, իր մոտ հրավիրելով Զավեն պատրիարքին, հայտնում է Մեծ Բրիտանիայի պատերազմական նախարարության հրամանի մասին, ըստ որի անգլիական կառավարությունը պարտավորվում էր պատրիարքին անվտանգ փոխադրել Կ. Պոլիս: Վերոհիշյալ հրամանով պատրիարքին որպես ճանապարհածախս տրամադրվում էր 1000 փաունդ[353]:

Այսպիսով, 1918 թվականի դեկտեմբերի 29-ին Զավեն պատրիարքն իր եղբոր դստեր՝ Վարդանուշի և մի

---

[350] Նույն տեղում:
[351] Տե՛ս BOA. BEO. nr. 4549/341114 lef 2. Հմմտ.՝ BOA. MV. nr. 213/89. Մեսրոպ եպիսկոպոսի մասին առավել մանրամասն տե՛ս Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Նարոյան, «Էջմիածին», հատոր Ա, Էջմիածին, 1944, էջ 26-27:
[352] Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ.աշխ., էջ 258, 259:
[353] Տե՛ս Güllü R. E., նշվ.աշխ., էջ 501:

քանի երևելի հայերի հետ Մոսուլից ճանապարհ է ընկնում դեպի Բաղդադ, ուր նա հասնում է 1919 թ. հունվարի 1-ին: Այստեղ նա հանդիպումներ է ունենում ինչպես տեղի ազգային առաջնորդարանի ներկայացուցիչների, այնպես էլ անգլիական բանակի գլխավոր հրամանատարի հետ: Հունվարի 3-ին մարշալի հետ կայացած հանդիպման ժամանակ Զավեն պատրիարքը նրան խնդրում է «հայերէն կամաւոր զօրքեր հաւաքել Մուսուլի մէջ եւ մարզելով իրենց երկիրը առաջնորդել»[354]: Սակայն քանի որ դեռևս հայտնի չէր Մոսուլի՝ անգլիական կամ ֆրանսիական գերակայության տակ անցնելու հանգամանքը, գլխավոր հրամանատարը որևէ քայլ չձեռնարկեց այդ ուղղությամբ:

Հայ գաղթականներից հայկական կամավորական զորաջոկատ ստեղծելու նպատակով Բաղդադի հայոց հոգևոր առաջնորդ Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանն իր հերթին դիմել էր անգլիական բանակի գլխավոր վարչությանը՝ խնդրելով Բաքուբայում մարզվող հայ կամավորներից կազմել առանձին վաշտ՝ վերջինիս տալով հայկական անուն: Գլխավոր վարչությունը, սակայն, մերժել էր այդ խնդրանքը՝ պատճառաբանելով, որ «Հայերը կը կազմեն ասորական զօրաբաժնին հայ բաժինը եւ թէ կը մարզուին սոսկ գաղթականութիւնը առաջնորդելու համար իր երկիրը եւ հոն կարգ կանոնը ապահովելու համար»[355]:

Երբ հունվարի 5-ին Զավեն պատրիարքը ժամանեց Բաքուբա, այս խնդրի առնչությամբ հանդիպում ունեցավ հայ զինվորների մարզիչ գնդապետ Մաքարտնիի հետ՝ առաջարկելով որոշակի փոփոխություններ մտցնել այդ որոշման մեջ, այսինքն՝ ասորական զորաջոկատից առանձնացնել հայ գաղթականներից կազմված զորախումբը՝

[354] Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 260:
[355] Նույն տեղում, էջ 262:

անվանելով «Հայկական գունդ» (Armenian Batalion)[356]: Որոշակի բանակցություններից հետո, ի վերջո, անգլիացի սպաները հայտարարեցին, որ պատրաստ են իրագործել հայ զինվորների կամքը և անգլիական բանակի կազմում ունենալ առանձին հայկական գունդ: Սակայն Զավեն պատրիարքը նրանց շտապողականությունը վտանգավոր համարեց և փորձեց հայ կամավորականներին հետ պահել այդ որոշումից. «...այսպիսի թուղթ ստորագրելը բնաւ նպաստավոր չեմ գտներ, զի ասոր տակը պահուած բան մը կը տեսնեմ, որ բնաւ օգտակար չէ՛ ո՛չ մեր ազգին եւ ո՛չ մեր զօրաց»[357]:

Դրան զուգահեռ՝ Բասրայում Զավեն պատրիարքը զբաղվեց նաև Մոսուլի հայ գաղթականների խնդիրներով՝ օգնության ակնկալիքով դիմելով Բաղդադի Ամերիկյան նպաստամատույց կազմակերպության ներկայացուցիչ դոկտոր Լևինին, Բաղդադի կառավարիչ գնդապետ Ուիլսոնին, ֆրանսիացի հյուպատոս Ռուինև այլոց[358]:

Այսպիսով, փետրվարի 2-ին Զավեն պատրիարքն անգլիացի զինորականների ուղեկցությամբ ճանապարհ ընկավ դեպի Կ.Պոլիս: Հիսունօրյա ճանապարհորդությունից հետո՝ 1919 թ. փետրվարի 19-ին, նա ժամանեց Կ.Պոլիս, որտեղ տեղի հայությունը նրան դիմավորեց մեծ խանդավառությամբ և սպասումով[359]:

Զավեն պատրիարքը մեծ աշխատանք տարավ պատրիարքարանի նախկին կարգավիճակը վերականգնելու ուղղությամբ: Մասնավորապես,

356 Տե՛ս նույն տեղում, էջ 263, 264:

357 Նույն տեղում, էջ 265:

358 Զավեն պատրիարքի՝ նշված անձերի հետ ունեցած նամակագրական կապի մասին տե՛ս նույն տեղում, էջ 269-274:

359 Տե՛ս Akşin S., İstanbul Hükümetleri Ve Milli Mücadele, Cilt: Mutlakiyete Dönüş (1918-1919), İstanbul, 2010, s.138. Հմմտ.՝ Sarıhan Z., Kurtuluş Savaşı Günlüğü 1 (Mondros'tan Erzurum Kongresi'ne Kadar, Ankara, 1982, s. 137; Karacakaya R., 1919-1922 Arasında Anadoluda Türk-Ermeni İlişkilerine Genel Bir Bakış, KÖK Sosyal Ve Stratejik Araştırmaları Dergisi, Cilt: X, Sayı: 2, Ankara, 2010, s. 5-12.

հայոց պատրիարքարանը հանդես եկավ պատերազմի տարիներին օսմանյան կառավարության ձեռքն ընկած եկեղեցապատկան ողջ գույքն ու եկեղեցիները վերադարձնելու պահանջով: Հայոց պատրիարքարանն օսմանյան կառավարությունից պահանջեց նաև ազատարձակել ձերբակալված բոլոր հայերին, ինչպես նաև այն հայ որբերին, կանանց և աղջիկներին, որոնք ապաստան էին գտել մուսուլմանական ընտանիքներում և պետական որոշ հաստատություններում:

Կոստանդնուպոլիս վերադարձից հետո Զավեն պատրիարքի գերակա խնդիրներից մեկը դառնում էր հիմնականում հայերի կոտորածների և տեղահանության վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը: Այդ նպատակով 1919 թ. օգոստոսի 17-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի Քաղաքական ժողովի նիստին որոշվեց ստեղծվել «Տեղեկատու դիվան» կազմակերպությունը դոկտոր Գրիգոր Դավիթյանի վերահսկողությամբ: Դիվանի քարտուղար նշանակվեց պատմաբան Արշակ Ալպոյաճյանը, որին աջակցում էին նախ Զորա Զորայանը, այնուհետև՝ Ասատուր Նավարյանը և իրավաբան Կարապետ Նուրյանը: Դիվանի աշխատանքներին հետագայում միացավ նաև Առաքել Չաքրյանը՝ որպես որբահավաքության գործի պատասխանատու: Դիվանի նպատակն էր հավաքել Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի ժողովրդագրական վիճակի, հալածանքների ու կոտորածների, տեղահանությունների, ունեցվածքի բռնագրավումների, ցեղասպանության պատասխանատուների ու ականատեսների, աքսորյալների, իսլամացած հայ որբերի ու կանանց վերաբերյալ տեղեկություններ, վկայություններ,

վավերագրեր ու փաստաթղթեր[360]: Դիվանը զբաղվում էր նաև կուսակցությունների և ազգային-հասարակական կազմակերպությունների, ազգային-կրթական գործունեության վերաբերյալ վիճակագրական տվյալների, պատերազմի նախօրյակին պատրիարքարանի թեմերի ենթակայության տակ գտնվող եկեղեցիների, վանքերի, դպրոցների, ազգային հաստատությունների և բնակչության թվաքանակի, ինչպես նաև հայերեն և օտարալեզու մամուլում և գրականության մեջ հայերի վերաբերյալ տեղեկությունների հավաքմամբ:

Ամփոփելով՝ նշենք, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի նախկին կարգավիճակը վերականգնելու վերաբերյալ օսմանյան կառավարության ընդունած որոշումից հետո պատրիարքի գործոնը՝ որպես օսմանյան իշխանությունների և հայկական համայնքի պաշտոնական միջնորդ, կարևոր նախապայման հանդիսանացավ թե՛ համայնքային կենսական խնդիրների լուծման և թե՛ հատկապես Հայոց ցեղասպանության հետևանքով սփռված հայության փրկության գործում: Այդ տեսանկյունից 1863 թ. Հայոց ազգային սահմանադրության վերահաստատումը նշանակալի հանգրվան եղավ Օսմանյան կայսրությունում, մասնավորապես՝ Կ. Պոլսում բնակվող հայության իրավունքների վերականգնման համար: Հայոց պատրիարքարանին վերապահված էր լրջագույն պատասխանատվություն՝ Օսմանյան կայսրության համար անցումային ժամանակաշրջանում հանդես գալու որպես համախմբող ուժ պոլսահայ կյանքի լիարժեք իրացման ուղղությամբ:

[360] Առավել մանրամասն տե՛ս Kévorkian R., Le génocide des Arméniens, Paris. 2014, p. 919-924.

## 3.2. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի որբախնամ գործունեությունը 1919-1922 թվականներին

1918 թ. հոկտեմբերի 30-ին Անտանտի երկրների և Օսմանյան կայսրության միջև կնքված Մուդրոսի զինադադարից հետո որոշակի պայմաններ ստեղծվեցին Հայոց ցեղասպանությունը վերապրած արևմտահայության վերջին բեկորները որոնելու և փրկելու համար: Այս գործում առանցքային դերակատարում ունեցավ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը:

1919 թ. փետրվարի 19-ին պատրիարք Զավեն Տեր-Եղիայանն աքսորից վերադառնում է Կ. Պոլիս և անմիջապես միջոցներ ձեռնարկում մահմեդականների առևանգած հայ որբերին և կանանց վերադարձնելու ուղղությամբ:

Անտանտի երկրների գործուն միջամտությամբ և աջակցությամբ Հայոց ցեղասպանության տարիներին առևանգված և բռնի իսլամացված հայերի խնդիրը բարձրացվում է թուրքական նոր իշխանությունների առջև: 1919 թ. փետրվարի 5-ին Օսմանյան Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը հրաման է ուղարկում կայսրության տարբեր նահանգներ՝ պահանջելով մահմեդական ընտանիքներում գտնվող հայ կանանց և երեխաներին հանձնել հայերից կազմված հանձնաժողովին[361]: Այս հրամանը, ինչպես նկատում է թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը, ոչ թե կառավարության բարի կամքի դրսևորումն էր, այլ արտաքին ճնշման և պարտադրանքի արդյունք[362]:

---

361 Տե՛ս BOA. DH. ŞFR. nr. 95/212. Հմմտ.՝ Atnur İ., Türkiye'de Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923), Ankara, 2005, s. 189.

362 Տե՛ս Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության (1920-ականներից մինչև մեր օրերը), Երևան, 2010, էջ 65:

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի նախաձեռնությամբ կազմվում են «Հայ որբախնամ» և «Տարագրյալների կենտրոնական հանձնաժողով» ընկերությունները, որոնք 1919 թ. փետրվարի 28-ին միավորվում են «Հայ ազգային խնամատարություն» կազմակերպության ներքո, որի տնօրեն նշանակվեց Մատթեոս Էպլիղաթյանը[363]: Սրանից զատ գործում էր նաև Հայկական Կարմիր խաչը, որը հանդես էր գալիս որպես Կարմիր խաչի միջազգային ընկերության անդամ[364]: Զավեն պատրիարքի համառ ջանքերի շնորհիվ շուտով ստեղծվեցին նաև տարագրյալների կայաններ[365]:

Հայ ազգային խնամատարությունն իր մասնաճյուղերն ուներ Կ. Պոլսի գրեթե բոլոր թաղամասերում: Կառույցի նպատակն էր պատսպարել հայ գաղթականներին և որբերին, ապահովել նրանց սննդով և հագուստով: Այն իր հոգածության տակ էր առել նաև Կ.Պոլսի հետևյալ որբանոցները՝

1. Կուլելիի կենտրոնական որբանոց,
2. Բեյլերբեյի որբանոց,
3. Եդի Քուլեի Ազգային Ս. Փրկչի հիվանդանոցի որբանոց,
4. Բեշիքթաշի աղջիկների որբանոց,
5. Գում Գափուի աղջիկների որբանոց,
6. Սկյուտարի աղջիկների որբանոց,
7. Խասգյուղի աղջիկների որբանոց,
8. Առնավուտ գյուղի աղջիկների արհեստանոց-որբանոց,
9. Բալաթի աղջիկների որբանոց,
10. Քուրու Չեշմեի աղջիկների որբանոց,

---

[363] Տե՛ս «Ընդարձակ օրացոյց Ս.Փրկչեան Ազգային հիւանդանոցի Հայոց», Կ.Պոլիս, 1924, էջ 138: 1919-1922 թթ. Ազգային խնամատարության գործունեության վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Էպլիղաթեան Մ.Մ., Կեանք մը ազգիս կեանքին մէջ: Ականատեսի եւ մասնակցողի վկայութիւններ 1903-1923, Անթիլիաս, 1987:
[364] Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 280:
[365] Տե՛ս Ընդարձակ օրացոյց, էջ 142-145:

11. Դպրոցասեր,

12. Արմաշի երկրագործական վարժարան և այլն[366]:

Զավեն պատրիարքի կարգադրությամբ երիտասարդ գիտնական, ուսուցիչ Առաքել Չաքրյանն[367] ուսումնասիրում է Կ. Պոլսի «Կանանց աշխատեցնող բարեգործական ընկերության» (Kadınları Çalıştırma Cemiyet-i Hayriyesi)՝ հայ որբերի վերաբերյալ ունեցած տվյալները: Այս գործը նրան հաջողվում է կյանքի կոչել բրիտանական դեսպանատան պաշտոնատար անձանցից մեկի՝ Սմիթի հովանավորությամբ[368]: Ավելին, դեսպանատան հատուկ հանձնարարագրով արտոնվում է հայ որբերի և կանանց հավաքագրումը մահմեդական բնակչության տներից[369]:

1919 թ. փետրվարին Բրիտանական բարձրագույն հանձնաժողովին կից ձևավորվում է հայ-հունական բաժինը, որը զբաղվում էր իսլամացած քրիստոնյաների հարցերով[370]: 1919 թ. մարտից բաժնի աշխատանքներին միացան նաև հայոց և հունաց պատրիարքությունների ներկայացուցիչները՝ հայկական կողմից Առաքել Չաքրյանը և դոկտոր

---

[366] Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 284-286: Հմմտ.՝ Հովսեփյան Մ., Հայ որբերի հիմնախնդիրը Կ.Պոլսի «Ճակատամարտ» թերթում (1918-1924 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2016, թիվ 3, էջ 99-108:

[367] Առաքել Չաքրյան (1885, Դամասկոս - 1954, Փարիզ) - Փարիզաբնակ անվանի քիմիկոս, գյուտարար: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Գալաթասարայ, Նիշանթաշը և Կեդրոնական վարժարաններում աշխատել է որպես քիմիայի ուսուցիչ: Զինադադարից հետո, բացի Կեդրոնական վարժարանից, հրաժարվելով մյուս վարժարանների պարտականություններից, լծվել է հայ և հույն որբերի հավաքման գործին: 1922 թ. «Չեզոք տան» փակվելուց հետո փոխադրվել է Ֆրանսիա: 1920 թ. Հունաստանի կառավարության կողմից պարգևատրվել է Ս. Գեորգ շքանշանով: 1947 թ. ֆրանսիական կառավարության կողմից արժանացել է Պատվո լեգեոնի ասպետի կոչման, 1949 թ. ընտրվել է Փարիզի ակադեմիայի ակադեմիկոս (տե՛ս Pamukciyan K., նշվ. աշխ., էջ 153):

[368] Ի տարբերություն անգլիական զորահրամանատարության կողմից ցուցաբերված զգալի աջակցության՝ իտալացի և ֆրանսիացի սպաներն ու ոստիկանները նվազ ուշադրություն էին դարձնում այս խնդրին (տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 291):

[369] Տե՛ս նույն տեղում, էջ 288-291:

[370] Գզոյան Է., Փրկություն հայ որբերին. Առաքել Չաքրյանի հուշերը, «Ցեղասպանագիտական հանդես», Երևան, 2016, N 2, էջ 163:

Դավիդյանը, իսկ հունական կողմից՝ դոկտոր Թեոթոկասը[371]:

Որբահավաք աշխատանքների կազմակերպումը հաճախակի ուղեկցվում էր խոչընդոտներով. հայ մայրերն իրենց երեխաների կյանքը փրկելու համար նրանց հանձնել էին քուրդ, թուրք և արաբ ընտանիքներին՝ հույս ունենալով, որ ողջ մնալու դեպքում հնարավոր կլինի գտնել նրանց: Իսկ երեխաները, վաղ տարիքից կտրված լինելով իրենց ընտանիքներից, հատկապես փոքրերը մոռանում էին մայրենի լեզուն և ընտանեկան ավանդույթները: Անշուշտ, կան վկայություններ, որ թուրքերից ոմանք, վախենալով Անտանտի ուժերի կողմից պատժվելուց, իրենց տանը պահվող հայ որբերին հանձնում էին հայ եկեղեցուն կամ որբախնամ մարմիններին[372]: Պատահում էր նաև, որ հայ երեխաները թաքցնում էին իրենց ինքնությունը՝ վախենալով որդեգիր ծնողների պատժից: Ինչ վերաբերում է երիտասարդ աղջիկներին և կանանց, ապա նրանք ստիպողաբար կամ կամավոր ամուսնանում էին իրենց առևանգիչների հետ՝ առավել անհնարին դարձնելով իրենց փրկությունը: Ականատեսների հիշողություններում պահանվել են նաև այն ստորացուցիչ տեսարանները, երբ բազմաթիվ հայ մանուկների և երիտասարդ գեղեցիկ աղջիկների, որպես գերիների, վաճառել են ստրկաճավառների շուկաներում[373]: Այսպիսի լուրջ խնդիրների առջև էին կանգնած որբախնամ կազմակերպությունները, որոնք օր առաջ պետք է օգնության հասնեին Կ. Պոլսում և կայսրության ներքին գավառներում կենդանի մնացած հայերին:

[371] Նույն տեղում, էջ 164:
[372] Տե՛ս նույն տեղում, էջ 288:
[373] Առավել մանրամասն տե՛ս Սվազլյան Վ., Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2011:

1919 թ. սեպտեմբերին Ազգային երեսփոխանական ժողովն օրենք է հրապարակում, որի համաձայն՝ ունեցվածքի տեր յուրաքանչյուր հայ պարտավոր էր իր նյութական կարողության մի մասը նվիրաբերել վերոհիշյալ կազմակերպությանը: «Ի պատիւ Պոլսահայ ժողովուրդին պէտք է ըսել թէ այս տուրքէն խուսափող գրեթէ չեղաւ եւ շատեր իրենց նիւթական կարողութենէն վեր գումարներ տալու յօժարեցան»[374],- գրում է Զավեն պատրիարքը: Այդ տուրքը կոչվում էր «Հայրենիքի տուրք», որը վճարվում էր երկու ձևով՝ միանվագ և ամսական: 1922 թ. հունիսի 2-ի Ազգային պատվիրակության տվյալների համաձայն՝ զինադադարից մինչև 1921 թ. դեկտեմբերի վերջը Կ. Պոլսում հավաքվել էր շուրջ 1.540.000 օսմանյան ոսկի[375]:

Հատկանշական է թուրքական պատմագրության մեջ իշխող այն կարծիքը, ըստ որի հայերը մահմեդական բնակչությունից վերցնում էին ոչ թե իրենց երեխաներին, այլ ազգությամբ թուրք մանուկների, որոնք հետագայում ստիպողաբար քրիստոնեություն էին ընդունում[376]: Ուստի, թուրքական ոստիկանությունը, անսալով մահմեդական բնակչության ենթադրյալ կամ իրենց հնարած բողոքներին, պահանջում է երեխաներին վերադարձնել իրենց ընտանիքներին:

Ծփոթից խուսափելու նպատակով 1919 թ. ապրիլ ամսին անգլիական դեսպանատան հրահանգով Կ. Պոլսի Նիշանթաշը թաղամասում վարձվում է մի տուն, որը ժողովրդի շրջանում ճանաչվեց «Չեզոք տուն» (bî-tarafhâne) անվանումով: Այստեղ բերում էին այն

---

[374] Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 281:

[375] Տե՛ս նույն տեղում, էջ 282, 283:

[376] Տե՛ս Bakar B., Mondros Mütarekesi’nden Sonra Yaşanan Büyük Bir Problem: Türk Ve Ermeni Yetimleri Meselesi, ASAM Ermeni Araştırmaları Enstitüsü, Ermeni Araştırmaları 2. Türkiye Kongresi Bildirileri, Cilt: , Ankara, 2007, s. 859-575. Հմմտ.՝ Güllü R. E., նշվ. աշխ., էջ 515-519; Türkmen Z., İşgal Yıllarında İstanbul’daki Uygulamalar: Mütareke Döneminde Ermeniler Tarafından Türk Çocuklarının Kaçırılması Ve Hıristiyanlaştırılması, KÖK Araştırmaları, Ankara, Güz, 2000, Cilt: , Sayı: 2, s. 265-285.

բոլոր երեխաներին, որոնց ազգությունը համարվում էր վիճելի: «Չեզոք տան» վերահսկողությունն իրականացվում էր ամերիկացի, հայ և թուրք ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովի կողմից[377]: Հարցաքննության միջոցով որոշվում էր երեխաների ազգային պատկանելությունը, այնուհետև թուրք մանուկներին հանձնում էին Օսմանյան անվտանգության խորհրդին, իսկ հայ մանուկներին՝ հայոց պատրիարքարանին[378]:

Սակայն հարցը սրանով չէր սահմանափակվում, քանի որ թուրքական իշխանությունները թուրք երեխաներին հայ ներկայացնելու ակնհայտ միտումով հանդես էին գալիս զրպարտություններով: Մասնավորապես, ըստ թուրքական պաշտոնական «İkdam» («Առաջադիմություն») լրագրի, հայոց պատրիարքարանն իբր հավաքագրված որբ երեխաներին ոչ թե «Չեզոք տուն» էր տանում, այլ միանգամից Բեյօղլու թաղամասում գտնվող հայկական եկեղեցի[379]: Որպես փաստարկ, մատնանշվում էր Կեսարիայից բերված 220 «մահմեդական» որբերի հանձնումը պատրիարքարանին[380]: Վերոհիշյալ լրագրին փոխպատրիարք Երվանդ Էֆենդիի տված հարցազրույցում պարզորոշ երևում է այն փաստը, որ այդ կեղծիքի հետևում կանգնած է թուրքական ոստիկանությունը[381]: Այս կեղծարարությունների մասին տեղեկանում ենք նաև «Չեզոք տան»

---

377 Տե՛ս Güllü R. E., նշվ. աշխ., էջ 515:
378 Տե՛ս Hür A., İttihat ve Terakki'nin Çocuk Askerleri, Taraf, İstanbul, 12 Nisan 2009.
379 Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը չէր ժխտում այդ տեղեկությունը, հակառակը՝ նշում էր, որ երեխաներից 108-ը եղել են հայ, իսկ 85-ը՝ մահմեդական: Տե՛ս İkdam, İstanbul, 26 Mayıs 1919.
380 Տե՛ս Güllü R. E., նշվ. աշխ., էջ 517:
381 Տե՛ս նույն տեղում, էջ 516-519:

վերաբերյալ խորհրդարանական քննիչ հանձնաժողովի տեղեկագրից[382]:

Ավելորդ չէ նշել, որ Հայոց ցեղասպանության տարիներին բռնի իսլամացված հայ երեխաների և կանանց հավաքագրման և խնամակալության գործին աջակցել են նաև բազմաթիվ օտարերկրյա միսիոներական կազմակերպություններ և առանձին անհատներ: Այս գործում իր նշանակալի դերն ունի Ազգերի լիգան, որը հատուկ քննարկումներ է անցկացրել Օսմանյան կայսրությունում՝ Փոքր Ասիայում և հարակից շրջանների մահմեդական ընտանիքներում բռնի պահվող և մահմեդականացված կանանց ու երեխաների ճակատագրի վերաբերյալ[383]:

Հարկ է նշել նաև Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույցի ծավալած ակնառու գործունեությունը (American Near East Relief)[384], որը մեծապես զորավիգ եղավ Կ. Պոլսում գործող Հայ ազգային խնամատարությանը: Անգլիական կառավարության օժանդակությամբ Ամերիկյան նպաստամատույցը կարողացավ Կ. Պոլսում և կայսրության գավառներում բազմաթիվ որբանոցներ հիմնել: Անգամ երբ քաղաքական հանգամանքներն աննպաստ դարձան, Խարբերդում, Սեբաստիայում և այլ վայրերում ապաստանած որբերին հաջողվեց փոխադրել Սիրիայի որբանոցներ և երկար տարիներ հոգալ նրանց կեցությունը:

Այսպիսով, հայոց պատրիարքարանի նախաձեռնությամբ և աջակցությամբ ստեղծված որբախնամ մարմինների, մասնավորապես «Հայ

---

382 Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 293-295:

383 Տե՛ս Պարսամյան Ս., Միրզոյան Ա., Ազգերի լիգայի փաստաթղթերն ապացուցում են Հայոց ցեղասպանության փաստը (Ազգերի լիգայի ստեղծման 90-ամյակի կապակցությամբ), http://www.genocide-museum.am/arm/g_brief_09.php (01.05.2019-ի դրությամբ հասանելի է):

384 Մերձավոր Արևելքի Ամերիկյան նպաստամատույցի գործունեության մասին մանրամասն տե՛ս Ավետիսյան Ս., Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ., Երևան, 2009:

ազգային խնամատարություն» կազմակերպության քառամյա (1919-1922 թթ.) գործունեության շնորհիվ վերջնական թուրքացումից փրկվեցին հազարավոր հայ որբեր, որոնք, վերադառնալով հայկական համայնք, ստացան հայեցի կրթություն և դաստիարակություն: Զավեն Տեր-Եղիայան պատրիարքն իր հուշերում գրում է, որ միայն Կ. Պոլսում ապաստան գտած 4000-5000 հայ որբերից հաջողվեց փրկել շուրջ 3000 հայ մանուկների, ինչը չհաջողվեց իրականացնել կայսրության մյուս գավառներում[385]:

Հիշատակման են արժանի նաև թուրք գրող, հրապարակախոս և լրագրող Մուրադ Բարդաքչըի կողմից 2008 թ. հրատարակված՝ ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի օրագրում արված գրառումները, որոնց համաձայն այդ տարիներին հայ որբերի թիվը հաշվվում էր շուրջ 10.314 հոգի[386]: Մինչդեռ թուրքական պատմագիտական ընկերության կողմից հրատարակված «Հայեր.աքսոր և գաղթ»գրքում հանդիպում ենք 1921 թ. սկզբին հայոց պատրիարքության կողմից պատրաստված մի զեկույցի, որի անգլերեն տարբերակն ուղարկվել է ԱՄՆ արտաքին գործերի նախարարություն: Այդ փաստաթղթում նշվում է, որ 1921 թ. դրությամբ մահմեդականների ընտանիքներում դեռևս մնում էին 63.000 հայ որբեր[387]:

Ամփոփելով նշենք, որ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, մասնավորապես Զավեն Տեր-Եղիայան պատրիարքի անձնվեր և համառ ջանքերի շնորհիվ կարողացավ հետպատերազմյան տարիներին երիտթուրքական ղեկավարության վերահսկողության ներքո կազմակերպել Կ.Պոլսում և հարակից շրջաններում ապաստանած հայ որբերին

---

385 Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 296:
386 Տե՛ս Hür A., նույն տեղում:
387 Տե՛ս նույն տեղում:

գտնելու և իրենց ակունքներին վերադարձնելու դժվարին գործը: Օգտագործելով իր անձնական կապերը երիտթուրքական կառավարության մի շարք շրջանակների հետ՝ Զավեն պատրիարքը ջանք չխնայեց բարձրաձայնելու արևմտահայության խնդիրները և գտնելու դրանց լուծման ուղիներ: Պատրիարքի և նրա շուրջը համախմբված պոլսահայ համայնքի ներկայացուցիչների, ինչպես նաև ազգային կուսակցությունների անդամների շնորհիվ հայության ձայնը լսելի դարձավ նաև օտարերկրյա դեսպանների մոտ, ինչը և տվեց որոշակի արդյունքներ:

### 3.3.Ներհամայնքային հակասությունները և Զավեն պատրիարքի հեռացումը Կոստանդնուպոլսից

1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմի ժամանակ քեմալական զորքերը Խորհրդային Ռուսաստանի ռազմաքաղաքական աջակցությամբ պարտության մատնեցին Փոքր Ասիայի արևմտյան նահանգներ ներխուժած հունական բանակին: 1922 թ. սեպտեմբերի 9-ին նրանք, մտնելով հունական Իզմիր (հին անվանումը՝ Զմյուռնիա) քաղաքը, թուրքական խուժանի օգնությամբ հրդեհի մատնեցին ողջ քաղաքը՝ կոտորելով հույն և հայ խաղաղ բնակչությանը[388]: Այդ իրադարձությունները վախի և սարսափի հուժկու ալիք բարձրացրեցին Կ.Պոլսում, ինչի առթիվ Զավեն պատրիարքը գրում է. «Պոլսոյ հայ ժողովուրդը որ, զերծ մնացած էր տեղահանութենէն, հիմա սարսափի եւ խուճապի մատնուած կը գաղթէր

388 Զմյուռնիայի աղետի վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Սաքայան Դ., «Զմյուռնիա 1922». Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը, Երևան, 2005:

արտասահման, նույն իսկ յանձն առնելով Հարաւային Ամերիկայի պէս անծանօթ երկիրներ երթալ »[389]:

Ստեղծված իրավիճակում հայ հասարակական-քաղաքական որոշ շրջանակներ, ինչպես նաև հայոց պատրիարքարանի մի շարք ներկայացուցիչներ պոլսահայության լարվածության ամբողջ պատասխանատվությունը բարդեցին Զավեն պատրիարքի ուսերին: Նրանց պնդմամբ, պատրիարքը մեղադրվում էր 1918 թվականից սկսած հայոց պատրիարքարանի և օսմանյան իշխանությունների միջև հարաբերությունների սառեցման մեջ[390]: Հատկանշական է, որ յուրաքանչյուր նորընտիր պատրիարք՝ որպես Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի պաշտոնական կառույցի ներկայացուցիչ, պարտավոր էր իր հարաբերությունները վերահաստատել ժամանակի կառավարության հետ: Այդ նպատակով, երբ 1922 թ. նոյեմբերի 8-ին Զավեն պատրիարքը հանդիպեց նոր կառավարության ղեկավար Ռեֆեթ փաշայի հետ[391], այդ քայլն արևմտահայության որոշակի հատվածի կողմից բավարար չհամարվեց նոր հարաբերությունների հաստատելու իմաստով:

Քեմալական կառավարությունը և օսմանյան հասարակությունը նույնպես բացասական վերաբերմունք ունեին Զավեն պատրիարքի նկատմամբ, հետևաբար իշխանությունները, շահեկան համարելով պոլսահայ համայնքի՝ պատրիարքի շուրջը հասունացող հակընդդեմ տրամադրությունները, բնականաբար, պետք է օգտվեին հարմար առիթից և վերջնականապես

389 Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 391:
390 Օր.՝ Թալեաթ փաշայի մտերիմ բարեկամներից մեկը՝ Քերովբե Տամատյանը, գայրացած հայտարարել էր, որ եթե Զավեն պատրիարքը չհրաժարվի, մի ամբոխ է հավաքելու և Պատրիարքարանի վրա հարձակվելով՝ վռնդի նրան այնտեղից: Տե՛ս նույն տեղում, էջ 397:
391 Տե՛ս Akşam, 9 Kasım 1922.

ազատվեին իրենց համար ոչ ցանկալի թեկնածուից[392]: Հետաքրքրական է, որ Ռեֆեթ փաշան, Օսմանյան բանկի հայազգի պաշտոնյաներից մեկի՝ Պերճ Քերեսթեճյանի[393] հետ ունեցած հանդիպման ժամանակ, խոսելով հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր զարգացումների վերաբերյալ, հստակորեն նշել էր, որ միայն Զավեն պատրիարքի հրաժարականի դեպքում կարելի է բանակցել երկու ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատման շուրջ[394]:

Զավեն պատրիարքն ինքն անձամբ խոստովանում է, որ թուրքերն իրեն մշտապես թշնամական աչքով են նայել և «ասոր համար անբաղձալի մըն էի յաչս թրքական կառավարութեան որ կը պահանջեր իմ հրաժարականս, զոր տալէս վերջ անշուշտ պիտի ճնշէր Հայերը՝ որպէսզի Լօզանի Խորհրդաժողովին դիմելէ եւ իրենց պահանջները ներկայացնելէ հրաժարին»[395]: Զավեն պատրիարքի հանդեպ թուրքական իշխանությունների անհանդուրժողական վերաբերմունքը շարունակվեց նաև Թուրքիայի հանրապետության նախագահ Մուսթաֆա Քեմալի օրոք: Նախ պետք է նշել վերջինիս էրզրումյան նշանավոր ելույթը 1919 թ. օգոստոսի 22-ին, երբ նա խիստ քննադատության էր ենթարկել Զավեն պատրիարքին[396]: Իսկ 1927 թ. տեղի ունեցած կուսակցական ժողովի ընթացքում Քեմալը, գնահատելով հույն և հայ պատրիարքների գործունեությունն Առաջին աշխարհամարտի տարիներին, իր ելույթում մասնավորապես նշել էր. «Մեզ համար անմոռանալի

---

392 Տե՛ս Güllü R. E., նշվ. աշխ., էջ 551:

393 Պերճ Քերեսթեճյանը հետագայում մի քանի անգամ ընտրվեց թուրքական խորհրդարանի պատգամավոր (տե՛ս Մելքոնյան Ռ., Թուրքիայի Հանրապետության խորհրդարանի հայազգի պատգամավորները (1935-1960), «Արևելագիտության հարցեր», Երևան, 2014, էջ 93-103):

394 Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 393-394:

395 Նույն տեղում, էջ 402:

396 Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի ..., էջ 50:

աղետաբեր հերոսներէն մեկն ալ՝ Հայոց Զաւէն պատրիարքն էր: Մոռնալով Յոյն Պատրիարքարանին հետ ունեցած կրօնական հին կռիւները, այս պատրիարքն ալ ետ չկեցաւ ոեւէ անիծապարտարարքէ, Թուրք Հայրենիքը քանդելու համար»[397]:

Ըստ այդմ, 1922 թ. դեկտեմբերի 1-ին Ազգային երեսփոխանական ժողովի նախաձեռնությամբ կազմվեց պատվիրակություն, որը, այցելելով Զավեն պատրիարքի տուն, պահանջեց նրա հրաժարականը[398]: Պատրիարքը պատասխանեց, որ «թէ ինք իր պաշտօնը կրնայ թողուլ միայն այն ձեւով՝ ինչ կերպով որ պաշտօնի կոչուած է հետեւաբար անոնք որ զինքը ընտրեցին պէտք է յայտնեն իրենց կամքը»[399]: Դեկտեմբերի 8-ին Ղալաթիայի մատենադարանում տեղի ունեցած Ազգային ընդհանուր ժողովի նիստին պատրիարքի բացակայությամբ կարդացվեց վերջինիս ուղարկած նամակը.

«5 Դեկտեմբեր, 1922 թ.

Առաջիկայ ուրբաթ օրուան համար Ազգ. Ընդհ. Ժողովը նիստի հրաւիրած եմ: Նկատի ունենալով որ ոմանք բաւական չհամարելով կառավարութեան հետ մեր յարաբերութեանց վերսկսումը ու ցարդ մեր առած քայլերը անոր մօտենալու համար, կը փափաքին աւելի սերտ բարեկամութեամբ ու անձնուիրութեամբ կապուիլ անոր հետ եւ ասոր համար անձս արգելք կը համարին, կը խնդրեմ որ հաճիք Պատկ. Ժողովոյ խորհրդակցութեան եւ եթէ կարելի է որոշման ենթարկել հետեւեալը թէ՝ այժմեան քաղաքական պայմաններու մէջ ազգին օգտակար կը համարուի՞ պատրիարքական պաշտօնէն հրաժարումս թէ ոչ: Կը խնդրեմ որ Պատկ. Ժողովոյ խորհրդակցութեան եւ

397 «Ազդարար», Կ. Պոլիս, 1928, 21 Յուլիս:
398 Akşam, İstanbul, 8 Aralık 1922.
399 «Ընդարձակ Տարեցոյց Ս. Փրկչեան Ազգային հիւանդանոցի Հայոց», նոյն տեղում, էջ 38:

որոշման արդիւնքը հանիք գրավոր կերպով ինծի հաղորդել:

Մնամ աղօթարար՝ Պատրիարք Հայոց ԶԱՒԷՆ ԱՐՔԵՊ.»[400]:

Նույն թվականի դեկտեմբերի 8-ին Ազգային ժողովի կողմից Բերայի մատենադարանի սրահում գումարվեց նիստ, որին հրավիրված 54 անդամներից ներկա էին ընդամենը 28-ը: Չնայած քվեարկություն տեղի չունեցավ, սակայն Ազգային ժողովի նախագահ Մեսրոպ եպիսկոպոս Նարոյանը և Պարգև Փափազյանը շտապեցին Զավեն պատրիարքին հայտնելու ներկաների ընդհանուր որոշումը, որի համաձայն՝ վերջինս պարտավոր էր հրաժարական տալ [401]:

Թեև Զավեն պատրիարքն այդուամենայնիվ պաշտոնապես հրաժարական չտվեց, սակայն նրան այլ բան չէր մնում, քան ենթարկվել Ազգային ժողովի այդ որոշմանը և հեռանալ քաղաքից՝ խուսափելով նոր լարվածություն մտցնել համայնքի ներսում: Զավեն պատրիարքի համար ցավալին ոչ այնքան կառավարության որդեգրած մերժողական վերաբերմունքն էր իր նկատմամբ, որքան հայ համայնքի մի շարք ներկայացուցիչների թշնամական տրամադրությունները: Ուստի, նա դիմում ներկայացրեց Անգլիական բարձրագույն հրամանատարությանը՝ խնդրելով ապահովել իր անվտանգ մեկնումը դեպի Բուլղարիա (Վառնա)[402]: Նա մտադրություն ուներ գաղտնի հեռանալ Կ.Պոլսից՝ չհայտնելով նույնիսկ Ռեֆեթ փաշային, քանի որ, ինչպես գրում է պատրիարքն իր հուշագրության մեջ. «Ան ամէն միջոց պիտի գործածէր արգիլելու համար իմ մեկնումս, մանաւանդ որ նպատակս էր չհրաժարելով մեկնիլ»[403]:

---

400 Նույն տեղում:
401 Տե՛ս Զաւէն Արքեպս., նշ. աշխ., էջ 397-400:
402 Տե՛ս նույն տեղում, էջ 402:
403 Նույն տեղում:

Այսպիսով, 1922 թ. դեկտեմբերի 10-ին «Praga» շոգենավով Զավեն պատրիարքն ուղևորվեց Վառնա: Դեկտեմբերի 20-ին պատրիարքական տեղապահ ընտրվեց Գևորգ եպիսկոպոս Արսլանյանը, որն այդ պաշտոնը վարեց մինչև 1927 թվականը[404]: Հարկ է նշել, որ Զավեն սրբազանը, Վառնա մեկնելով հանդերձ, չդադարեցրեց իր կապը Հայոց ազգային պատվիրակության հետ, մասնավորապես թղթակցելով պատվիրակության փոխնախագահ Գաբրիել Նորատունկյանի հետ, ով Լոզան էր մեկնել՝ խորհրդաժողովին ներկայացնելու արևմտահայության պահանջները: Զավեն սրբազանը մշտական նամակագրական կապի մեջ է եղել նաև Հայոց ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի հետ, ում առաջարկությամբ, Մուդրոսի զինադադարից հետո, նա դժվարություններով հանդերձ կարողացավ մեկնել Եվրոպա՝ իր անմիջական նպաստը բերելու հայության պահանջներն օտար պետություններին ներկայացնելու գործին:

1922 թ. փետրվարի 19-ին Զավեն սրբազանը ժամանեց Փարիզ: Քանի որ խորհրդաժողովի նիստերն արդեն մտել էին իրենց բնականոն հունի մեջ, և հայոց երկու պատվիրակությունները՝ Ավետիս Ահարոնյանի (Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ) և Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ, մեկնել էին Լոնդոն, պատրիարքը ևս շտապեց այնտեղ: Խորհրդաժողովի նիստերին մասնակցելուց բացի՝ Զավեն պատրիարքն իր էական դերակատարությունն ունեցավ ազդեցիկ ելույթներով Եվրոպայի հայության համախմբելու գործում[405], ինչպես նաև

---

[404] Առավել մանրամասն տե՛ս Güllü R. E., նշվ. աշխ., էջ 556-563:
[405] Տվյալ ժամանակահատվածում խոսակցություններ կային, թե Զավեն Տեր-Եղիայանը պետք է ընտրվի Եվրոպայի հայերի

հանդիպումներ ունեցավ հայ համայնքի ներկայացուցիչների հետ[406]:

Ըստ էության, միլլեթների համակարգը գործեց մինչև Օսմանյան կայսրության անկումը և Լոզանի պայմանագրի (1923 թ. հուլիսի 24) համաձայն՝ որոշվեց Թուրքիայում բնակվող ոչ թուրք ժողովուրդների կարգավիճակի հարցը: Ըստ այդմ, Լոզանի պայմանագրով հայերը, հույները և հրեաները ստացան ազգային փոքրամասնության կարգավիճակ[407]: Թուրքիայի հանրապետությունում վերոհիշյալ ժողովուրդներին առավել հաճախ դիտարկվում էին որպես ազգային-կրոնական փոքրամասնություններ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ թուրքական իշխանությունները, քաղաքական նկատառումներից ելնելով, նրանց կարող էին մերթ անվանել կրոնական և մերթ ազգային փոքրամասնություն: Թուրքիայում պահպանվեցին այս երեք ազգությունների կրոնական ներկայացուցչությունները, և պետությունը շարունակեց այս համայնքների հետ շփվել կրոնապետերի մակարդակով: Սա, իր հերթին, հակասում էր Մուսթաֆա Քեմալի 1934 թ. հռչակած վեց սկզբունքներից մեկին՝ լայիցիզմին (աշխարհիկություն), որի համաձայն կրոնը և պետական կառավարումը անջատված են միմյանցից:

1922 թ. դեկտեմբերի 12-ին Զավեն սրբազանը ժամանեց Վառնա: Քանի որ բուլղարական կառավարությունը մտադրություն ուներ հայ գաղթականներին հեռացնել քաղաքներից՝ գյուղերում տեղաբաշխելու նպատակով, սրբազանը որոշեց իր նշանակալի օժանդակությունը բերել

---

առաջնորդ, սակայն այն իր տրամաբանությունը կորցրեց Լոզանի պայմանագրի ստորագրումից հետո:

[406] Այս մասին առավել մանրամասն տե՛ս Զավէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 327-355:

[407] Տե՛ս Özdoğan G., Kılıçdağ O., Lozan Antlaşması Azınlık Hakları Maddeleri (Madde 37'den – 44'e Türkiye Ermenilerini Duymak: Sorunlar, Talepler ve Çözüm Önerileri, İstanbul, 2012, s. 155-156.

Բուլղարիայում ապաստան գտած հայ գաղթականության: Այդ առիթով 1923թ. հունվարի 11-ին նանամակ ուղարկեց Բուլղարիայի ներքին գործերի նախարար Դաշկալոբին, ինչպես նաև Փարիզում գտնվող Գաբրիել Նորատունկյանին, ով պիտի Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին դիմում ներկայացներ, որպեսզի վերջիններիս միջնորդությամբ Բուլղարիան անվավեր համարեր հայ գաղթականներին տեղահան անելու որոշումը[408]: Միևնույն ժամանակ Զավեն սրբազանի նախաձեռնությամբ հիմնվեց Բուլղարիայի Հայոց առաջնորդությունը՝ Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյանի առաջնորդությամբ:

Զավեն սրբազանը, Վառնայից հեռանալով՝ ճանապարհ ընկավ դեպի Սոֆիա, այնուհետև՝ Սալոնիկ, Աթենք, Ալեքսանդրիա, Կահիրե[409], Երուսաղեմ, Կիպրոս[410], Տրիպոլի, Հալեպ և վերջնականապես հաստատվեց հայրենի Բաղդադում: Զավեն պատրիարքն իր հուշերի գիրքն ավարտում է հետևյալ հուզիչ խոսքերով. «...1927 Մայիս 16ին մեկնեցայ Պաղտատ, ուր կը մնամ ցարդ անպաշտօն, հակառակ երիցս Պաղտատի առաջնորդ ընտրուած ըլլալուս, վասնզի ֆիզիքապէս անկարող եմ ոեւէ պաշտօն վարելու՝ 1932ին կոկորդիս վրայ կատարուած գործողութեան մը հետեւանօք ձայնս կորսուած ըլլալով»[411]: Զավեն Տեր-Եղիայանն իր մահկանացուն կնքեց 1947 թվականի հունիսի 4-ին, Բաղդադում, 79 տարեկան հասակում:

---

[408] Տե՛ս Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 417, 418:

[409] Մինչև 1927 թվականը Կահիրեում վարել է Ազգային խնամակալության պաշտոնը:

[410] Կարճ ժամանակ վարել է Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատության լիազոր վարիչի պաշտոնը:

[411] Զաւէն Արքեպս., նշվ. աշխ., էջ 423:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով ատենախոսության հիմնական դրույթները՝ կատարվել են հետևյալ եզրահանգումները.

- 1913 թ. սեպտեմբերի 12-ին տեղի ունեցած՝ պատրիարքի ընտրությունների ճնշող մեծամասնությամբ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք ընտրված Դիարբեքիրի հայոց թեմի առաջնորդ Զավեն եպիսկոպոս Տեր-Եղիայանի առավելությունը պայմանավորվել է բացառապես գավառահայության խնդիրներին ու կենսական պահանջներին քաջածանոթ լինելու և օսմանյան իշխանությունների հետ ունեցած հարաբերություններում քաղաքագիտական

հմտությունների դրսևորման հանգամանքներով:

- Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի դաշնակցականների հետ համագործակցությամբ հաջողվել է Ռուսական կայսրության անմիջական վերահսկողությամբ կազմված՝ Օսմանյան կայսրության հայաբնակ նահանգներում բարենորոգումների իրականացման ծրագրի հիմքում ամրագրել արևմտահայության հիմնական պահանջները:
- 1914 թ. օսմանյան մեջլիսի (խորհրդարան) ընտրություններին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանն ազգային ընտրության և ըստ բնակչության թվաքանակի հայերին հասանելիք 20 պատգամավորական մանդատի պահանջով տնական բանակցություններ է վարել երիտթուրքական իշխանությունների ներկայացուցիչների հետ: Սակայն վերջիններիս՝ հայերի հանդեպ ընդգծված խտրական քաղաքականության հետևանքով մատնվել է անհաջողության, որի արդյունքում 1. բացառվել է ազգային ընտրության իրավունքը, 2. հայերին տրվել է ընդամենը 15 պատգամավորական տեղ:
- Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուն պես Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանը հատուկ շրջաբերական է ուղարկել նահանգների առաջնորդարաններին՝ տեղի հայ բնակչությանը հրահանգելով կայսրության մյուս քաղաքացիների նման կատարել օսմանյան հայրենիքի հանդեպ եղած պարտավորությունները:
- Օսմանյան կայսրության հայ բնակչության հանդեպ տեղի ունեցող կոտորածներին, ավերածություններին ու թալանին վերջ դնելու նպատակով Զավեն պատրիարքը բազմիցս

դիմել է Կոստանդնուպոլսում տեղակայված եվրոպական պետությունների դեսպանություններին, որոնք, չհաշված մանակի դեպքերը, անտարբերություն են դրսևորել արևմտահայոց հոգևոր պետի հորդորների և խնդրանքների հանդեպ:

- 1914 թ. աշնանը տեղի ունեցած խորհրդակցությունների արդյունքում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի որոշմամբ հայ գաղթականությանն աջակցելու նպատակով եղել է շրջիկ հիվանդանոց ստեղծելու գաղափար, ինչը երիտթուրքական կառավարության ձեռնարկած միջոցառումների արդյունքում մատնվել է անհաջողության:
- Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի նկատմամբ հատկապես 1914-1916 թթ. օսմանյան կառավարության քաղաքական ճնշումները սահմանափակել կամ առհասարակ արգելել են պատրիարքարանի գործունեությունը:
- Գաղտնիության պայմաններում Զավեն պատրիարքին հաջողվել է պատրիարքարանի տրամադրության տակ գտնվող ֆինանսական միջոցների զգալի մասն ուղղել Քոնիայում, Հալեպում, Կարինում, Սամսունում, Բրուսայում, Բանդըրմայում, Էսքիշեհիրում, Դամասկոսում, Երուսաղեմում և հայ գաղթականներով լցված մյուս խոշոր կայանատեղիներին:
- Մինչ օսմանյան կառավարության կողմից հայկական կազմակերպությունների դրամական հաշիվներն արգելափակելու վերաբերյալ որոշման ընդունումը 1916 թ. հունվարի 29-ին պատրիարքարանի Քաղաքական ժողովի որոշմամբ օսմանյան և հայկական բանկերում պահվող՝ հայկական հաստատությունների (Դպրոցասեր

Տիկնանց վարժարան, Ազգանվեր Հայուհյաց ընկերություն, «Զավարյան» հիմնադրամ, «Օգնենք Սասունի» և այլն) գումարները փոխանցվել են պատրիարքարանի հաշվին՝ ի նպաստ արևմտահայ գաղթականների փրկության և խնամքի կազմակերպման:

- 1916 թ. օգոստոսի 10-ին երիտթուրքական կառավարության որոշմամբ 1863 թ. Հայոց ազգային սահմանադրության չեղարկումը և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի լուծարումը եղել է երիտթուրքական քաղաքականության առաջնահերթություններից մեկը: Ըստ որում, օսմանյան կառավարությունը Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքության լուծարման վերաբերյալ որոշման ընդունմամբ նպատակ է հետապնդել կայսրության հայ կրոնական բոլոր կառույցները Սիսի կաթողիկոսությանը միացնելու միջոցով կանխել Ս. Էջմիածնի միջամտությունն օսմանյան Թուրքիայի գործերին:
- 1916 թ. օգոստոսի 22-ին Բաղդադ, այնուհետև՝ Մոսուլ աքսորված հայոց պատրիարքը անգլիական զորահրամանատարության ջանքերով ակտիվորեն զբաղվել է Հայոց ցեղասպանության հետևանքով հիմնականում Սղերդից ու Կարինից եկած և Մոսուլում ապաստան գտած շուրջ 1700 հայ գաղթականների փրկության գործով:
- Անտանտի երկրների և Օսմանյան կայսրության միջև 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարից հետո Կոստանդնուպոլսի հայության և Մեծ Բրիտանիայի պատերազմական նախարարության գործուն միջամտությամբ

հնարավոր է դարձել Զավեն պատրիարքի վերադարձը Կ.Պոլիս:

- 1919-1922 թթ. Զավեն պատրիարքը կազմակերպել է Հայոց ցեղասպանության վերապրածների որոնման աշխատանքներ, մասնավորապես՝ նրան հաջողվել է մահմեդական ընտանիքներում գտնվող հայ կանանց և երեխաներին գտնելու նպատակով ստեղծել «Հայ ազգային խնամատարություն» կազմակերպությունը, որի քառամյա գործունեության շնորհիվ վերջնական թուրքացումից փրկվել են շուրջ 4000-5000 հայ որբեր:
- Զավեն պատրիարքի հանդեպ հայ հասարակական-քաղաքական շրջանակներում առաջ եկած անվստահության հետևանքով և առավելապես օսմանյան կառավարության ոչ բարիդրացիական վերաբերմունքի արտահայտման պայմաններում 1922 թ. դեկտեմբերի 8-ին վճռվել է հայոց պատրիարքի պաշտոնավարության ավարտը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### 1. Արխիվային նյութեր

Հայերեն

ա/Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

1.1. Ֆ. 57 (Ամենայն հայոց կաթողիկոսի դիվան)

ց. 1, գ. 102, թ. 7:

ց. 5, գ. 21, թ. 72 (շրջ.); գ. 25, թ. 1, 4-7; գ. 26, թ. 5-30; գ. 28, թ. 1, 146, 147, 161 (շրջ.), 174-176; գ. 52, թ. 11-15; գ. 53, թ. 47; գ. 61, թ. 1 (շրջ.), 20, 21; գ. 62, թ. 1; գ. 76, թ. 1, 2 (շրջ.); գ. 86, թ. 1, 2; գ. 90, թ. 47:

1.2. Ֆ. 222 (Թիֆլիսի հայոց ազգային խորհուրդ)

ց. 1, գ. 1, թ. 25-28:

## Օ ս մ ա ն ե ր ե ն

### բ / Başbakanlık Osmanlı Arşivi (BOA)

1.4. Sadaret – Divan-ı Hümayun Gayr-ı Müslim Cemaat Defterleri (A.DVNS.GMC.d.)

nr. 11, s. 16-25.

1.5. Bâb-ı Âlî Evrak Odası (BEO.)

nr. 4204/315299 lef 2; nr. 4233/317421; nr. 4270/320227; nr. 4510/338204 lef 3; nr. 4549/341114 lef 2.

1.6. Emniyet-i Umumiye Müdüriyeti İkinci Şube (DH. EUM. 2 Şb.)

nr. 31/61; nr. 39/35 lef 17; nr. 54/67 lef 16.

1.7. Dâhiliye Nezâreti İdarî Kısım (DH.İD.)

nr. 113/53 lef 1, 3, 6, 10, 11.

1.8. Dâhiliye Nezâreti Şifre Kalemi (DH.ŞFR.)

nr. 63/136; nr. 84/196; nr. 95/212; nr. 518/46; nr. 522/59; nr. 530/18; nr. 548/29; nr. 578/9.

1.9. Dâhiliye Nezâreti Umûr-ı Mahalliye-i Vilayât Müdüriyeti (DH. UMVM.)

nr. 61/13 (1332.M.30-).

1.10. Adliye ve Mezahib İrâdeleri (İ.AZN.)

nr. 113/1331. N/02.

1.11. İrâde – Mabeyn-i Hümâyûn (İ.MBH.)

nr. 13/1331.Z/026.

1.12. İrâde – Meclis-i Mahsus-u Vükelâ (İ.MMS.)

nr. 170/1331.L/31.

1.13. Meclis-i Mazbataları Vükelâ (MV.)

nr. 183/8; nr. 203/14; nr. 213/89; nr. 231/286.

2. Տպագիր սկզբնաղբյուրներ.Փաստաթղթերի և նամակների ժողովածուներ, տպագիր արձանագրություններ, կենսագրական ժողովածուներ

ա/Հայերեն

2.1. Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Կ.Պոլիս, 1863:

2.2. Աղաւնունի եպիսկոպոս Մ., Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929:

2.3. Անդրանիկ կոնդակներ սահմանադրական շրջանի պատրիարքներու, հրատ. պատրաստեց Սերովբեան սրկ. Վ., Ստանպուլ, 2013:

2.4. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Խաչիկյան Լ., մասն Գ (1482-1500 թթ.), Երևան, 1967:

2.5. Հայոց ցեղասպանություն: Աշխարհի պետությունները, ազգերը, խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում, Նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ Բարսեղյան Լ., Երևան, 2005:

2.6. Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան, խմբագիր՝ Փամպուքեան Ե., ԺԱ.հատոր, Պէյրութ, 2015:

2.7. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Դ, կազմեց՝ Բեհբուդյան Ս., Տ.Տ.Սահակ Բ Խապայեան կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ 1891-1940 թթ., Երևան, 1997:

2.8. Տաշեան Յ., Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895:

բ/Թուրքերեն


2.9. Özdoğan G., Kılıçdağı O., Lozan antlaşması azınlık hakları maddeleri (madde 37'den – 44'e Türkiye Ermenilerini duymak: Sorunlar, talepler ve çözüm önerileri, İstanbul, 2012.

2.10. Pamukciyan K., Biyografileriyle Ermeniler, C. IV, İstanbul, 2003.

2.11. Seropyan V., Ermeni Patrikliği, dünden bugüne Istanbul ansiklopedisi, Istanbul, 1994.

2.12. Tuğlacı P., Tarih boyunca Batı Ermenileri, cilt: III (1891-1922), İstanbul, 2009.


գ/Անգլերեն


2.13. Bryce J., The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-1916, London, 1916.


3.Հուշագրություններ, օրագրություններ

Հայերեն


3.1. Անտոնեան Ա., Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները եւ Թալէաթ փաշա, Պոսթըն, 1921:

3.2. Զաւէն Արքեպս., Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947:

3.3. Էպլիղաթեան Մ. Մ., Կեանք մը ազգիս կեանքին մէջ: Ականատեսի եւ մասնակցողի վկայութիւններ 1903-1923, Անթիլիաս, 1987:

3.4. Պալաքեան եպիսկ. Գ., Հայ գողգոթան. Դրուագներ հայ մարտիրոսագրութենէն. Պեռլինէն դէպի Տէր Զօր, Բ. Հատոր, Փարիզ, 1959:

3.5. Սաքայան Դ., «Զմյուռնիա 1922». Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը, Երևան, 2005:

3.6. Սաքայան Դ., «Նրանց քշում են անապատները ...». Կլարա և Ֆրից Զիգրիստ-Հիլթիները Հայոց ցեղասպանության ականատեսներ (1915-1918), Երևան, 2017:

3.7. Սերոբեան Մ., Դիտումներ եւ դատումներ (Էջեր օրագրէս), Պէյրութ, 1932:

3.8. Սվազլյան Վ., Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2011:

## 4. Մենագրություններ, աշխատություններ

### ա/Հայերեն

4.1. Ալիշան Ղ., Հայ-Վենետ կամ յարընչութիւնք Հայոց եւ Վենետաց ի ԺԳ-Դ եւ ԺԵ-Զ դարս, Վենետիկ, 1896:
4.2. Ալպօյաճեան Ա., Յուշամատեան կուտինահայերու, Պէյրութ, 1961:
4.3. Աճառեան Հ., Տաճկահայոց պատմութիւնը, Կ. Պոլիս, 1915:
4.4. Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002:
4.5. Անասյան Հ., Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957:
4.6. Ավետիսյան Ս., Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի (Ամերկոմ) գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ., Երևան, 2009:
4.7. Զարհպանէլեան Գ., Պատմութիւն հայ տպագրութեան, Վենետիկ, 1895:
4.8. Ինճիկեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի Ասիոյ,
4.9. Եվրոպիո, Ափրիկո և Ամերիկո, մասն երկրորդ, հ. Ե՝ Եվրոպա, Վենետիկ, 1805:
4.10. Խառատյան Ա., Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV-XVII դարեր), Երևան, 2007:
4.11. Կերտող Ս., Հայ առաքելական եկեղեցին առաջին աշխարհամարտի տարիներին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2003:

4.12. Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967:
4.13. Հասրաթյան Մ. և ուրիշներ, Թուրքիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1986:
4.14. Մելքոնյան Ռ., Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության (1920-ականներից մինչև մեր օրերը), Երևան, 2010:
4.15. Մեյեր Է., Բերքյան Յ. Ա., Հռենոսի և Արաքսի միջև. 900 տարվա գերմանա-հայկական հարաբերություններ, Երևան, 2016:
4.16. Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց: Ի սկզբանէ մինչև ցամ Տեառն 1784, հ. Գ, Վենետիկ, 1786:
4.17. Պալճեան Աղ., Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս, Վիեննա, 1878:
4.18. Պէրպէրեան Ա., Պատմութիւն Հայոց, Կ. Պոլիս, 1871:
4.19. Սիրունի Յ., Պոլիս եւ իր դերը, հ. 1, Պէյրութ, 1965:
4.20. Սվազլեան Վ., Պոլսահայոց բանահիւսութիւնը, Երեւան, 2000:
4.21. Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, 2012:
4.22. Տէր Յակոբեան Մ., Իրաքահայ կեանքէն. Մոսուլ հասնող գաղթականութիւնը (1915-1918)՝ ընդելուզուած Գրիգոր աւագ քահանայ Տէր Յակոբեանի ինքնակենսագրութեամբ, Ա. հատոր, Պէյրութ, 1981:
4.23. Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին, Կ. Պոլիս, 1911:
4.24. Օրմանեան արք. Մ., Ազգապատում, Գ. հատոր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001:

բ/Ռուսերեն

4.25. Османская империя. Система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы, отв. ред. Орешкова С., Москва, 1986.

4.26. Убичини А, Куртейль де П., Современное состояние Отоманской империи, С. Петербург, 1877.

## գ/Թուրքերեն

4.27. Akşin S., İstanbul hükümetleri ve Milli mücadele, cilt: I Mutlakiyete dönüş (1918-1919), İstanbul, 2010.

4.28. Arslan A., Ermeni Papalığı - Eçmiyazin kilisesi'nde stratejik savaşlar, İstanbul, 2010:

4.29. Atnur İ., Türkiye'de Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923), Ankara, 2005.

4.30. Avagyan A., Minassian G. F., Ermeniler ve İttihat ve Terakki- İşbirliğinden çatışmaya, İstanbul, 2005.

4.31. Aydoğan E., İttihat ve Terakkî'nin doğu politikası (1908-1918), Ankara, 1967.

4.32. Barkan Ö., Osmanlı İmparatorluğunda bir iskan ve kolonizasyon metodu olarak sürgünler, Istanbul, 1949.

4.33. Bayur Y. H., Türk İnkılâbı tarihi, cilt: II, kısım III, Ankara, 1991.

4.34. Bozkurt G., Alman-İngiliz belgerinin ve siyasi gelişmelerin ışığı altında gayrımüslim Osmanlı vatandaşlarının hukuki durumu (1839-1914), Ankara, 1996.

4.35. Çelik A., Osmanlı'nın Ermeni'yle imtihanı – mütakere dönemi İstanbul hükümetleri ve Ermeniler, İstanbul, 2011.

4.36. Demir F., Osmanlı devleti'nde II. Meşrutiyet dönemi Meclis-i Mebusan seçimleri (1908-1914), İmge kitabevi yayınları, 2007.

4.37. Güllü R. E., Ermeni sorunu ve İstanbul Ermeni Patrikhanesi (1878-1923), Ankara, 2015.

4.38. Münir Süreyya Bey, Ermeni meselesinin siyasi tarihçesi (1877-1914), Ankara, 2001.

4.39. Özdemir H., Cemal Paşa ve Ermeni göçmenler- 4. ordu'nun insani yardımları, İstanbul, 2009.

4.40. Sarıhan Z., Kurtuluş Savaşı Günlüğü 1 (Mondros'tan Erzurum kongresi'ne kadar), Ankara, 1982.

4.41. Türkmen Z., Vilayât-ı Şarkiye (Doğu Anadolu vilayetleri) ıslahat müfettişliği 1913-1914, Ankara, 2006.

4.42. Ünal Ş., Uluslararası hukuk açısından Ermeni sorunu, Ankara, 2011.

## դ/Ֆրանսերեն

4.43. Andréadès A., De la population de Constantinople sous les empereurs byzantins, I, Metron, 1910.
4.44. Critoboulos, Vie de Mahomet II (Monum. Hung. His.-Script. XXI, 2ème partie), vol. 2., Costantinople, 1875.
4.45. Kévorkian R., Le génocide des Arméniens, Paris. 2014.
4.46. Lepsius J., Rapport secret sur les massacres d'Arménie : 1915-1916, Paris, 1918.
4.47. Mandelstam A., La société des nations et les puissances devant le problème arménien, Paris, 1926.
4.48. Morgan de J., Histoire du peuple arménien, Paris, 1919.
4.49. Pastermadjian H., Histoire de l'Arménie, Paris, 1949.
4.50. Thorossian H., Histoire de l'Arménie et du peuple arménien, Paris, 1957.

## 5. Հոդվածներ

ա/Հայերեն

5.1. Ալպօյաճեան Ա., Առաջնորդական վիճակներ. Թուրքիոյ հայոց պատրիարքութիւն, «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի», Կ.Պոլիս, 1908:
5.2. Ալպօյաճեան Ա., Կ.Պոլսոյ Պատրիարքութիւնն ու Պրուսայի, Էտիրնէի եւ Ռօտոսթոյի առաջնորդութիւնները, Թէոդիկ, «Ամենուն Տարեցոյցը», Կ.Պոլիս, 1909:
5.3. Ալպօյաճեան Ա., Ազգային սահմանադրութիւնը. իր ծագումը եւ կիրառութիւնը (Յիսնամեայ տարեդարձին առիթով), Ա. Պատրիարքութիւնը, «Ընդարձակ օրացոյց Ս.Փրկիչ Ազգային հիւանդանոցի», Կ. Պոլիս, 1910:
5.4. Ալպօյաճեան Ա., Ազգային Սահմանադրութիւնը ու իր ծագումը եւ կիրառութիւնը, «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան Ազգային հիւանդանոցի Հայոց», Կ. Պոլիս, 1910:

5.5. Ալպօյաճեան Ա., Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան կապը երկու կաթողիկոսական աթոռներուն հետ, «Շողակաթ», Ստամպուլ, 1962, թիւ 2:
5.6. Ալպօյաճեան Ա., Իսթանպուլի հայոց հոգեւոր վարչութեան սկզբնաւորութիւնը, «Շողակաթ», Ստանպուլ, 1962, թիւ 2:
5.7. Ակինեան Ն., Կոստանդնուպոլսոյ հայոց պատրիարքութեան սկզբնաւորութիւնը, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1951, թիւ 8-10:
5.8. Ակինեան Ն., Յովսէփ Կոստանդնուպոլսեցի. թարգմանիչ Յայսմաւուրքի (991), «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1957, թիւ 1-2:
5.9. Ապաճեան Գր., Ուր եւ ինչպէս զետեղուեցան գրաւումէն վերջ Իսթանպուլ բերուած հայ գաղթականները, «Շողակաթ», Կ. Պոլիս, 1953, թիւ 9-10:
5.10. Ասատուր Հ., Կ. Պոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքները, «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի», Կ. Պոլիս, 1901:
5.11. Բաբգէն եպ., Կ. Պոլսի հայ պատրիարքութեան ծագումը, եւ առաջին պատրիարք Յովակիմ արքեպիսկոպոս, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1924, թիւ 8-10:
5.12. Բաբգէն եպ., Կ. Պոլսոյ հայ գաղութին ծագումը եւ հնագոյն եկեղեցիներ, «Ընդարձակ տարեցոյց Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի», Կ. Պոլիս, 1926:
5.13. Գզոյան Է., Փրկութիւն հայ որբերին. Առաքել Չաքրյանի հուշերը, «Ցեղասպանագիտական հանդես», Երևան, 2016, N 2:
5.14. Խաչկոնց Դ., Կ. Պոլսոյ հայ գաղութին ծագումը, «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան ազգային հիւանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1902:

5.15. Խառատյան Ա., Կոստանդնուպոլսի հայ համայնքը և օսմանյան ավանդական հասարակությունը (XV-XVII դարեր), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2003, N 3:

5.16. Խառատյան Ա., Դարձյալ արևմտահայերի ազգային սահմանադրության մասին, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2008, N 2:

5.17. Հովսեփյան Մ., Հայ որբերի հիմնախնդիրը Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթում (1918-1924 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2016, թիվ 3:

5.18. Մարգարյան Ն., Հայ գաղթականների վրանաքաղաքներն Իրաքում 1918-1922 թթ., «Ցեղասպանագիտական հանդես», Երևան, 2016, N 2:

5.19. Մարտիրոսյան Մ., Պողոս Նուբար փաշան հայ ազգային պատվիրակության նախագահ, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 2008, N 3:

5.20. Մելքոնյան Ռ., Թուրքիայի Հանրապետության խորհրդարանի հայազգի պատգամավորները (1935-1960), «Արևելագիտության հարցեր», Երևան, 2014:

5.21. Նուրբեկյան Լ. Զ., Արևմտահայերի Ազգային ժողովի հոգևոր գործառույթները, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2011, N 4:

5.22. Պէրպէրյան Հ., Իսթանպուլի հայ բնակչութիւնը քաղաքին գրաւումէն մինչեւ Ֆաթիհ Մեհմետ Բ.ի մահը (1453-1481), «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1962, թիւ 5-8:

5.23. Պէրպէրյան Հ., Կ. Պոլսոյ հայ պատրիարքութեան հիմնարկութիւնը, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1964, թիւ 7-9:

5.24. Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Նարոյան, «Էջմիածին», հատոր Ա, Էջմիածին, 1944,:

5.25. Տէր-Անդրէասեան Հ., Իսթանպուլի Առաջին հայկական եկեղեցիները եւ Ս. Գէորգ պատրիարքանիստ եկեղեցին, «Ծողակաթ», Ստանպուլ, 1995:
5.26. Փափազեան Վ., Հայկական Բարենորոգումները (1912-1914), «Վէմ», Փարիզ, 1933, Ա:
5.27. Փափազեան Վ., Հայկական Բարենորոգումները (1912-1914), «Վէմ», Փարիզ, 1933, Բ:
5.28. Փափազեան Վ., Հայկական Բարենորոգումները (1912-1914), «Վէմ», Փարիզ, 1934, Գ:
5.29. Փափազեան Վ., Հայկական Բարենորոգումները (1912-1914), «Վէմ», Փարիզ, 1934, Դ:

Բ/Թուրքերեն

5.30. Ahmad F., Dankwart A., İkinci Meşrutiyet döneminde meclisler: 1908-1914, Güney-Doğu Avrupa araştırmaları dergisi, sayı: 4-5, yıl 1975-1976, İstanbul 1976, İstanbul Üniversitesi Edebiyat fakültesi yayınları.
5.31. Arslan A., II. Meşrutiyet devrinde Eçmiyazin Katogigosluğu'nun etkisi kırmaya yönelik çalışmalar, ASAM Ermeni Araştırmaları Enstitüsü, Ermeni Araştırmaları 2. Türkiye Kongresi bildirileri, cilt: II, Ankara, 2007.
5.32. Bakar B., Mondros Mütarekesi'nden sonra yaşanan büyük bir problem: Türk ve Ermeni yetimleri meselesi, ASAM Ermeni Araştırmaları Enstitüsü, Ermeni Araştırmaları 2. Türkiye Kongresi bildirileri, cilt: II, Ankara, 2007.
5.33. Fahri Taş N., Vilâyât-ı Şarkiyye ıslahatı ve Nicolas Hoff, Atatürk Araştırma merkezi dergisi, cilt: XIV, sayı: 42, Ankara, 1988.
5.34. Güler A., Ermenilerle ilgili 1916 ve 1918 yıllarında yapılan hukuki düzenlemeler, OTAM- Ankara Üniversitesi Osmanlı tarihi araştırma ve uygulama merkezi dergisi, sayı: 6, Ankara, 1995.
5.35. Halıcı Ş., Osmanlı basınına yansıyan şekliyle 1914 Meclis-i Mebusan seçimlerinde Ermeniler, Tarih, İstanbul Üniversitesi, 2015, sayı: 62.
5.36. Hür A., İttihat ve Terakki'nin çocuk askerleri, Taraf, İstanbul, 12 Nisan 2009.

5.37. Karacakaya R., Meclis-i Mebusan seçimleri ve Ermeniler (1908-1914), Yakın dönem Türkiye araştırmaları, İstanbul Üniversitesi Atatürk ilkeleri ve inkılâp tarihi enstitüsü dergisi, yıl: 2/2003, sayı: 3, İstanbul, 2003.

5.38. Karacakaya R., 1919-1922 arasında Anadoluda Türk-Ermeni ilişkilerine genel bir bakış, KÖK Sosyal ve stratejik araştırmalar dergisi, cilt: XII, sayı: 2, Ankara, 2010.

5.39. Türkmen Z., İşgal yıllarında İstanbul'daki uygulamalar: Mütareke döneminde Ermeniler tarafından Türk çocuklarının kaçırılması ve hıristiyanlaştırılması, KÖK Araştırmalar, Ankara, 2000, cilt: II, sayı: 2.

5.40. Türkmen Z., İttihat ve Terakki hükûmetinin Doğu Anadolu ıslahat müfettişliği projesi ve uygulamaları (1913-1914): Ermeni meselesine çözüm arayışları, Ermeni Araştırmaları, cilt: 3, sayı: 9, Ankara, 2003.

5.41. Yalçınkaya A., Ermeni Patrikliği'nin uluslararası aktörleşmesi, ASAM Ermeni Araştırmaları Enstitüsü, Ermeni Araştırmaları 2. Türkiye kongresi bildirileri, cilt: II, Ankara, 2007.

## 6. Ատենախոսություններ

Թուրքերեն

6.1. Bozkurt A., İtilaf devletleri'nin İstanbul'da işgal yönetimi, İstanbul Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü, yayınlanmamış doktora tezi, İstanbul, 2009.

## 7. Պարբերական մամուլ

ա/Հայերեն

7.1. «Մեղու», Թիֆլիս, 1857, N 8:

7.2. «Ազդարար», Կ. Պոլիս, 1928, 21 Յուլիս:

7.3. «Առաջամարտ», Կ. Պոլիս, 1912, 22 Դեկտեմբեր:

7.4. «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1912, 22 Դեկտեմբեր; 1913, 22 Ապրիլ; 1916, 2, 30 Յուլիս, 18 Օգոստոս:

7.5. «Դրօշակ», Ժնեւ, 1913, N 2-3:

7.6. «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան Ազգային հիւանդանոցի Հայոց», Կ.Պոլիս, 1924:

7.7. «Ժամանակ», Կ. Պոլիս, 1913, 28 Սեպտեմբեր; 20, 21 Յուլիս; 3, 10, 17, 25, 30, 31 Հոկտեմբեր; 1, 2, 4, 5, 6, 8, 9 Նոյեմբեր; 1914, 11, 28, 30 Յունուար; 4, 7, 8, 25, 29, 30 Փետրուար; 1 Մարտ; 10, 28 Ապրիլ; 4 Մայիս; 18, 23, 25, 26 Հոկտեմբեր; 1915, 23 Ապրիլ:

7.8. «Հեռաձայն», Կ.Պոլիս, 1913, 28, 29, 31 Օգոստոս:

բ/Օսմաներեն

7.9. Akşam, İstanbul, 8 Aralık 1922.

7.10. İkdam, İstanbul, 26 Mayıs 1919.

7.11. Sabah, İstanbul, 7 Kasım 1918.

7.12. Takvim-i Vekayi, İstanbul, 10 Ağustos 1916.

7.13. Tanin, İstanbul, 14, 17, 19, 22 Kasım 1913.

7.14. Vakit, İstanbul, 21 Kasım 1918.

## 8. Էլեկտրոնային հրապարակումներ

ա/Հայերեն

8.1. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը եւ Ստանպուլի Հայ համայնքը, Պաշտօնական կայքէջ Պատրիարքութեան Հայոց Թուրքիոյ, http://www.turkiyeermenileripatrikligi.org/site/hy/%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%A1%D5%BF%D6%80%D5%AB%D5%A1%D6%80%D6%84%D5%B8%D6%8

2%D5%A9%D5%AB%D6%82%D5%B6/ (01.05.2019-ի դրությամբ հասանելի է):

8.2. Պարսամյան Ս., Միրզոյան Ա., Ազգերի լիգայի փաստաթղթերն ապացուցում են Հայոց ցեղասպանության փաստը, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի պաշտոնական կայքէջ, Երևան, 2009, հոկտեմբերի 3, http://www.genocide-museum.am/arm/g_brief_09.php (01.05.2019-ի դրությամբ հասանելի է):

բ/Թուրքերեն

8.3. Halıcı Ş., 1914 Meclis-i Mebusan seçimlerinde Ermeniler, “Türkler ve Ermeniler. Tarih boyunca Türk-Ermeni ilişkileri”, Marmara Üniversitesi, http://turksandarmenians.marmara.edu.tr/tr/1914-meclis-i-mebusan-secimlerinde-ermeniler/ (01.05.2019-ի դրությամբ հասանելի է).